

ՀՀ ԳԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿADEMİA
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA

Հ. ԱՃԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵՐՎԻ ԻՆՍԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА
H. ACHARYAN INSTITUTE OF LANGUAGE

ԼԵՐՎԻ
ԵՎ
ԼԵՐՎԱՐՄԱՆԻԹՅՈՒՆ



ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ
LANGUAGE AND LINGUISTICS

1 (20)
2019



ԵՐԵՎԱՆ • ЕРЕВАН • YEREVAN

Հանդեսի հիմնադիրն է <<ԳԱԱՀ. Աճայանի անվան լեզվի ինստիտուտը>>:
Լոյս է տեսնում 2003 թ., տարին երկու անգամ:

**Գլխավոր խմբագիր՝ Համբարձումյան Վ. Գ.
Խմբագրական խորհուրդ՝**

Աբաջյան Ա. Հ., Աբրահամյան Կ. Շ., Ավետիսյան Յու. Ս., Բարդակչյան Գ. (ԱՄՆ), Բարլեզիզյան Ա. Կ., Բրուտյան Լ. Գ., Գալստյան Ա. Ս. (գլխավոր խմբագրի տեղակալ), Ժիրագուտ Յ. (Ավաստիա), Խաչատրյան Ա. Հ. (Ծվերիա), Խաչատրյան Գ. Կ., Կատվայյան Վ. Լ., Կորտլանդ Ֆ. (Նիդեռլանդներ), Հովհաննիսյան Լ. Շ., Հովհաննիսյան Լ. Ս. (գլխավոր խմբագրի տեղակալ), Տեր-Մերկերյան Ռ. (Ֆրանսիա), Տոնապետյան-Դեմոպուլս Ա. (Ֆրանսիա):

Главный редактор Амбарцумян В. Г.

Редакционная коллегия

Абаджян А. Г., Абрамян К. Ш., Аветисян Ю. С., Бардакчян Г. (США),
Барлезизян А. К., Брутян Л. Г., Галстян А. С. (заместитель главного редактора),
Катвялян В. Л., Мохаммади М. М. (ИРИ), Кортландт Ф. (Нидерланды), Оганесян
Л. Ш., Петросян В. З., Сакаян Д. Г. (Канада), Саргсян А. Е., Саргсян М. А. (отве-
тственный секретарь), Симонян Н. М. (заместитель главного редактора), Тер-
Меркераин Р. (Франция), Тонапетян-Демопулос А. (Франция), Трагут Я. (Австрия),
Хачатрян А. А. (Швеция), Хачатрян Г. К.

Chief Editor Hambardzumyan V. G.

Editorial Board

Abajyan A. H., Abrahamyan K. Sh., Avetisyan Yu. S., Bardakchyan G. (USA),
Barlezizyan A. K., Brutyan L. G., Galstyan A. S. (deputy chiefeditor), Khachatryan A.
H. (Sweden), Knachatryan G. K., Hovhannisyan L. Sh., Katvalyan V. L., Kortlandt F.
(Netherlands), Mohammadi M. M. (Iran), Petrosyan V. Z., Sargsyan A.E., Sargsyan
M. A. (editorial secretary), Sakayan D. G. (Canada), Simonyan N. M. (deputy
chiefeditor), Ter-Merkeryan R. (France), Donabédian-Demopoulos A. (France),
Tragut J. (Austria).

© Լեզու և լեզվաբանություն
«Ասողիկ» իրատարակչություն 2019

ՀԱՆԴԵՍԻ 20-ՐԴ ՀԱՄԱՐԻ ԱՌԹԻՎ

ԽՈՍՔ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը հրապարակում է «Լեզու և լեզվաբանություն» գիտական հանդեսի հորեցյանական 20-րդ համարը:

Հիմնադրվելով 2003 թվականին՝ այն կարծ ժամանակում դարձավ լեզվաբանության բնագավառի ամենահայտնի և հեղինակավոր հանդեսներից մեկը: Հանդեսի խմբագրական կոլեգիայի անդամները հայտնի գիտնականներ են՝ թե՛ Հայաստանից, թե՛ արդերկրից: Հանդեսը հիմնադրվել է վասրակաշաբթ լեզվաբան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Համբարձումյանի նախաձեռնությամբ, և նա մինչ օրս հանդեսի գլխավոր խմբագիրն է:

Վարդակական կարող ենք ասել, որ ամսագիրը կայացել է և մինչ օրս էլ շարունակում է բարձր դիրք գրավել գիտական աշխարհում: Ներկայումս հանդեսը մեծ հեղինակություն է վայելում գիտական հանրության շրջանում և շարունակում է փարբերվել լեզվաբանության բնագավառում յուրահակուկ հոդվածներով:

Նրա ներդրումը Հայաստանի այսօրվա գիտության զարգացման գործում բավական լուրջ է: Այն բարձր վարկանիշ ունի և Հայաստանում լավագույններից մեկն է: Դա նշանակում է, որ խմբագիրը դիրքապերում է գիտական բոլոր չափանիշներին և կարողանում է իրականացնել իր վրա դրված առաքելությունը:

Մենք բարձր ենք գնահատում «Լեզու և լեզվաբանություն» գիտական հանդեսի գլխավոր խմբագրի և խմբագրական կոլեգիայի ազգանվեր գործունեությունը: Մաղթում ենք նորանոր ձեռքբերումներ և հաջողություններ: Վարդակական կարողանում է հաջողություններ կատարել Հայաստանի գիտության և կրթության զարգացմանը նպաստող նորանոր հետաքրքրի հոդվածներ:

Ռ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ նախագահ

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱԶՈՂՎԱԾ ՊԱՐՔԵՐԱԿԱՆ

Մեկուկես դրանամյակից ավելի է, որ հրապարակվում է <<ԳԱԱ
< Աճառյանի անվան լեզվի ինսպիրուութի «Լեզու և լեզվաբանություն»
գիրական հանդեսը: Լեզվաբանների և մայրենի լեզվի խնդիրներով
զբաղվողների համար այն շատ սպասված պարբերական է, միա-
ժամանակ նաև ամբիոն՝ արդահայտելու իրենց մկորումները լեզվաբա-
նական բարդ խնդիրների լուծումների և արդի լեզվաքաղաքականության
վերաբերյալ:

Հանդեսն ունի միջազգային խմբագրական խորհուրդ, հմուտ
գլխավոր խմբագիր, ահա թե ինչու պատշաճ մակարդակով նրանում
լուսաբանվում են հայոց լեզվի, ինչպես նաև ընդհանուր և համեմադական
լեզվաբանության ամենաարդիական հիմնախնդիրները:

Շահեկան է, որ պարբերականն իր էջերում գրաքննական հոդված-
ներով անդրադառնում է նոր հրապարակվող լեզվաբանական աշխարու-
թյուններին, լուսաբանում ոլորդի գիրական կյանքը:

Զերմորեն շնորհավորում եմ հանդեսի խմբագրակազմին, գլխա-
վոր խմբագիր պրոֆ. Վ. Համբարձումյանին՝ հոբեյանի առթիվ և մաղթում
հերազա հաջողություններ Ձեր ազգանվեր և շնորհակալ աշխարանքում:

**Յու. Մ. ՍՈՒՎԱՐՅԱՆ
<<ԳԱԱ ակադեմիկոս,
<<ԳԱԱ հայագիտության և հասարակական
գիտությունների
բաժանմունքի ակադեմիկոս - քարտուղար**

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՔՍՈՐԻՆԱԿ ՀԱՆԴԵՍ

Գիտության որևէ ոլորդ ներկայացնող պարբերականը ոչ միայն արդացոլում է կատարվող գիտական հետազոտությունների հիմնական ուղղությունները, հետաքրքրությունների շրջանակը, աշխատանքների որակն ու մակարդակը, այլ նաև մեծապես նպաստում է ոլորդի հետազա առաջընթացին, նոր ուղղությունների և ծրագրերի սկզբնավորմանն ու իրագործմանը: Միաժամանակ, նման պարբերականը կարող է վկայել այն հրապարակող հասկապության կարողությունների և որակների մասին:

Վերջին շրջանում՝ սկսած 2003 թվից, հայ լեզվաբանական մղբի զարգացման ընթացքի խոսուն վկաներից է «ՀԱԱՀ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կողմից հրապարակվող «Լեզու և լեզվաբանություն» հանդեսը: Գլխավոր խմբագրի՝ բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆ. Վ. Գ. Համբարձումյանի անուրանալի ջանքերի, գիտական լայնախոհության և նվիրվածության, խմբագրակազմի և աշխատակիցների քաջիմացության և բարձր պարասիստանարվության շնորհիվ պարբերականը միշտ էլ աչքի է ընկել հրապարակվող նյութի ընկրության գիտական բարձր չափանիշներով, հարուստ և հետաքրքրական բովանդակությամբ, ճաշակով ու գեղեցիկ ձևավորմամբ:

Ծնորհավորելով պարբերականի խմբագրակազմին 20-րդ համարի լուսընծայման կապակցությամբ՝ ցանկանում ենք նորանոր ձեռքբերումներ, գիտության աշխարհում «Լեզու և լեզվաբանություն» հանդեսի շարունակական առկայություն և անընդհատ վերելք:

Վ. Լ. Կատվայյան
«ՀԱԱՀ. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի տնօրեն

ԽՈՍՔ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԵՎ ՔԱԶԱԼԵՐՈՒԹՅԱՆ

«Լեզու և լեզվաբանություն», <<Գիրությունների ազգային ակադեմիա, <. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ. հեղինակություն վայելող մի հանդես, որն արդեն մեկ և կես դասնամյակ իր ծանրակշիռ նպաստն է բերում լեզվաբանական մտքի զարգացմանը մեր հանրապետությունում՝ հրապարակվող հոդվածների բովանդակային լայն ընդգրկումով և գիրական պատշաճ մակարդակով»:

Ունենալով ընդգծված հայագիրական-հայերենագիրական ուղղվածություն՝ հանդեսը նաև որոշակի գրեղ է հարկացնում այլ լեզուների լեզվահամակարգերին վերաբերող խնդիրներին. և ուրախալի է, որ այդ խնդիրների լուծումը ընթանում է հայոց լեզվի հետ լայն զուգադրության դիպվածքում:

Լեզվի դարբեր մակարդակներին, արդի լեզվաբանության գրեթե բոլոր բնագավառներին վերաբերող կարևոր աշխատանքների հեղինակներից շաբաթը թե՝ «Հայաստանում և թե՝ նրա սահմաններից դուրս ճանաչված լեզվաբաններ են, և անդարակույս է, որ դրանով է՝ լ ավելի է արժնորժություն «Լեզու և լեզվաբանություն» հանդեսի դերը մեր ժամանակների գիրական մտքի առաջընթացի ասպարեզում»:

Նյութերի ընդունությունը, միայն գիրական որակավորում ունեցող հեղինակների հոդվածների, գրախոսությունների դպրագրումը յինում են որոշակի ընդունությամբ, գրախոսմամբ. հրադարակչական ճիշդ սկարունքների կիրառմամբ, որոնցով էլ առաջնորդվում է հանդեսի խմբագրական խորհուրդը, որի կազմում ընդգրկված են «Հայաստանի, այլև արդասահմանյան մի շարք երկրներում ապրող և սփեղծագործող անվանի հայագելւներ»:

«Լեզու և լեզվաբանություն» հանդեսն այսօր ներկայանում է մեզ իր հորեանական՝ քսաներորդ համարով, միանգամայն ուրախալի մի փասկ մտավորական հանրության համար: Ուրեմն բարի շարունակություն մաղթենք իր ուրույն դիմագիծն ունեցող այս հանդեսին, շնորհավորենք նրա բոլոր աշխատակիցներին, և անշուշտ, նրա գլխավոր խմբագրին, որի անմիջական ջանքերի շնորհիվ է իր քայլերն սկսել դիպուկ անվանումով այս հանդեսը:

Ա. Կ. Բարլեզիզյան

Բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր.

**Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական
համալսարան, հանդեսի խմբագրական խորհրդի անդամ**

**ՈՒՐՎԱԳԻԾ ՀԱՆԴԵՍԻ ԱՆՑԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԻ
Բանասիր. գիտ. դոկտոր Վ. Գ. Համբարձումյան**

Ամեն մի տարեդարձ յուրովի իրադարձություն է, ամեն մի ամյակ արժանի է հիշատակման, հիշելի է:

Մեր այս անդրադարձը վերաբերում է «Լեզու և լեզվաբանություն» հանդեսի 20-րդ համարի լուս տեսնելուն: Այն երևան է եկել նախաձեռնողի նախանձախնդրության պայմաններում, այն լուս է տեսել գրքի ու գրահրատարակության հարկն իմացող մտավորականի առաջարկությամբ, այն վերնագրվել է տողերիս հեղինակի մտորումներում, - և այդ ամենը զրոյցի և խորհրդածության ձևով հավանության է արժանացել մեր ժամանակների ամենամեծ լեզվաբանի աչքի առաջ, նրա հավանության մեջ:

Առաջին համարի լուսընծայման շնորհանդեսին, պետք է անպայման հիշել՝ իմանալու համար, մեր ժամանակների ամենամեծ լեզվաբան Գևորգ Զահոնիկյանն ունեցավ իր մասնակցությունը՝ բացման խոսքով («Ի՞նչ լավ անուն եք գտել», - ասաց նա, առարկան՝ օրեկտը, և նրա մասին. *Լեզու և լեզվաբանություն*): Այնուհետև, մասնակցություն համարի առաջին էջերին տեղ գտած իր յուրօրինակ հոդվածով (հանդեսը բացվում է Գ. Զահոնիկյանի լավագույն հոդվածներից մեկով, - այլ կերպ բացառվում էր, կարծում եմ, - հոդված, որ արդի հայերենագիտության համար ունի շրջադարձային նշանակություն, այն լուս էր տեսել անգերեն, որ հանդեսի համար թարգմանվեց), մի ներկայություն, որն այսօր ևս շարունակում է լուսի անսպառ շողբի պես ամեն անգամ սփոռվել այս հանդեսի էջերի վրա:

Հանդեսն ունի մի շարք ինքնօրինակ կողմեր՝ կապված ընդհանուր (նաև հեղինակային հոդվածի) ծավալի, հրապարակման արժանի նյութի ընտրության, հեղինակների գիտական դիրքի (բացառապես՝ գիտության թեկնածու կամ դոկտոր), արդի հայերենագիտության, ընդհանրապես մեր օրերի լեզվաբանության տեսական և հրատապ խնդիրների պարզաբանման, հնարավոր լուծման հետ: Հատկապես վերջին տարիներին հանդեսի լուսընծայումը (կազմակերպական, ֆինանսական առումով) իր ձեռքն է վերցրել << ԳԱԱ <. Աճայանի անվան լեզվի ինստիտուտը, որպիսով և հանդես է բերում մեծ նախանձախնդրություն:

Այն լուս աշխարհ է գալիս տարեկան երկու համարով, որի խմբագրական կազմը բավականին ներկայանալի է, եթե նկատի ենք

ունենում ներկայիս գիտության բնագավառում հայտնի մասնագետների ընդգրկումը՝ մեր երկրի և արտասահմանի: Տարիների ընթացքում, բնականաբար, տեղի է ունեցել խմբագրական կազմի մասնակի փոփոխություն, հիմնական մասի շարունակականություն:

Լուս տեսնող հոդվածներն ընդունվում են հեղինակի աշխատավայրի (գիտական հաստատության) հանձնարարական քաղվածքով: Դրանք, ինչպես նաև գրախոսական հոդվածները և մյուս նյութերը ըստ անհրաժեշտության ուղարկվում են համապատասխան մասնագետներին՝ գրավոր կարծիքի, այնուհետև քննարկվում են խմբագրական խորհրդում՝ հրապարակման համար:

Ամսագիրն ունի ավանդական կառուցվածք՝ «Հոդվածներ», «Բանավեճ և քննարկում», «Հաղորդումներ», «Գրախոսություններ», «Գիտական կյանք» և այլն, որոնցում ընդգրկվող հոդվածները թեմատիկայի առումով այս կամ այն չափով մոտ են: Ցանկացած հոդված կարող է լուս տեսնել հեղինակի նախընտրած լեզվով (առավելապես՝ հայերեն, նաև ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլն). ամսագիրը ունի միջազգային հանդեսի կարգավիճակ՝ կարելի է ասել, իր գրեթե բոլոր չափորոշիչներով: Այն տարածվում է մեր երկրի գիտական հիմնարկներում և հաստատությունների գիտական գրադարաններում, ընդգրկված է Էլեկտրոնային կայքում:

Նախորոշված է, որ գիտական հոդվածները առավելագույն լինելու են 10 էջի սահմանում, և յուրաքանչյուր հոդված, հատկապես վերը նշված բաժիններից առաջին երեքում տպագրվող, ունենում է իր 1,3 ծավալով ամփոփումներ՝ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և այլն:

Մինչ օրս ամսագիրն ունեցել է շուրջ 120 մամուլ ծավալով հրապարակում, որն, ինչ խոսք, յուրօրինակ ձեռքբերում է արդի հայագիտության, ամենից առաջ մեր երկրում առհասարակ լեզվաբանության զարգացման ճանապարհին:

Հիրավի, տեղին անդրադարձ:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՆՈՐՄԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ. ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՆՈՐՄ

Բանասիր. գիտ. թեկնածու L. Գ. Թելյան

Լեզվական նորմ (կանոն)¹ հասկացությունը (և համապատասխանաբար՝ տերմինը) կիրառվում է հայեցակարգային երկու ոլորտներում՝ տեսական լեզվաբանության մեջ, նաև խոսքի մշակույթի ու ոճագիտության հարցերին նվիրված ուսումնասիրություններում։ Որպես լեզուն ուսումնասիրող գիտության առարկա՝ նորմը ընդունված է համարել լեզուն բնութագրող եռաստիճան հակադրության՝ լեզու – նորմ – խոսք, եզրերից մեկը, որը ներկայացնում է տվյալ լեզվի համակարգը կազմող միավորների և դրանց հարաբերությունների ու գուգորդումների կանոնների ամբողջությունը։ «Կանոնական մակարդակը կամ պարզապես կանոնը (նորմա) խոսքային միավորների այն ընդհանուր և վերացարկված լեզվական համակարգն է, որ գոյություն ունի տվյալ լեզվով խոսող հանրության անդամների գիտակցության մեջ»²:

Վերացարկվածության աստիճանի առումով նորմը մի կողմից ավելի բարձր է խոսքից, որը լեզվական նորմի կիրակումն է այդ լեզվով խոսող հանրության հաղորդակցման գործընթացում, մյուս կողմից՝ ստորադասվում է կառուցվածքի մակարդակին, որ ներառում է տվյալ լեզուն կազմող միավորների միջև հնարավոր հարաբերությունների ամբողջությունը՝ որպես վերացական համակարգ։ Լեզվական նորմը, այսպիսով, լեզվի կառուցվածքային մակարդակը ներկայացնող միավորների և դրանց հարաբերությունների գործառական իրացումն ապահովող մակարդակն է, որն իր կոնկրետ դրսևորումն է ստանում խոսքի մեջ և նրա միջոցով։ Կառուցվածքի մակարդակում լեզվական նշանները (միավորները) կապված են հարացուցային հարաբերություններով. դրանք «ներքաշվում են» շարակարգի մեջ նորմի սահմանած կանոններով և վերածվում խոսքային իրողությունների։ «Խոսքի ծավալման ընթացքում նախ տեղի է ունենում այս կամ այն հարացուցի որևէ անդամի և ապա՝ բառի

¹ Մասնագիտական գրականության մեջ գործածվող այս երկու տերմիններից նախընտրելի ենք համարում «նորմ»։ Առաջարկել է նաև «չափակարգ» տերմինը։ Տե՛ս L. Գ. Եղելյան, Ոճագիտություն, Ե., 2003, էջ 95։

² Է. Բ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Ե., 1967, էջ 15։

(կամ լեզվական այլ նշանի) շարակարգային հնարավորություններից մեկի ընտրություն»³: Այս առումով հարկ է նշել, որ լեզվական կառուցվածքի տրամաբանությամբ հիմնավորվող բոլոր իրողությունները չեն, որ իրացվում են նորմի մակարդակում, մյուս կողմից է՝ կենդանի խոսքի մեջ հաղորդակցվողների կողմից ոչ միշտ են պահապանվում լեզվական նորմի մակարդակում ամրագրված կանոնները: Այսպես, արդի հայերենի կառուցվածքը հնարավորություն է տալիս չեզոք և ներգործական սեղի բայերից –ցն- ածանցով կազմել պատճառական բայեր (*խոսեցնել*, խաղացնել, խմեցնել, մոլոցնել, թոցնել և այլն), սակայն նորմի մակարդակում այս կանոնը ամբողջական իրացում չի ստանում. չկան գրեցնել, երգեցնել և այլ ձևեր (սրանց պատճառականները կազմվում են հարադրությամբ՝ գրել լրակ և այլն): Կամ՝ հայերենի նորմով սահմանված կարգով հարակատար, համակատար և անորոշ (սեռական հոլովով) դերբայները կազմում են երկրորդական բաղադրյալ ժամանակների համակարգ, սակայն հայերեն խոսքում չի իրացվում գրելու եմ լինելու կաղապարը: Մյուս կողմից՝ կենդանի բանավոր խոսքում շատ հաճախ օժանդակ բային հաջորդող դիրքում վաղակատար դերբայի վերջին -լ հնչյունը չի արտասանվում (չեմ լրեսե, դու ես ասե և այլն), ինչը հակասում է ժամանակակից գրական հայերենի նորմին:

Լեզվական նշված երեք գոյամակարդակները, ընականաբար, մեկընդմիշտ տրված, անփոփոխելի և քարացած երևույթներ չեն: Լեզուն հարակիութիւն և զարգացող համակարգ է հենց նշված մակարդակների տարրերի փոխադարձ ներթափանցումների, փոխազդեցությունների շնորհիվ: Ժամանակի ընթացքում խոսքային մակարդակի իրողությունները կարող են ամրագրվել նորմի մեջ և ընկալվել որպես կանոնական, իսկ ավելի տևական մի հատվածում կարող են փոփոխվել նաև կառուցվածքային մակարդակի տարրերն ու հարաբերությունները՝ առաջ բերելով նոյնիսկ համակարգային փոփոխություններ լեզվի կառուցվածքի մեջ (այսպես է տեղի ունեցել, օրինակ, գրաբարի բայական համակարգի աստիճանական փլուզման ու վերասերման գործընթացը):

Հարկ է նկատի առնել նաև, որ լեզվական նորմը, լինելով հանդերձ հարաբերականորեն կայուն և միասնական մի համակարգ, ենթադրում է նաև տարրերակային, հոմանիշ ու բազմիմաստ ձևերի համագոյակցությունը դրանց խոսքային իրացման գործընթացում: «Նորմը ենթադրում է խոսողների և գրողների գնահատողական վերաբերմունքը խոսքի մեջ լեզվի գործառության նկատմամբ. այսպես կարելի է, այսպես չի

³ **Б. Н. Головин**, Основы культуры речи, М., 1988, էջ 18-19:

կարելի, այսպես ասում են, այսպես չեն ասում, այսպես ճիշտ է, այսպես՝ ոչ։ Այդ վերաբերմունքը ծևավորվում է գրականության (նրա՝ հասարակության մեջ հեղինակություն վայելող գործիչների), գիտության (որը սկսում է նկարագրել և «կոդավորել» նորմերը), դպրոցի և այլ գործոնների ազդեցությամբ»⁴։

Որևէ լեզվի, նաև ժամանակակից գրական արևելահայերենի նորմի՝ խոսքի մշակույթի և ոճագիտության դիրքերից կատարվող ուսումնասիրությունների, ինչպես նաև նորմավորման խնդիրներով գրալվող մարմինների ու մասնագետների աշխատանքի նպատակը լեզվի անմիջական կիրարկման ընթացքում առկայացող միավորների, դրանց տարբերակների ու գործածների (այդ թվում՝ այլ լեզուների ազդեցությամբ պայմանավորված) քննությունն է, գնահատումը լեզվական կանոնին համապատասխանելու և գործածության հեռանկարի դիրքերից և, ըստ այդմ, լեզվակիրառողին համապատասխան ուղղորդիչ հանձնարարականներ ու առաջարկներ ներկայացնելու։

Լեզվական նորմով սահմանվող կանոնները բնականաբար գործում են կառուցվածքային բոլոր մակարդակներում՝ հնչյունականից մինչև շարահյուսական։

Իսկ ինչպիսի՞ն է արդի գրական արևելահայերենի նորմավորման վիճակը։ Կարող ենք արձանագրել, որ այս ոլորտում բավականաչափ աշխատանք կատարվել է, սակայն հայոց լեզվի տարրեր մակարդակային միավորների նկատմամբ ուշադրությունն այս առումով համաչափ չի բաշխվել։ Չանքերը մեծավ մասամբ ուղղված են եղել ուղղագրության, ուղղախոսության, տերմինաբանության, բառագործածության նորմավորման խնդիրներին։ Այս հանգամանքը բացատրելի է այնքանով, որ լեզվի կենդանի գործառության ընթացքում կատարվող տեղաշարժերի ու փոփոխությունների, խոսակցական, բարբառային և հատկապես օտարամուտ տարրերի ներթափանցումների հանդեպ ավելի զգայուն են հնչյունական և բառային մակարդակները։ Եվ երևի օրինաչափ է, որ նախկին և ներկա տարրեր օրինասահման և խորհրդատվակական մարմինների (տերմինաբանական կոմիտե, լեզվի բարձրագույն խորհուրդ, լեզվի պետական տեսչություն, լեզվի կոմիտե) որոշումներն ու հրապարակումները հիմնականում հենց այս կարգի խնդիրներ են շոշափում։ Արդի շրջանում էլ բավականաչափ զգալի են մասնագետ լեզվաբանների և պատկան մարմինների՝ նշված ոլորտների կանոնարկմանն ուղղված ջանքերը։ Իուժ

⁴ **Բ. Հ. Գոլովսին,** նշվ. աշխ., էջ 19:

գնահատելի աշխատանք է սա, մանավանդ եթե նկատի առնենք այսօրվա մեր զանգվածային լրատվամիջոցների լեզվական իրավիճակը:

Այն, որ լեզվի քերականական համակարգը ավելի պահպանողական է զանազան կարգի տեղաշարժերի և օտար ազդեցությունների նկատմամբ, հայտնի իրողություն է, սակայն քերականության մեջ էլ բազմաթիվ են ներքին ազդակներով և օտար ազդեցություններով պայմանավորված տարբերակային դրսնորումները, զուգաձևերը, փոխառյալ և օտարաբան կազմությունները, որոնք նույնպես նորմի տեսակետից գնահատվելու և համապատասխանաբար կանոնարկվելու պահանջ են առաջադրում: Չի կարելի ասել, թե այս բնագավառը հայերենագիտության մեջ անտեսվել է. քերականական նորմի կանոններն անհրաժեշտաբար ներկայացված են քերականության դասագրքերում ու ձեռնարկներում, նորմավորման խնդիրներ են արձարձվել տարբեր ուսումնասիրություններում, հոդվածներում, հանրամատչելի հրապարակություններում⁵: Հատկանշական է, որ մասնագետների տեսադաշտում ավելի հաճախ հայտնվել են ձևաբանական նորմի (մասնավորապես բայական համակարգում կատարվող տեղաշարժերի) հարցերը: Սակայն խոսքի մշակույթի որակը մեծ չափով պայմանավորված է նաև շարահյուսական նորմի շրջանակում գործող կանոնների իմացությամբ և դրանց ճիշտ գործադրմամբ: Գաղտնիք չէ, որ այսօրվա մեր զանգվածային լրատվամիջոցների, մասնավորապես հեռուստատեսության լեզվում, մեջմ ասած, հազվադեպ չեն լեզվական մեղանչումներն ու խաթարումները. դրանց մի մասը հենց շարահյուսական նորմի տարաբնույթ խախտումների օրինակներ են: Ավելորդ չենք համարում ստորև մի փոքր ավելի հանգամանորեն ներկայացնել այդ խնդիրներին առնչվող մեր մի քանի դիտարկումները⁶:

Հայերեն խոսքում շարահյուսական նորմի դրսնորումները բնականաբար վերաբերում են բառերի և նախադասությունների կապակցության եղանակներին ու միջոցներին: Կապակցության եղանակները, ինչպես հայտնի է, երեքն են՝ համաձայնություն, խնդրառություն, առդրություն⁷,

⁵ Տե՛ս, օրինակ, Ս. Գ. Արքահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Ե., 1980: Պ. Բերիյան, Հայ լեզուն և մեր խոսքը, Ե., 1999: Զ. Աղաջանյան, Զնարանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Ե., 2007: Յու. Ավելիխյան, Տեղաշարժեր արդի գրական հայերենում, Ե., 2011: Յու. Ավելիխյան, Լ. Թեղյան, Լ. Սարգսյան, Լ. Ավելիխյան, Հայոց լեզվի ուղղուցք, Ե., 2017: Լ. Թեղյան, Արդի հայերենի քերականության հարցեր, Ե., 2016 և այլն:

⁶ Այս մասին ավելի ավելի մանրամասն տե՛ս Լ. Գ. Թեղյան, Շարահյուսական նորմ. զուգաձևեր և շեղումներ // «Հայագիտության հարցեր», 2017, հ. 1, էջ 137-149:

⁷ Առողջական կապակցության դրսնորումներից մեկը երեմն ներկայացվում է որպես կապակցության առանձին եղանակ: Տե՛ս Ս. Սարգսյան, Ժամանակակից հայերենի կապակցության մի եղանակի մասին // «Լեզու և լեզվաբանություն», 2015, հ. 1-2):

արտահայտության միջոցներն էլ ընդգրկում են լեզվի ծևաբանական մակարդակում գործառող ձևույթները (որոնց «կոչումն» ի վերջո կապակցության իրացումն է), կապերը, շաղկապները, հարաբերական դերանունները, շարադասությունը, հնչերանգը (երկրորդաբար կապակցական դեր կարող են ստանձնել նաև այլ միավորներ): Շարահյուսական նորմ ասվածը խոսքի մեջ սրանց գործառության կանոնների ամբողջությունն է, որը տվյալ փոլում ընդունված է հայերեն խոսող և գրող հանրության կողմից և կայուն պարբերականությամբ գործածվում է հայերենի բանավոր և գրավոր (մասնավորապես գրականության, գիտության, արվեստի՝ հանրային հեղինակություն վայելող գործիչների) խոսքում: Պետք է նկատի առնել, որ խոսքային կոնկրետ կիրառության մեջ շարահյուսական կառուցները, լեզվական այլ միավորների նման, հանդես են բերում զանազան հոմանիշ և զուգածն տարբերակներ, այդ թվում՝ օտար ազդեցություններով պայմանավորված դրսևորումներ, որոնք կարող են համագոյակցել լեզվական նորմի շրջանակում: Այլ խնդիր է, որ մասնագետ լեզվաբանները որոշ դեպքերում տարակարծիք են այս կամ այն շարահյուսական կառուցը հայերենի շարահյուսական նորմի տեսակետից գնահատելու, ասել է թե՝ շարահյուսական նորմի ընդգրկման շրջանակը սահմանելու հարցում: Այս առումով հատկանշական է, օրինակ, այսպես կոչված «բացարձակ աներևույթի» մասնագիտական գնահատության խնդիրը⁸: Խոսքը վերաբերում է արդի հայերենում անորոշ դերբայի և դիմավոր բայի կապակցության մի յուրահատուկ դրսևորման, երբ անորոշը, որպես դիմավոր բայի լրացում, չի ենթարկվում գերադաս բայի խնդրառական կանոնին և տրական կամ բացառական հոլովով դրվելու փոխարեն հանդես է գալիս ուղիղ ձևով՝ պաղտասպակում է գնալ (փխ. գնալու), հրաժարվում էր ընդունել (փխ. ընդունելուց): Այս կառուցը, որ շատ տարածված է հայերենում և, մեր կարծիքով, չի հակասում մեր լեզվի շարահյուսական նորմին, որոշ մասնագետների կողմից գնահատվում է որպես անթույլատրելի օտարաբանություն: Ոչ միանշանակ մասնագիտական մեկնաբանությունների առիթ տվող շարահյուսական այս կարգի իրողություններ էլի կարելի է թվարկել:

Սակայն կենդանի խոսքում, իսկ այսօր հատկապես տարաբնույթ լրատվամիջոցների լեզվում, ինչպես նշեցինք, հազվադեպ չեն նաև գրական հայերենի շարահյուսական նորմին միանշանակորեն հակասող կա-

⁸ Այս մասին առավել հանգամանորեն տե՛ս Լ. Թեյյան, Բացարձակ աներևույթի գնահատման շուրջ // «Բանբեր Երևանի համալսարանի. հայագիրություն», 2015, 3, էջ 43-55:

ոռլցները, ակնհայտ սխալակազմությունները, որոնք, անշուշտ, լեզվակիրառողի ոչ պատշաճ պատրաստվածության, խոսքային ցածր մշակույթի կամ սեփական խոսքի հանդեպ անփույթ վերաբերմունքի արտահայտություններ են: Դրանց հանգամանալից վերլուծությունը թողնելով մի այլ առիթի՝ նշենք այդ կարգի շեղումների մի քանի բնորոշ դեպքեր:

Առավել տարածված են, օրինակ, կապակցության միջոցներից կապերի ու շաղկապների ոչ կանոնական կիրառությունները, որոնք պայմանավորված են տարբեր գործոններով՝ օտար ազդեցություն, կապերի ոչ ճշգրիտ հոլովառություն, այդ միջոցների ստուգաբանական իմաստների ոչ ճիշտ ընկալումներ և այլն: Օրինակներ. Զկարողանալով աշխատել ըստ մասնագիտությամբ՝ գրաղվում էր առևտրով (հանրային ռադիո), Առանց մաքսատուրքերի վճարմամբ ներմուծողները խնդիրներ կունենան («Արմենիա»), Ամեն ինչ արված է ըստ օրենքի տառով («Շանթ»), Որտեղից գտաք այդ սերը դեպի թատրոնի նկատմամբ (Արմնյուզ), Մենք, իհարկե, կգերադասեինք, որպեսզի ընդդիմությունը հանդես գար միհասնական թեկնածուով (<1>), Ինչի՞ մասին է մեկնաբանում առողջապահության նախարարը (համացանց), Ո՞վ է հավակնում ՍԴ դատավորի թափուր տեղի համար (համացանց), Զրի ճնշումը ուժեղ է, մինչև պոմպը չեն անջատել (ATV), Քանի դեռ ստացիոնար պայմաններում չստուգնք, ոչինչ չենք կարող ասել («Ազատություն»), Սա կարելի էր նկատել, եթե ուշադիր լինել (<2>), Որպեսզի չկերադառնալ ինին, պետք է ակտիվություն ցուցաբերել («Շողակաթ») և այլն: Հաճախակի են նաև բայերի խնդրառության կանոններից շեղումները. Զուգածո առարկաների ձևից պայմանավորված՝ ստեղծվում են կաղապարներ («Շողակաթ»), Սա վերաբերում է բոլորին՝ սկսած պատգամավորից, վերջացրած հավաքարից (համացանց), Նրա հետաքրքրությունը փոխարինվեց սարսափի (<2>), Տրամաբանությամբ ելնելով՝ ընտրեցի «Հյուսիսային պատերազմը» («Արմենիա»), Պայմանավորված դատավորի անձից՝ որոշումը կանխատեսելի էր (<1>), Դատելով Ձեզ՝ դուք պետք է այլ ժանրով երգեիք («Շանթ») և այլն: Մի հատկանշական սխալ ևս, որ մեր շարահյուսական նորմին բնորոշ՝ դերբայական դարձվածի և դիմավոր բայի ենթակաների նույնության կանոնին է վերաբերում. Եվ, իհարկե, լինելով շատ գեղեցիկ և համակրելի՝ ես ուզում եմ քեզ նվիրել այս ծաղկեփունջը («Շանթ»), Միացյալ Նահանգները, լինելով շատ լավ երկիր, միևնույն է, մենք որոշեցինք վերադառնալ Հայաստան («Արմենիա»), Խոսելով օգտակար սննդամթերքների մասին՝ մեր սեղանին այսօր դրված է ոլոռը («Շանթ»), Ուսումնասիրելով նկարչի կտավները՝ տպավորություն է ստեղծվում.... »(ATV), Զկարողանալով լողալ՝ գետը քշել-տարել է («Շանթ»), Յուրաքանչյուր ոք իր լուման ներդնելով՝ փառատոնը կայանում

Է («Երկիր մեղիա») և այլն: Վերևում հիշատակված առդրական կապակցության մի յուրահատուկ դրսևնորում էլ կա (այսպես կոչված «կախումը»), երբ որոշյալի քերականական թիվը (եզակի կամ հոգնակի) թելադրվում է որոշչի բառային իմաստով: Այս կանոնի խախտումը նույնպես սակավադեպ չէ. Նախարարության ամբողջ աշխատակիցները լծվել են այդ պրոբլեմների լուծմանը (<.1), Այդ ողջ փաստաթղթերը պատրաստվել էին ժամանակին (<. 1), Եթե ինչ-ինչ պատճառով ձեր ուտեսող համով չի ստացվել, դիտեք «Համով զրոյցը» (<. 2), Բոլոր աշխարհում կան չափանիշներ, որով (‘) կատարվում են վիրահատություններ («Կենտրոն») և այլն:

Շարահյուսական նորմի բազմապիսի շեղումների թվարկումն, անշուշտ, շատ տեղ կարող է զբաղեցնել: Ավելորդ չենք համարում նշել, որ դրանց գերակշիռ մասը հանդիպել է հաղորդավարների կամ լրագրողների խոսքում. հանգամանք, որ մտահոգվելու առիթ պետք է տա հայերեն խոսքի մշակույթի հարցերով շահագրգիռ հաստատություններին ու մասնագետներին:

Լ. Г. Телян. Наблюдения о норме современного армянского языка: синтаксическая норма. В статье рассматриваются некоторые теоретические вопросы языковой нормы и нормы литературного армянского языка. Особое внимание уделяется вопросам синтаксической нормы, представляются некоторые типы характерных отклонений, встречающихся, в частности, в языке современных средств массовой информации.

L. G. Thelyan. Observations on the norm of the modern Armenian language: syntactic norm. The article discusses some theoretical issues of the language norms and norms of the literary Armenian language. Special attention is paid to the questions of the syntactic norm, some types of characteristic deviations occurring, in particular, in the language of modern mass media, are presented.

МЕСТО ДИАЛОГА В ЯЗЫКЕ АРМЯНСКОЙ ХУДОЖЕСТВЕННОЙ МЕМУАРИСТИКИ

Канд. филолог. наук А. В. ГАЛСТЯН
ash.galstyan@mail.ru

Общеизвестно, что основным выражением человеческого общения является речевая деятельность, в которой диалог имеет большое значение. Диалог как средство общения является одним из способов выражения авторских убеждений в художественной документалистике⁹, характеристики персонажей и описания событий.

В текстах художественной мемуаристики интересна цепочка диалогов с различными проявлениями – беседа, самовопрошание, телефонная беседа, письмо, безответный диалог и т.п. Диалог, самой простой формой которого является беседа, происходит когда в нем принимают участие два человека или больше. Разговор обычно происходит между субъектом и адресатом.

– Что это за часовня? – спросил я у своего собеседника, который еще не перестал читать что-то вроде молитвы.

– Святой Вардан, ага, Святой Вардан, я слуга Его святой силы, ответил он пылко. (Р)

Известно, что в образцах народного фольклора диалогу, как форме речи, выделено значительное место. В путевых заметках Раффи в виде такого диалога построена пляска подростков и девочек.

В мемуарах уникальную структурную форму имеет разговор с самим собой, или самобеседа, которая является своего рода внутренним диалогом. Известный философ Киркегор писал по этому поводу: «Я очень много говорил сам с собой. Я убежден, что самый интересный человек в моем окружении – это я».

В мемуарах А. Исаакяна «Гевонд Алишан» автор иногда разговаривает сам с собой, сидит в самобеседе. «Мы приближаемся к

⁹ В научной литературе, как принято говорить, метажанр (буквально, «подродный» жанр, срав. подязык), художественной документалистики часто называют мемуарной литературой, включающей мемуары, путевые заметки и дневники. В XX веке жанр эссе также быстро развился в восточно-армянской документалистике.

острову. Я смотрю на красные здания, видимые за зелеными кипарисами. «Это остров Святого Лазаря, – говорю я сам себе и повторяю» (АИ).

Или же «Сарьян принадлежит всему миру» – это проявление самобеседы в мемуарах. Я разговариваю сам с собой. «Сарьян – певец пейзажа, природы, ярких красок Армении, что будут чувствовать иностранцы?» (АИ).

Беседуя сам с собой, автор художественной мемуаристики продолжает рассказ самовопрошениями. Вообще, тексты этого жанра часто создаются в форме чередования вопросительных предложений, что еще больше напрягает мысль читателя, обогащая слово зарядами медитации. «Мне исполнилось сорок четыре года. Прошло больше половины жизни. Кто я, чем занимался сорок четыре года? По крайней мере, у меня была нормальная жизнь ...?» (КМ).

Следует отметить, что самовопрошения автора имеют значительный вес, особенно в путевых заметках. Самовопрошение – это всплеск мысли. Здесь первостепенное значение имеет коммуникативная, адресная роль автора. Перед каждой встречей автор передает свои мысли и переживания читателю. «Кажется, тот же Бейрут, тот же Бейрут 1963 года ... Но разве я такой же?... Я не тот, не тот ...». Во мне нет былой ностальгической боязни при встречи со своими соотечественниками на чужих берегах ... Увы, караваны уходят! Кто же виноват? Время, Родина, Диаспора? Кто же виноват, что я уже не добрый, не терпимый, не солидарен с миром, с людьми и даже сам с собой как прежде?»(СК).

Диалог может быть прерван дополнительным комментарием автора. Этот жанр диалога можно назвать диалогом с интерпретацией. Своебразное выражение речи имеет следующую логику, где авторское вмешательство помогает правильно понять беседу.

«– Вы из Вана?» ... – спросил он.

– Из Еревана, – сказал я. **Возможно, он услышал только последний слог.**

– «Да, прекрасно, мы земляки». Ты помнишь наш Ван ...» (ВП).

Известно, что в структуре диалога могут отображаться эмоциональные состояния собеседников. В таком случае выразительные движения персонажей становятся более существенными. На самовопрошение говорящий может ответить жестом: «Трудно, трудно достичь совершенства. Возможно это, да? –часто спрашивал он, говоря о Теряне. И, мигая глазами, он отрицательно качал головой» (ВОЕЧ).

В мемуарных диалогах говорящий использует:

а. *жесты головы*:

«Монте узнал их двухэтажный дом.

– Это наше, не так ли?

Отец почесал голову »(в знак согласия). (АЦ).

б. *Жесты рук*:

«Враг коварен, люди, – говорил мой бедный отец, и был по коленям руками» (знак тревоги, беспокойства) (АА).

Одним из проявлений диалога является *телефонный разговор*, который автор художественной документалистики представляет особым образом. В этом примере в рассказ включается только сказанное собеседником, состоящее из предложений разного тона. «*Вызов. Открываю глаза и поворачиваюсь – беру белую трубку*.

– Эта Сильва? Привет, привет, Геворг Ереванян говорит. Сильва, послушай, я сегодня должен прийти к тебе, чтобы пригласить тебя к нам ... Смотри, ты обязательно должна прийти к нам, ты не соскучилась по Еревану что ли? ... Так что тебе нужно ехать к Ереванянам ... Приду, сегодня вечером приду...» (СК).

Особым проявлением диалога является *безответный диалог*, при помоши которого часто строится речь путевых заметок. Здесь речевую активность проявляет собеседник: «*Момент прощанья приближается. Грустная, со слезами на глазах, жму всем руки. Старик прильнул ко мне как ребенок. В его голосе слезы, пролитые на лице*.

– Сильва, деточка, не плачь, не плачь...» (СК).

В этом разнообразии диалогов, как очевидно, часто встречаются такие выражения, которые трудно однозначно включить в сферу диалога.

Как пишет теоретик диалога, М. Бахтин, «*каждая реплика – монолог, а каждый монолог – реплика большого диалога*»¹⁰.

Так, письмо представляет собой краткую запись для сообщения чего-либо отсутствующему лицу. Это можно считать своего рода монологом только с точки зрения времени. Когда адресат получает письмо и пишет ответ, оно становится уже частью диалога. С художественной мемуаристикой

документалистикой слился этот фрагмент путевых заметок С. Капутикан «*Караваны еще в пути*». «*Вот мое письмо ... написала Анна Якобсон на арабском и французском бланке их «Птичьего гнезда», но*

¹⁰ М. М. Бахтин, Проблема речевых жанров, М., “Искусство”, 1986, с. 139.

армянскими буквами и со щемящей сердце любовью к армянской письменности: «*Уважаемая госпожа Сильва Капутиян, Ваше посещение для нас огромная радость и я очень благодарна за это ... Очень бы хотелось, чтобы наши ребята и девушки, а также официальные лица насладились бы Вашим присутствием и услышали бы несколько слов от Вас...*» (СК). Ответ письма автор предсталяет как повествование: «*Я немедленно попросила передать мое согласие уважаемому руководству*» (СК).

Здесь, в сущности, присутствуют оба полюса речевой деятельности, но в особом проявлении. Ответное письмо дается не в форме письма, а в виде авторского повествования, слившегося с подтекстом путевых заметок. Такие текстовые проявления в стиле называются текст в тексте, и в этом случае мы имеем дело с *межтекстовым взаимодействием*¹¹.

Каждый определенный тип диалога можно считать так называемым односторонним диалогом, формы проявления которого присутствуют в речевой сфере художественной документалистики. Примечателен односторонний диалог между автором и каким-либо предметом, важным в жизни народа. Естественно, что в этом случае автор использует способ персонификации. Например, корабль «Киликия» является одним из символов стабильной и прочной государственности в жизни армян, и интересен диалог «Моя Киликия...» между автором путевых заметок З. Балаяном и кораблём Киликия: «*Я разговаривал с кораблем. Иногда он, казалось, отвечал мне. Я обращался к нему на Ты с заглавной буквой. Вот лежу и думаю не только о Твоих предках, киликийских кораблях, но и о моих предках – киликийских мореплавателях.*» (ЗБ).

В процессе общения в художественной документалистики есть и другие особые структурные характеристики.

Иногда с целью установления коммуникативной связи с читателем, в разных частях предложения используется в качестве обращения слово читатель: «*Разреши, читатель, вспомнить вместе с тобой Карс 1919 года, место рождения Чаренца*» (ВОЕЧ).

«Ретроспективный взгляд» В. Папазяна является особым проявлением диалога с читателем. В мемуарных повествованиях автор часто использует формы обращения типа *дорогой читатель, моя*

¹¹ А. И. Горшков, Русская стилистика. Стилистика текста и функциональная стилистика, М., 2006, с. 85.

красивая читательница, друг читатель, сочувствующий читатель, терпеливый читатель и интересный читатель.

Известно, что предметом обращения может быть и не человек. В мемуарах Р. Ачаряна речь надзирателя сопровождается использованием обращения века: «*Куда вы идете века? Почему вы катитесь?*» (Г.А.)

В прощальной речи названия административно-территориальных единиц: государства, города и т. д., могут также использоваться в роли обращения. Например, «*Прощай, Египет ...*» (ВГ). «*Прощай,, Константинополь!*» (Г.А.).

В повести-эссе «Армянские эскизы» В. Петросяна собеседниками автора иногда становятся армянские символы – Армения, столица Ани, абрикосовое дерево. а события и действия разворачиваются вокруг них: «*Говори, Ани... Одна башня городских укреплений стоит твердо и продолжает, отсюда смотрели армянские солдаты ...*» (ВП). «*Как ты жило, абрикосовое дерево?*» (ВП).

В жанрах художественной мемуаристики диалог, как способ выражения мыслей, может проявляться в разных формах, изменяя и структуру, и способ выражения.

Сокращения

АА - Аветис Ааронян

ЗБ - Зорий Балаян

АИ - Аветик Исаакян

АЦ - Аспрам Царукян

РА - Рачья Ачарян

СК - Сильва Капутикян

ВА - Вараздат Арутюнян

ВОЕЧ- Воспоминания о Егише Чаренце

ВП - Вардгес Петросян

КС - Карпис Суренян

Р – Раффи

Ա. Վ. Գալստյան. Երկխոսության դրսնորումները գեղարվեստական վավերագրության լեզվում. Գեղարվեստական վավերագրության բնագրերում ուշագրավ է երկխոսությունների մի շղթա՝ տարատեսակ դրսնորումներով՝ զրոյց, ինքնահարցադրում, հեռախոսազրոյց, նամակ, անսպասիչան երկխոսություն և այլն, որոնք կարող են դրսնորվել տարբեր ձևերով՝ փոխելով թե՛ իրենց կառուցվածքը և թե՛ արտահայտման եղանակը: Երկխոսության կառուցվածքում ներկայացվում են խոսակիցների զգացական տարբեր վիճակներ: Այս դեպքում ավելի էական են դառնում բնորդների արտահայտիչ շարժումները (դիմախաղ, ժեստեր, հնչերանգային զուգորդումներ): Հաճախ կոչականի դերում կարող են հանդես գալ պետությունների և քաղաքների անուններ, ոչ շնչավոր առարկաներ:

A. V. Galstyan. Manifestations of Dialogue in the Language of Artistic Documentary. In the texts of artistic documentary, there is an interesting chain of dialogues: *conversation*, *self-questioning*, *telephone conversation*, *letter*, *dialogue without answer*, etc. with various manifestations, changing either their structure or means of expression. Emotional states of the interlocutors can be displayed in the structure of the dialogue. In this case expressive movements of the personages (mimicry, gestures and tone combinations) become essential.

Often names of states and cities, as well as inanimate objects can be used as a form of address.

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԸ ԲԱՌԱՐԱՆԱԳԻՐ

**Բանասիր. գիր. դոկտոր Ա. Հ. Աբաջյան
abajyan.anna@ysu.am, ԵՊՀ**

Մեծ է ականավոր գիտնական Մ. Աբեղյանի գործունեությունը հայագիտական ուսումնասիրությունների տարբեր բնագավառներում՝ առասպելաբանություն (ժողովրդական վիպասանություն և էպոս), հայ հին և նոր գրականություն, միջնադարյան քնարերգություն, հայոց տաղաչափություն և այլն: Ակադեմիկոսի գիտական մնայուն ժառանգության մեջ ծանրակշիռ տեղ են գրավում հայոց լեզվի ուսումնասիրությանը նվիրված նրա երկու հարյուրից ավելի բարձրարժեք հետազոտությունները, որոնցով Մ. Աբեղյանը նոր էջ բաց արեց հայ լեզվաբանական մտքի պատմության մեջ՝ իրավամբ դառնալով հայերենի գիտական քերականության հիմնադիրը:

Գաղտնիք չէ, որ գրական լեզվի մշակման, կատարելագործման, մանավանդ բառապաշարի հարստացման գործում խիստ կարևոր են թե՛ լեզվի քերականական կառուցվածքի ուսումնասիրությունը և թե՛ նոր բառարանների ստեղծումը:

Մ. Աբեղյանը մեծ վաստակ ունի նաև բառարանագրության ասպարեզում: 1918 թ. սկսած՝ պետական գրական լեզվի մշակման խնդիրը դարձել էր ժամանակի հրամայական, և ահա 1918-1927 թթ. Աբեղյանի գիտական գործունեության մեջ նշանավորվում են լեզվաշինարարական արդյունավետ աշխատանքներով, որոնք մեծապես նպաստեցին մեր լեզվի մշակմանը և կանոնավորմանը:

Այժմ մեր խնդրո առարկան անդրադարձն է մեծ գիտնականի ստեղծած բառարաններին:

Բառարանագրության ոլորտում լեզվաբանի առաջին փորձը եղել է «Աշխարհաբար առանձին բառերի համար բացատրական բառարան», որ կազմվել է 1882 թ.¹²:

1890-ական թթ. սկզբներին Մ. Աբեղյանը ծրագրել էր ստեղծել հայոց լեզվի բարբառային բառերի բացատրական բառարան: Այս գործին ձեռնամուխ է եղել 1891թ.՝ կազմելով Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» պատմավեպի բառարանը: Բառարանի սկզբում հեղինակը գրում է. «Այս տետրի բոլոր դարձվածները հանված են Խ. Աբովյանի «Վ. Հ.» գրքից 1891

¹² ԳԱԹ, Մ. Աբեղյանի ֆոնդ, Ն 490:

թվին Թիֆլիսում, իմ ձեռքով»¹³: Որոշակի հանգամանքներով պայմանավորված՝ աշխատանքը ընդհատվում է, սակայն գիտնականին հոգեհարազատ է մնում ժողովրդական, բարբառային բառերի բառարան ստեղծելու գաղափարը:

1907 թ. Ղարաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր) նա կազմում է Պ. Պոռշյանի «Կովածաղիկ» վեպի բառարանը՝ բնագրային համապատասխան օրինակներով¹⁴: Բառարանագրական այս աշխատանքներից կարելի է ենթադրել, որ Ս. Աբեղյանի կազմելիք բառարանը, ամենայն հավանականությամբ, պիտի լիներ ժողովրդական հորջորջվող հայերենի լավագույն բացատրական բառարանը:

Աբեղյան բառարանագրի բուռն գործունեությունը սկսվում է 1919 թ., եթե նա Եռանդուն մասնակցություն է ունենում հայ գրական լեզվի տերմինաբանական կոմիտեի աշխատանքներին: Ինչպես նշում է Հ. Ամայանը «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները» գրքում, «նոր շրջանի՝ 19-րդ դ. 1-ին կեսին ծաղկում ապրող հայ բառարանագրությունը կոչված էր բավարարելու բուռն թափով զարգացող հայագիտության պահանջները, մինչդեռ հրապարակի վրա մասնագիտական, տերմինաբանական բառարանները հազվադեպ էին, մի բան, ինչի կարիքը խիստ հրատապ ու անխուսափելի էր»¹⁵:

Բանագետ Ս. Բ. Հարությունյանը Աբեղյանի կյանքին և գործին նվիրված հսկայածավալ մեծարժեք աշխատության մեջ գրում է. «Պետականությունից գորիկ երկրում սեփական ազգային լեզվով գիտությունը, քաղաքականությունն ու արվեստը զարգացնելու անհնարինությունը, բնականաբար, հասարակականորեն չէր առաջադրում գիտության, քաղաքականության ու մշակույթի տարրեր բնագավառների մասնագիտական տերմինաբանության մշակման կարիք: 20-րդ դարի 2-րդ տասնամյակից սկսած՝ հայ ազգային-քաղաքական և մշակութային կյանքի վերաճման հետ միասին, առաջ է գալիս նաև մասնագիտական բառարաններ ունենալու բուռն պահանջ: Եթե 1918 թվականից ի վեր Հայաստանում պետական պաշտոնավարությունը սկսում է կատարվել հայերենով, օրակարգի հրատապ խնդիրներից է դառնում մասնագիտական տերմինաբանության մշակումը՝ պաշտոնավարության այնպիսի բնագավառների համար, որպիսիք դատարաններն ու ուսումնական գործն էին»¹⁶:

¹³ Նոյն տեղում, N 70 թ:

¹⁴ Նոյն տեղում, N 70 գ:

¹⁵Տե՛ս Հ. Ամայան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները, Ե., 1966, էջ 54:

¹⁶ Ս. Բ. Հարությունյան, Մանուկ Աբեղյան. կյանքը և գործը, Ե., 1970, էջ 623:

1918 թ. Թիֆլիսի հայ փաստաբանների միությունը («Հայփաստ»), հաշվի առնելով Հայաստանի դատարանների մոտալուս ազգայնացումը, նախաձեռնում է կազմել ռուս-հայերեն իրավաբանական տերմինների բառարան, որը առաջին քայլը պիտի լիներ կարևորագույն օրենսգրքերի հայերեն թարգմանության գրիծում, գործնականորեն նպաստեր հայերենին անվարժ արևելահայ պաշտոնյաների ու փաստաբանների աշխատանքին: Բառարանն ընդգրկելու էր դատավարության մեջ հաճախակի կիրառվող բառեր, քաղաքացիական, քրեական, առևտրական և մուրհակային իրավունքին, քաղաքացիական, քրեական դատավարության վերաբերյալ տերմիններ:

Ռուսերեն 1100 բառ պարունակող ցանկը բյուրոն տրամադրեց Երդվալ հավատարմատար S. Հովհաննիսյանին՝ կազմելու բառարանը, որի տերմինների բանակը չպետք է գերազանցեր 1400-ը (ծախսերի և ժամանակի առումով): Խմբագրական մասնաժողովում (այդպես է նշված) աշխատելու են իրավիրվում ժամանակի հայտնի հայկաբաններ Մ. Աբեղյանը և Ս. Մալխասյանը:

Ռուս- հայերեն իրավաբանական առձեռն բառարանը հավաքական մտավոր աշխատանքի եզակի օրինակ էր, ստեղծագործական երևույթ հայ իրականության մեջ:

Հիշենք, որ նախքան սույն բառարանի ստեղծվելը չունեինք իրավաբանական որևէ բառարան: Գրաբարն աղքատ էր իրավաբանական տերմիններ ունենալու առումով, որից կարողանային օգտվել հեղինակները: Անհրաժեշտություն էր առաջացել ստեղծելու նոր բառեր: Եվ ահա իրավաբանական տերմինաբանության կերտման կարևոր և պատասխանատու գործը ստանձնում են Մ. Աբեղյանը և Ս. Մալխասյանը: Բառարանի շուրջ 1400 բառական միավորից (մեր հաշվումներով ստույգ թիվը 1324 է), ինչպես հեղինակներն են նշում, ավելի քան 360-ը կամ նոր տերմիններ են՝ նորաբանություններ, կամ նորածնություններ (գործածական բառերի կրճատումներ և առհասարակ ձևափոխություններ), կամ էլ հնաբանություններ (հին բառերի վերականգնումներ հին կամ նոր առումով, անփոփոխ կամ փոփոխած ձևով):

Մրանցից մոտ հիսունը առաջարկել են Մ. Աբեղյանն ու Ս. Մալխասյանը, վաթսունը բուն իմաստով համատեղ աշխատանքի արդյունք է, իսկ մնացածի հեղինակը S. Հովհաննիսյանն է¹⁷:

Կարևոր ենք համարում առանձնացնել այս բառարանի գլխավոր արժանիքները.

¹⁷Տե՛ս Ս. Բ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 9-10:

ա/ Հեղինակներն աշխատել են ռուսերեն յուրաքանչյուր տերմինի դիմաց անպայման դնել հայերեն այնպիսի բառ, որը ճշգրտողեն կարտահայտի ռուսերեն տերմինի իմաստը: Այդպիսի բառ նախ փնտրել են խոսակցական լեզվում. եթե չեն գտել այնտեղ, դիմել են գավառաբարբառների և գրաբարի օգնությանը. «Հին հայերէնից օգտուել ենք լիաբուն և ի միջի այլոց ի կեանս ենք վերակոչել այնպիսի քիչ գործածական ձևեր, ինչպէս «Վարութիւն», «իրաւութիւն» և այլն (փոփոխած կամ անփոփոխ առումով»¹⁸:

թ/ Բառարանը կազմողները հնարավորինս խուսափել են ռուսերեն մի քանի տերմին հայերեն միևնույն բառով թարգմանելուց, համարժեքը չգտնելու դեպքում ստեղծել նորը՝ մեծապես նպաստելով իրավաբանական հասկացությունների հստակեցմանն ու հարատացմանը:

Բառարանում ամեն մի տերմինի իմաստային յուրաքանչյուր առումի դիմաց գրված է հայերեն մեկ բառ, հազվադեպ՝ երկուսը, որոնցից մեկը օտար ծագման է: Սա այն դեպքում է, երբ մասնագետները գերադասել են օտար բառը, թեև հայերենն էլ անընդունելի չեն համարել: Կամ ընդհակառակը, գերադասել են հայերեն բառը, սակայն չեն ցանկացել հանրության կողմից լայնորեն կիրառվող օտար բառը չներկայացնել բառարանում՝ վերջնական ընտրությունը թողնելով լեզվի զարգացմանը:

Բառերի ընտրության ժամանակ հեղինակները մեծ ուշադրություն են դարձրել նաև դրանց բարեհնչյունությանը, հակիրճությանը. «Նոր հայերէնի պակասութիւններից մէկն էլ բառերից շատերի չափազանց երկարութիւնն է, ուստի մեր հոգսերից մէկն էլ եղել է բառերին կրճատ ձև տալը կամ նրանց կրճատ ձևերի վերականգնումը: Բառեր ընտրելիս, կրճատելիս կամ կազմելիս մենք առանձին ուշադրութիւն ենք դարձրել նաև նրանց գեղեցկութեան վրայ» (օրինակ՝ ներկայիշ, ներկայացուցիշ, հաւատտար, հաւատարմատար)¹⁹:

1919 թ. լոյս տեսած «Ռուս- հայերեն իրավաբանական առձեռն բառարանը» բռնեց ժամանակի քննությունը՝ մեծապես նպաստելով հայ իրավաբանական մտքի զարգացմանը: Բազմաթիվ բառեր մտան շրջանառության մեջ: Նշենք դրանցից մի քանիսը՝ иск - հայց, истең - հայցվոր, исковое прошение - հայցագիր, аренда-Վարձակալություն, арендная плата - վարձագին, аванс - կանխավճար, наследователь - ժառանգատու, недоимка - ապառք, сообщник - հանցակից, чуждатель -

¹⁸ Նոյն տեղում:

¹⁹ Ս. Բ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 13:

օտարել, ակցիզ - բաժ, ակցիա - բաժնեթուղթ, ալիբի - այլուր (ներկայումս՝ այլուրեքություն), ատեստ - վկայագիր, վկլած - դրույք և այլն:

Բառարանում գետեղված որոշ նորակազմություններ չմտան շրջանառության մեջ. կամ ենթարկվեցին փոփոխությունների, կամ էլ ուղղակի դրուս ընկան լեզվից: Օրինակ՝ սրուցակ՝ կետիկ, բերանակ՝ անկետիկ, բլանկ՝ սոսկիկ, բլանկօվայ հաճուկ՝ սոսկ մակագիր, ապուլյացիա՝ առկոչ (ներկայումս՝ բողոքարկում), վազագրայք առաջարկության հաջուկ՝ գտնողչեք և այլն:

Այսպիսով, 1919 թ. հունիսին լուս տեսած «Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարանը», իր բնույթով լինելով արևելահայերենում տերմինաբանական-մասնագիտական առաջին բառարանը, դարձավ այն խարիսխը, որի վրա հիմնվեց և զարգացավ հայ իրավաբանության լեզուն:

Խորհրդային իշխանության առաջին տարիներին ժամանակի հրամայական էր դարձել նաև ռազմական տերմինաբանություն ունենալը: Հայաստանի ռազմական կոմիսար Ավիս Նորդիշանյանի հրամանով Մ. Աբեղյանին հանձնարարվում է կազմել ռուս-հայերեն ռազմական տերմինների բառարան: Այդ նպատակով մեծ գիտնականին նշանակում են ռազմական կոմիսարի անձնական քարտուղար: 1924-ից նա կովկասյան կարմրադրոշ բանակի ռազմահեղափոխական խորհրդին կից խմբագրական-հրատարակչական կոլեգիայի անդամ էր, ռազմական տերմինների թարգմանիչն ու վերջնական մշակողը: 1925թ. (կազմի վրա նշված է 1927) հայագետը լուս է ընծայում մոտավորապես 17 հազար բառ ու դարձված պարունակող «Ռուս-հայերեն ռազմական բառարանը»՝ բարկացած 724 էջից՝ հայ բառարանագրության պատմության մեջ դառնալով առաջինը իր տեսակի մեջ:

Ռազմական տերմիններ՝ որպես այդպիսիք, գրեթե չուներ հայերենը, և Աբեղյան բառարանագրի առջև դժվարին խնդիր էր ծառացել, քանի որ «դարերից ի վեր ռազմական կյանքով ապրած չլինելով՝ մեր լեզուն մնացել է այս նկատմամբ ընդհանրապես նախնական դրության մեջ, շատ քիչ են առաջ եկել ռազմական նոր բառեր և դարձվածքներ»²⁰: Բառարանը կազմելիս Մ. Աբեղյանը առաջնորդվել է հետևյալ սկզբունքով:

ա) Բառարանում ներառել իր և ուրիշների կողմից վերջին 7-8 տարիների ընթացքում ստեղծված տերմինները:

²⁰ Մ. Աբեղյան, Ռուս-հայերեն ռազմական բառարան, Ե.1925, էջ 4:

բ) Օգտագործել ռազմական հին բառերը նոր, փոփոխված իմաստներով, այսինքն՝ իմաստափոխության ենթարկելով, օրինակ՝ *համիարգ, հասպիք, փակաղակ* և այլն: Սրա մասին Մ. Աբեղյանը գրում է. «Կոլլուգայի փոխվելու հետ, բնականաբար, ոչ միայն նոր օտար բառեր պիտի մտնեն մեր լեզվի մեջ, այլև մեր բառերի նշանակությունները ևս պետք է ընդարձակվեն նոր առումներով»²¹:

գ) Երբ նշված երկու մեթոդները արդյունք չեն տվել, հեղինակը ստեղծել է նոր տերմիններ, ինչպես՝ կոմանդիրովկա-գործուղում, ս্যեմկա-հանութ, բարակ-հեղակ և այլն: Հաճախ դիմել է ժողովրդախոսակցական, բարբառային բառաշերտին, օրինակ՝ սօսկա-խզմար, ցույկում - իծաշարուկ և այլն:

Մ. Աբեղյանը, բացի իր ստեղծած տերմիններից, խմբագրել, նորմավորել, ի մի է բերել տարբեր բառարաններում և գրքերում առկա ռազմական բառերը, որի շնորհիվ հայերենի բառապաշարը հարստացավ հազարավոր նորաստեղծ բառերով; Նշենք դրանցից մի քանիսը՝ բառային-գումարտակ, պուտետակ, սուսակ, սուսական, լաֆետ - հրետասայլ, վզвод - դասակ, բոմբարդիր - ռմբարկու, գրանата - նոնակ, աշերեն - տողան, աշտարակ, պեչոտ - հետևազոր և այլն:

Եղան նաև այնպիսի բառեր, որոնք հավանության չարժանացան և դուրս մնացին կիրառությունից, ինչպես՝ կոլոնհա - դոութասայուն, եֆրեյտօր - թելանի, լեյտենանտ - տեղակալ և այլն:

Այսպիսով, «Ռուս-հայերեն ռազմական բառարանի» պատմական մեծ նշանակությունն այն է, որ կյանքի կոչվեցին հազարավոր ինչպես նորաստեղծ, այնպես էլ անգործածական բառեր՝ հարստացնելով հայոց լեզվի բառային կազմը, իսկ Մ. Աբեղյանը դարձավ հայերենի ռազմական տերմինաբանության հիմնադիրն ու նորմավորողը:

1927 թ. լույս է տեսնում < Աճառյանի և Գ. Ղափանցյանի կազմած՝ երկաթուղային տերմինների բառարանը, որին իր մասնակցությունն էր բերել նաև Մ. Աբեղյանը՝ լեզվական կողմի մշակմամբ:

1930-ական թթ. թիջներ ակադ. Լ. Հովհաննիսյանի, Ա. Տեր-Պողոսյանի և Մ. Աբեղյանի ջանքերով կազմվում է «Հատին-ռուս-հայերեն բժշկական բառարանը», որն իր ծավալով՝ ավելի քան 20000 միավոր, գերազանցում է մինչ այդ հրապարակի վրա եղած բժշկական բոլոր բառարանները:

²¹ Նոյն տեղում:

Հեղինակները որպես ուղենիշ ունեցել են հետևյալ սկզբունքները. չթարգմանել բժշկական օտար տերմինը, եթե հայերենում չկա համապատասխան բառ կամ կազմված է անհաջող, եթե թարգմանությունը ճշգրիտ չի արտահայտում տերմինի իմաստը, եթե հանրության կողմից արդեն իսկ քաղաքացիություն են ստացել և լայնորեն տարածվել դեղերի, հիվանդությունների շատուշատ անուններ, ինչպես՝ մալարիա, խոլերա, նոպա, սպրեսպրոմիցին և այլն:

Նշենք, որ բառարանում տեղ են գտել նաև որոշ թերություններ, անհաջող, երբեմն էլ սխալ թարգմանություններ: Դրա գլխավոր պատճառը թերևս այն է, որ 40-ականներից Մ. Աբեղյանը գերծանրաբեռնվածության և վատառողջության պատճառով չի կարողացել մասնակցել բառարանի խմբագրման, հղկման վերջնական աշխատանքներին: Այսուհանդերձ, «Լատին-ռուս-հայերեն բժշկական բառարանը» բացառիկ երևույթ էր հայոց լեզվի բժշկական տերմինաբանության ոլորտում:

Դեռ 1920-ական թթ. Մ. Աբեղյանը, երբ դեկավարում էր գիտության և արվեստի ինստիտուտը, առաջարկում է Գ. Լևոնյանին և Դ. Դեմիրճյանին կազմել գրաֆիկ արվեստների և քանդակագործության տերմինների բառարան՝ հաշվի առնելով այս բնագավառի մասնագիտական տերմինների բացակայության պայմաններում հայ ազգային արվեստաբանության զարգացման միտումները: Բառարանի ստեղծման ուղղությամբ տարվող աշխատանքներում Մ. Աբեղյանը առավելապես հակված էր հայերեն տերմիններ ստեղծելուն՝ ի տարբերություն իր գործընկերների, որոնք նախընտրում էին փոխառությունները:

Բառարանն ընդգրկում է հարյուրավոր նորաստեղծ բառեր, որոնց հեղինակը Մ. Աբեղյանն է: Օրինակ՝ լազու - գունանկարչություն, ցածրակ - խեժաներկ, կոմբինացիա - համակցություն, կոմլեքտ - համալիր, կոնֆիգուրացիա - կերպավորություն, մազոք - քսուք, ասորտիմենտ - տեսակույք, բանկա - գլաման, հատրպնիք - քնորդ, րոզետք - վարդյակ, օվալ - ձվարդ, սինե-սերզ - կապտագորշ, ստենոպիս - որմնանկար, չեկանկա - դրոշմատում և այլն: Թերություններով հանդերձ՝ 2000 բառային միավոր պարունակող «Գրաֆիկ արվեստների և քանդակագործության տերմինների բառարանը» հայ բառարանագրության պատմության մեջ կերպարվեստի տերմինների առաջին բառարանն էր, սակայն, ցավոք սրտի, չիրատարակվեց. տարածվեց մասնակիորեն (ձեռագիրը պահպում է ԳԱ արվեստի ինստիտուտում):

Ամփոփենք՝ Մ. Աբեղյանի կազմած բառարանները՝ «Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարան» (Տ. Հովհաննիսյանի, Ս.

Մալխասյանի և ուրիշների հեղինակակցությամբ), «Ռուս-հայերեն ռազմական բառարան», «Հատին-ռուս-հայերեն բժշկական բառարան» (Լ. Հովհաննիսյանի և Ա. Տեր-Պողոսյանի հեղինակակցությամբ), «Գրաֆիկ արվեստների և քանդակագործության տերմինների բառարան» (Գ. Լսոնյանի և Դ. Դեմիրճյանի հեղինակակցությամբ), գիտական ծանրակշիռ ավանդ են հայ բառարանագրության, ժամանակակից հայերենի բառապաշտի հարստացման, տերմինաբանության զարգացման ասպարեզում և մեծապես նպաստել են հայ գիտության զարգացմանը: Լինելով հայերենի բոլոր դրսնորումների անընտոյպ մասնագետ, բազմադարյա հայ մշակույթի լավագույն գիտակ՝ Մ. Աբեղյանը, իրավամբ, ստեղծագործական մոտեցում է հանդես բերել օտար բառերի թարգմանության հարցերում՝ մեր հարուստ մատենագրությունից կենդանացնելով բազմաթիվ մեռած բառեր կամ էլ արարել նորերը՝ կատարելապես տիրապետելով հայերենի բառակազմության օրինաչափություններին:

Անվանի լեզվաբան, բառարանագետ Ա. Սուրիհասյանը այսպես է բնութագրել Աբեղյան բառարանագրին. «.... Դեռ 20-ական թթ. պրոֆ. Աբեղյանը հիմնովին հերքեց ժամանակակից հայերենի մասին տարածված այն առասպելը, ըստ որի հայոց լեզուն անընդունակ է իր սեփական միջոցներով ստեղծելու հասարակական-քաղաքական, գիտական և տեխնիկական տերմինաբանություն: Այդ... առասպելի հերքման փայլուն ապացույցներն են պրոֆ. Մ. Աբեղյանի կազմած և հայոց լեզվի մեջ մտած հազարավոր բառերն ու տերմինները...»²²:

²² Տե՛ս Ա. Մ. Սուրիհասյան, Ռուս-հայերեն բառարանագրությունը սովետական իշխանության տարիներին (թեկն. ատենախոս., ձեռագիր), էջ 79:

A. Г. Абаджян. М. Абегян как лексикограф. Составленные словари М.Абегяна: «Русско-армянский юридический ручной словарь» - соавторы Т.Оганесян и С.Малхасян, «Русско-армянский военный словарь», «Латинско-русско-армянский медицинский словарь»- соавторы Л.Оганесян, А.Тер-Погосян, «Терминологический словарь графического искусства и скульптуры», внесли научный, весомый вклад в армянскую лексикографию, в обогащение современной армянской лексики, в области развития терминологии, которые в основном способствуют развитию армянского языка как науки. Будучи прекрасным специалистом во всех областях армянского языка, знатоком армянской древней культуры, Абегян, прекрасно овладев армянскими образцами словообразования, справедливо проявил творческий подход к вопросам перевода иностранных слов, восстановил много мертвых слов из нашей богатой библиографии или создал новые.

A. H. Abajyan. M. Abeghyan as lexicographer. M.Abeghyan's compiled dictionaries: "Russian-Armenian judicial manual dictionary" – co-authors T.Hovhannisyan and S.Malkhasyan, "Russian-Armenian military dictionary", "Latin-Russian-Armenian medical dictionary" – co-authors L.Hovhannisyan, A.Ter-Poghosyan, "Terminological dictionary of graphical art and sculpture", made scientific, weighty contribution to the Armenian lexicography, to the enrichment of Modern Armenian lexicon, in the field of development of terminology, which mostly promote the development of Armenian as a science. Being a perfect specialist in all the fields of the Armenian language, proficient of the Armenian ancient culture Abeghyan, perfectly mastering the Armenian word formation patterns, rightly showed a creative approach to the questions concerning the translation of foreign words, restored many dead words from our rich bibliography or created new ones.

ԱՂՈԹՔԻ ԲԱՆԱՁԵՎՈՒՄՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԵՐԿՈՒՄ

Բանասիր. գիտ. թեկնածու Ա. Լ. Յուզբաշյան

Աղոթքը հաղորդակցումն է մարդու և Աստծո միջև, որը հոգեկան, լեզվական, բնագդային, կենսաբանական շիման դրսնորումն է: Աղոթքը ինքնահաղորդակցման ձևերց մեկն է, որի ժամանակ պահանջվում է մտքի կատարյալ ուղղվածություն առ Աստված: Աղոթքների լեզվական, խոսքային առանձնահատկությունները մասամբ են ուսումնասիրված: Աղոթքն աղաչանք-դիմում է Աստծուն խնդիրքով, գոհությամբ, ուխտով: Կա նաև Աստծուն դիմելու սահմանաված կարգ²³: Հենվելով աղոթքի վերոհիշյալ բացատրության վրա՝ աղոթքները բաժանվում են երկու խմբի, առաջին՝ աղոթքներ, որոնք ստեղծված են հատուկ արարողակարգերի համար²⁴, աղոթքներ, որոնք ինքնարուիս են և կարող են ունենալ փառաբանողական, ապաշխարողական և այլ բովանդակության:

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ աղոթքները մարդկանց ամենագործածական տեքստերն են, խոսքերը, բանաստեղծությունները: Թվում է, թե բովանդակային տեսանկյունից բաժանվելով մի քանի թեմատիկ խմբերի՝ նրանք առանձնահատկություններ չունեն, մասնաւորապես ստորոգման վերաբերյալ, քանի որ այն հիմնականում պետք է արտահայտվի իրամայական եղանակի բայաձևերով կամ իմաստային դաշտում պետք է արտահայտի աղաչական, հայցողական իմաստ: Մարդն իր կյանքի առաջին իսկ շրջանից զգացել է խոսքի ուժը և դիմել է տիեզերքին, այսինքն փորձել է տիեզերակարգի շրջապատճեղի մեջ օգնություն խնդրել Արարչից: Դեռևս 5-րդ դարի մատենագրության մեջ պահպանվել են հեթանոսական աղոթքների պատառիկներ, իսկ ժողովորդի մեջ բանավոր մինչև օրս էլ գործածվում են տարբեր բովանդակության «աղոթքներ», հիմնականում չարխափաններ. «Չար աչքը չար փուշին, չար փուշը հազար անդունդատակին»: Գրավոր հմայեկներ ստեղծվել են շատ վաղուց և շատ հաճախ այդ հմայեկների վրա ավելացվում էին քրիստոնեական աղոթքներ²⁵, այսինքն առ այսօր աղոթում են

²³ Տե՛ս Է. Բ. Աղյայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976, էջ 26:

²⁴ Արարողակարգերը կամ ծիսակարգերը տարբեր են, օրինակ՝ բժշկության, մկրտության, պսակադրության, Այլակերպության, Կանաչ կիրակիի և այլն, տե՛ս Մ. աղք. Օրմանեան, Ծիսական բառարան, Անթիլիաս, 1979:

²⁵ Տե՛ս Մ. Արեդյան, Երկեր, հ. Ա., 1966, էջ 33:

մարդիկ և կաղոթեն: Այդ իսկ պատճառով ստեղծվել են աղոթամատյաններ, աղոթագրքեր, որոնք ունեն հատուկ բովանդակություն:

Կան ծիսակարգային աղոթագրքեր, օրինակ՝ պատարագամատուցը, ժամագիրքը, կան աղոթագրքեր, որոնցում զետեղված են ամենատարբեր բովանդակության, ամենատարբեր հեղինակների աղոթքները: Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկը, որը գրականագիտության մեջ ընդունված է անվանել պոեմ, հայտնի է «Գիրք աղօթից», «Նարեկ աղօթից», «Աղօթամատյան», «Մատյան ապաշխարանքի» անվանումներով²⁶: Նարեկացու երկը բովանդակային առումով ունի հետաքրքիր առանձնահատկություններ: Լինելով քնարական պոեմ՝ այն ներքին խոսքի յուրահատող արտահայտություն է, գրուց, ինքնավերլուծություն, խոհ, ապաշխարանք՝ Աստծոն միանալու յուրահատող ձգտումով: Երկը բովանդակային առումով բավական բազմարովանդակ է: Ապաշխարական գլուխների կողքին միաձոյլ զետեղվել են փառաբանողական ներբողները, բժշկող-ողորիչ աղոթքներին զուգահեռ զետեղված են հզոր խոստովանությունները, որոնք անանձնական բովանդակություն ունեն: Փորձենք անդրադառնալ մի քանի առանձնահատկությունների, որոնք հատկանշական են միայն աղոթքներին: Աղոթքի բանաձևումներից անդրադառնանք նախադասության կառուցվածքային առանձնահատկություններին, որոնք ել պայմանավորում են բովանդակության արտահայտությունը:

Լեզուն մտածողության ծև է և իր այդ գործառույթը իրականացնում է նախադասությունների միջոցով, հետևաբար նախադասությունը նաև մտքի արտահայտման ծևավորման միավոր է, որտեղ կարևոր են ստորոգումը և հնչերանգային ավարտվածությունը: «Մատեան ողբերգութեան» երկում, թվում է, պետք է գերակշռեն հրամայական եղանակով արտահայտված ստորոգյալները, սակայն պոեմում գործածվել են գրեթե բոլոր ժամանակածները: Գ. Նարեկացին ստեղծել է մտքերի արտահայտչամիջոցների բազմազանություն, միաժամանակ երբեք չի զգացվում ոչ մի ավելորդություն:

Գրաբարում բայաձևերը ոճական առանձնահատկությունները ստեղծում են իմաստային դաշտում, և Նարեկացին իր մենախոսություն-խոստովանանք բովանդակությամբ գլուխներում օգտագործել է հենց այդ ոճական բազմազանությունը: Պոեմ-աղօթամատյանում հանդիպում են գրաբարի բայի եղանակային-ժամանակային ծևերով արտահայտված բոլոր միավորները՝ սահմանական, ստորադասական, հրամայական

²⁶ Պ. Խաչաղորյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Ս. Էջմիածին, 1996, էջ 23:

Եղանակների թե՛ պարզ, թե՛ բաղադրյալ ժամանակաձևերը: Այսպէս՝ Ի՞նչի Բ մասը մեկ համադասական նախադասություն է՝ կազմված 22 բաղադրիչ նախադասություններից, որոնց ստորոգումը արտահայտված է «Մեղայ» բայաձևով: Հետաքրքիր է այս կառուցքը, քանզի սա կարելի է համարել առ այսօր աղոթքի բանաձև²⁷, որի օրինակը կա ոեն շատ ավելի վաղ ժամանակներից: Առաքելական եկեղեցու ընդհանրական զღման տեքստը կազմված է «Մեղայ» ստորոգյալով արտահայտված ութ բազմաբարդ նախադասություններից, որոնցում խոստովանվում են մարդկային գրեթե բոլոր մեղքերը: «Մեղայ չար խորհրդով մտաց, նենգութեամբ, ատելութեամբ, խեթի, թովութեամբ²⁸...» [Էջ 80]: Հմմտ. «Մեղայ աննուազ լուսոյդ վայելման, նենգոյիս մեղայ, Մեղայ ճաշակման անճառող կենաց, բազումս մեղայ, Մեղայ անհաս պարզեացդ ծրից, հանապազ մեղայ...» [Էջ 349]: Նոյն գլխի Ը մասում առկա է պայմանահետևանքային իմաստ արտահայտող կաղապար՝ եթէ - ապա զուգադիր շաղկապի գործածությամբ, որտեղ ստորադաս նախադասության ստորոգումն արտահայտված է ստորադասական եղանակի բայաձևերով, իսկ գլխավոր նախադասության ստորոգումը՝ ներկայի բայաձևերով: «Եթէ աչս յառեսցես՝ ամաչեմ, եթէ ծայն տացես՝ երկնչիմ, Ապա թէ սպառնաս՝ ընկճիմ...» (Էջ 351), նոյնքան հմտորեն գործածված են առաջին ապառնու բայաձևերը ստորադաս նախադասության մեջ, և գերադաս նախադասության ստորոգյալը արտահայտված է ներկայի բայաձևերով՝ «Եթէ ունկն մատուցանիցես՝ պաղատիմ, եթէ անսայցես՝ աղերսեմ» (նոյն տեղում), ապա գործածված են անցյալ դերբայի բայաձևեր՝ «Զբարեացն պարզն մատնեալ, զերանութիւնն թողեալ, զշնորին լքեալ, զուխտն ցրեալ...» (Էջ 352): Նարեկացին հմտորեն զուգորդել է առաջին և երկրորդ ապառնու բայաձևերի գործածությունը: Ստորադասական եղանակի բայաձևերի բազմիմաստությունը և ոճական բազմազանությունը տարբեր մատենագիրներ և իմաստասեր գիտնականներ գործածել են յուրովի: Օրինակ՝ 5-րդ դարում Հ. Մանդակունու Ճառերում առաջին ապառնին հիմնականում արտահայտում էր սահմանական ապառնու իմաստ, իսկ 2-րդ ապառնին՝ ըղձականի, պայմանական և հարկադրական ապառնու իմաստ: Եվ սա բավական հստակ է²⁹: Չնայած լեզվաբանները գտնում են,

²⁷ Ա. Մայիսասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ. 3, Ե., 1944, էջ 298:

²⁸ Աղոթագիրը, աշխատասիր. Տ. Մ. քին. Արամեանի, Տ. Խաչատրեանի և ուրիշ., Ե., 1992, էջ 74:

²⁹ Ա. Յուզբաշյան, Ստորադասական եղանակի բայաձևերի իմաստային կիրառությունները Հ. Մանդակունու ճառերում // Հայերենագիրության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ, Ե., 2012, էջ 203:

որ համաբանության օրենքով առաջին ապառնին և երկրորդ ապառնին իրար փոխարեն գործածվել են և իմաստային առանձնահատկություններ չունեն, սակայն, կարծում ենք, դարաշրջանի լեզվամտածողությանը համահունչ եղել են տարբերություններ³⁰: Նարեկացին արգելական հրամայականի բայաձևեր համեմատաբար քիչ է գործածել, 2-րդ ապառնու բայաձևերը մի արգելականի հետ արտահայտել են հրամայականի իմաստ: Առաքելական եկեղեցում, առհասարակ, ընդունված է ընդհանրական խոստովանություն, իսկ Նարեկացին իր գրշման բովանդակություն ունեցող գլուխներում տվեց անհատական խոստովանության եզակի օրինակ: Միաժամանակ այդ անհատական խոստովանությունը այնքան խորիմաստ է, որ այսօր արդեն նարեկյան ապաշխարանքը վերածվել է համամարդկային զղջումի: Նշենք, որ աղոթքի հիմնական սկզբնաղբյուրը «Աստվածաշունչ» մատյանն է, որտեղ մանրամասն վերլուծվում է աղոթքի կարևորությունը. «Հայցեց՛ք և գտշիք, բախեց՛ք և բացցի ձեզ» (Մադր.. Է, 7): Այնուհանդերձ աղոթքներում ստորոգումը հիմնականում արտահայտվում է հրամայական եղանակի բայաձևերը իմաստային դաշտում արտահայտում են խնդրանք, աղաչանք, հորդոր: Նարեկացին նոյնպես գործածել է հրամայական եղանակի բայաձևեր, որոնք բացառապես արտահայտում են աղերս, խնդրանք, աղաչանք: Սահմուները, հավանաբար, եղել են Գ. Նարեկացու սեղանի գիրքը: Այս են վկայում այն բոլոր մեջքերումները, որ Նարեկացին կատարել է իր պոեմ-աղոթամատյանում: Այսպես, օրինակ, «Գիրք սաղմոսաց»-ում 615 նախադասության ստորոգումն արտահայտված է բուն հրամայականի բայաձևերով, 77-ը՝ արգելական հրամայականի: Այլ կերպ ասած՝ 782 նախադասության ստորոգումը արտահայտված է հրամայական եղանակի բայաձևերով, «Մատեան ողբերգության» երկում գործածված է 466 հրամայական նախադասություն, որոնցից 394 նախադասության ստորոգումն արտահայտված է բուն հրամայականի բայաձևերով, 70-ը՝ արգելական հրամայականի, 2 նախադասություն հորդորական հրամայականի բայաձևերով, սակայն այս նախադասություններից և ոչ մեկը հրամանի իմաստ չի արտահայտում: Սրանք հիմնականում արտահայտում են հորդոր, աղաչանք, խնդրանքներ, հայցեր և այլն, բայց ոչ հրաման: Հրամայական նախադասություններում հիմնականում ենթակաները գեղչված են, սակայն առկա են կոչականներ:

³⁰Տե՛ս Թ. Ա. Ղարագյուղան, Հին հայերենի խոնարհման համակարգի ծագումը, Ե., 1961, էջ 128:

Հետաքրքիր է, որ իմաստասիրական հայեցակետով տարբերվում են միտք և դատողություն եզրույթները. դատողությունն արտահայտում է հաստատում կամ ժխտում, որը հիմնականում բնորոշ է պատմողական նախադասությանը, իսկ հրամայական, հարցական և բացականչական նախադասությունների մեծ մասը դատողություն չեն արտահայտում, այո՛, թերևս աղոթքներում հիմնականում գերակշռում են հոգու ճիշը, աղաղակը, ինքնավերլուծությունը, որոնք սովորաբար արտահայտում են դատողությունների պայմանահետևանքային կապ: «Այլ օգնեա՛ ինձ, բարի վշտակից... Ասա՛ ինձ...»: Գ. Նարեկացին հմտորեն գործածում է ստորադասական եղանակի բայաձևերը հրամայականին զուգահեռ, բնականաբար վերջինների ազդեցությամբ կամ էլ ստորադասականի հարկադրականի իմաստի ազդեցությամբ արտահայտում են հրաման: Գ. Նարեկացին գործածել է նախադասության բոլոր տեսակները: Ինքնավերլուծությունների ժամանակ երբեմն ընդհանրական հարցում ներ- խոհեր են ստեղծվում. «Ո՞վ ոք զազրացաւ և ոչ ամաչեաց, ո՞վոք սխալեաց և ոչ ապաշաւեաց» և այն... իթ գլխում այսպիսի 44 հարցադրում է կատարում մեծ մտածողը: Կարծում ենք՝ Գ. Նարեկացին մինչև այսօր եղակի է բազմաբովանդակ կոչականների գործածությամբ: Հետաքրքիր է՝ սաղմոսներում նոյնպես առկա են կոչականներ՝ հիմնականում արտահայտված «Տէր» (Ը, ՃԺԸ), «Աստուած» բառերով: Հանդիպում ենք նաև «Ցնծութիւն իմ»[ԼԱ], «արդարը» (ԼԱ) կոչականները արտահայտված են մերթ գոյականներով՝ հիարկե տարասեռ որոշչներով օծված, մերթ անցյալ դերբայով, մերթ ածականով և այլն: Կոչականներով արտահայտվում է այն մեծ ՍԵՐ-ը, որը տածում է Գ. Նարեկացին առ Տիրամայր, առ Հայր Աստված. «...Տէր Աստուած, մարդասէր, անտխակալ և երկայնամիտ...» (Էջ 536), «Աստուծոյ Կենդանւոյ Միածին Որդի, Հզար, բարձրեալ, անքնին, անճառ, քահիչ, ահաւոր» (Էջ 532], «Բարի, ահաւոր, մարդասէր, խնամակալ, կենդանի, սուրբ, լուսաւոր և անվախճան թագաւոր» (Էջ 501), «Ստեղծիչ հրեշտակաց, գոյարան մտաց, հաստիչ հրեղինաց...» (Էջ 583), «հրեշտակ ի մարդկանէ, մարմնատեսիլ քերորէ, երկնաւոր արքայուիհի» (Էջ 571):

Աղոթքի մեջ մեծ տեղ է հատկացվում հնչյունական ոճագիտությանը: Գրեթե բոլոր դավանանքներում աղոթքի բաղադրիչներից է առձայնութը, որով ստեղծվում է աղոթքի հիմնական բանաձևը: Աղոթական մանթրաներում ընդունված է հիմնականում ա հնչյունի կրկնությունը՝ պայմանավորված տարբեր հանգամանքներով: Լեզվական տեսանկյունից սա բացատրվում է նրանով, որ ա-ն ուժեղ ձայնավոր է, շեշտափոխական հնչյունափոխության գրեթե չի ենթարկվում, մեղեղային

է, պատահական չէ՝ պոեմում ամենահաճախ գործածվող ձայնավորը ան է: Գ. Նարեկացու ստեղծագործությունների բանաստեղծական արվեստի մասին խոսվել է, վերլուծվել: «Մատեան...»-ի առանձին հատվածներ պարզապես բանաստեղծական գլուխգործոցներ են, ինչպես ներբող-ներից Գլուխ Զ՝ նվիրված Աստվածամորը:

Վ. Առաքելյանը «Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը» գրքում բավականին հանգամանալից վերլուծել է կշռույթի, հնչերագի, բաղադայնույթի, առձայնույթի, բանաստեղծական մի շարք առանձնահատկություններ, մասնավորապես կատարել վանկերի, տողերի քանակի վերլուծություններ³¹: Հետաքրքիր է, որ ըստ հեղինակի վիճակագրական տվյալների՝ ա հնչյունը ամենահաճախական ձայնավորն է, մոտ 20%, մեր հաշվումները ևս նույն են ցուց տալիս: ԺԲ գլխի երկու հատվածներում գործածված 1058 հնչյուններից մոտ 30% ա հնչյունն է գործածված: Հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ քնարական պոեմում բազմաթիվ երևույթների արտահայտություն պայմանավորված է հոգեվիճակով: Խոսքի վերլուծության ժամանակ արտահայտության պլանը ներկայանում է իրու առավել ներեզզական պլան: Հնչյունային նյութի հետ մեկտեղ արտալեզզական ոլորտից այդ պլանում դրսնորվում է գոյաբանական սկզբունքը. տեղի է ունենում հնչյունի՝ որպես գիտակցության մեջ արտաքին երևույթի ընկալողական տեղապահի և անուղղակի ներկայացնեցի, գործառայնացնում³²: Գ. Նարեկացին անգամ քերականական ծևերի մեջ (մեր համոզմամբ) մեծ ուշադրություն է դարձնում հնչյունական կողմին. այսպես հրամայական եղանակի բաց վանկերին հաջորդում են ստորադասական եղանակի բայաձևներ, որոնք ոչ միայն իմաստային առումով են լրացնում, այլև հնչյունական: «Գծագրեա՛ քո արեամբ զմուտ սեմոց սենեկիս, Կերպացն՝ զքո նշանդ ի հետս ելից մաղթողիս, ամրացն՝ քո աջովդ գիանզստեանս խշտի, Մաքրեսցես ի խաղբից զծածկարան անկողնոյս, Պահեսցես քո կամաւրդ զտառապեալ անձն ոգույս, Անխարդախ արասցես քո շնորհեալ շունչ մարմնոյս, Կացուսցես շրջափակ զպար զարուի երկայնոյ, Կարգեսցես ի դիտի ընդդէմ դիւացն դասու» (Էջ 291):

Երկում յուրահատուկ դաշտ են ստեղծում նաև ան- նախածանցով բաղադրությունները՝ անկեղծութիւն, անապշելի, անկոխելի, անաղարտելի, անժամանակ: Այս բառերը մինչև օրս ել գործածական են, սակայն

³¹Տե՛ս Վ. Դ. Առաքելյան, Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Ե., 1975, Էջ 176-199:

³²Է. Ռ. Աթայան, Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Ե., 1981, Էջ 136:

տեղի է ունեցել այս բառերի իմաստային դաշտի կիրառության փոփոխություն³³, այս կառուցներն ունեն բացառողական նշանակություն, որոնք հակադրությունների միջոցով ստեղծում են բացառման կարգ: Գ. Նարեկացին, ի հակադրություն տաղերում գերիշխող գոյների բազմազանության, այստեղ սևի և սպիտակի, լուսի և խավարի հակադրությամբ բացահայտում է մարդ- էակի հոգու բոլոր ելեկցումները, միաժամանակ տիեզերքում՝ իբրև տիեզերաքաղաքացի՝ դառնալով մեծ բարեխոս Բանի և մարդու միջև:

Իբրև ամփոփում նկատում ենք հետևյալը. Գ. Նարեկացին աղոթքի բանաձևումներից մեծ ուշադրություն է դարձրել նախադասության ստորոգումներին, ընդհանրական բանաձևումները օգտագործելով՝ արտահայտել է անձնական ապաշխարանքը, որը վերածվել է անաձնականի: Մեծ աղոթարարը հմտորեն գործածել է լեզվի հնչյունական համակարգը՝ իբրև արտահայտության ձև, ինչպես նաև նրա բառակազմական բազմապիսի հնարներով ստեղծել է բացառման կարգ, որ աննախադեպ է հայ քրիստոնեական հավատքը գեղարվեստական խոսքով արտահայտելու բնագավառում:

А. Л. Юзбашян. Молитвенные резолюции в “Книге скорбных песнопений” Г. Нарекаци. Древняя литература многогранна и разнообразна. Молитвы являются одним из наиболее распространенных жанров как в устной, так и в письменной форме. Эти произведения по смыслу делятся на разные группы по содержанию, но текст структурно стабилен. Г. Нарекаци уделял большое внимание предикации предложения, используя обычные формулы, чтобы выразить личную трагедию, которая превратилась в всеобщую. Он умело использовал фонетическую систему как форму выражения, а также в создании категорий исключений.

A. L. Yuzbashyan. Resolutions of prayer From the creation “The book of Lamentations” by G. Narekatsi. Old literature is multifaceted. Prayers are the most widespread genre in written and verbal creations. These creations from the semantic side are divided into many groups, but the textual, structural position is similar. G. Narekatsi took notices from the praying resolutions to sentence predication, using general resolutions he expressed his own penance, that became universal. He used the phoneme system skillfully, as expression form, also with word-formative skills he created the expression category.

³³ Տե՛ս Գ. Բ, Զահոռվյան, Ժամանակակից հայերենի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989, էջ 47:

ԲԱՆԱԿԵՑ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՆՇՈՒՅԹԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՄԲՈՆՈՒՄԸ ԱՐԴԻ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բանասիր. գիտ. թեկնածու Ս. Ռ. Ավելյան
sargisavetyan@ysu.am, ԵՊՀ

Նշույթավորվածության գաղափարը լեզվաբանության մեջ առաջ քաշվել է. Տրուբեցկոյի կողմից՝ հնչույթային հակադրությունների ուսումնասիրության և որոշակի դիրքերում դրանց չեզոքացման հետ կապված: Այն հնչույթային հակադրությունները, որոնց մի անդամը բնութագրվում է մի որոշակի հատկանիշի առկայությամբ, իսկ մյուս անդամը՝ դրա բացակայությամբ, Ն. Տրուբեցկոյը կոչում է «պրիվատիվ հակադրություններ»: Ընդ որում տվյալ հատկանիշի առկայությամբ բնութագրվող անդամը համարվում է նշույթավորված, իսկ այդ հատկանիշից զուրկ անդամը՝ ոչ նշույթավորված: Նա իբրև նշույթավորված - ոչ նշույթավորված հակադրության օրինակ նշում է ձայնեղ-ոչ ձայնեղ (խոլ), ոնզային-ոչ ոնզային, շրթնայնացած-ոչ շրթնայնացած հակադրությունները³⁴:

Ո. Յակոբսոնը նշույթավորված - ոչ նշույթավորված հակադրության սկզբունքը հետևողականորեն կիրառում է քերականական և իմաստային կարգերի նկատմամբ: Սակայն Յակոբսոնի մոտ նշույթային հակադրության բնորոշման չափանիշը նախևառաջ իմաստային է: Ըստ այդմ՝ եթե նշույթավորված անդամը միանշանակ ցոյց է տալիս մի որոշակի հատկանիշի առկայությունը, ապա ոչ նշույթավորված անդամը երկիմաստ է. այն կարող է կիրառվել այդ հատկանիշի բացակայությունը նշելու համար, բայց կարող է կիրառվել նաև չեզոք, ընդհանրական իմաստով, որի դեպքում ընդհանրապես ոչինչ չի ասվում այդ հատկանիշի մասին: Այլ կերպ ասած՝ ոչ նշույթավորված անդամը ըստ համատեքստի կարող է արտահայտել մի կողմից՝ տվյալ հակադրության նշույթավորված

³⁴ Ste'v N. S. Trubetskoy, Principles of Phonology, translated by Christiane A. M. Baltaxe, 2nd printing, Berkeley and Los Angeles, 1971 [1969], էջ 75: Տրուբեցկոյի՝ նշույթավորվածության ըմբռնման մասին հանգամանորեն տե՛ս նաև՝ J. Gvozdanovic, Defining markedness // O. Miseska Tomic, (ed.), Markedness in synchrony and diachrony, Berlin, 1989, էջ 47-50:

անդամի հակադիր եզրի իմաստ, մյուս կողմից՝ տվյալ հակադրության տեսանկյունից չեզոք, ընդհանրական իմաստ³⁵:

Ռ. Յակոբսոնը նկատում է նաև, որ քերականական կարգերի դեպքում նշույթավորված և ոչ նշույթավորված ձևերի միջև առկա է ձևի և իմաստի հարաբերակցության որոշակի դիագրամային պատկերագրայնություն (diagrammatic iconicity), քանի որ իմաստային առումով ոչ նշույթավորված անդամը սովորաբար արտահայտության պլանում նույնպես լինում է ոչ նշույթավորված, որը դրանուրիվում է կամ գրոյական ձևաբանական արտահայտությամբ, կամ նշույթավորված անդամի համեմատությամբ ավելի սակավաթիվ ձևույթային ու հնչույթային կազմով³⁶:

Ձևաբանական նշույթավորված և ոչ նշույթավորված ձևերի տարրերակման յակոբսոնյան մյուս հարաշակը (parameter) վերաբերում է սինկրետիզմի երևոյթին, որի համաձայն՝ նշույթավորված անդամը ոչ նշույթավորվածի համեմատությամբ հաճախ ավելի սակավաթիվ ձևաբանական հակադրություններ է արտահայտում, այսինքն՝ ոչ նշույթավորված ձևաբանական անդամին հատուկ որոշ հակադրություններ կարող են չեզզանալ և բացակայել նշույթավորված անդամի պարագայում³⁷:

Բնական լեզվաբանության տեսության շրջանակներում նշույթավորվածության հասկացությունը նոր բովանդակություն է ձեռք բերում. ոչ նշույթավորված նշանակում է «բնական», իսկ նշույթավորված՝ «ոչ բնական»: Այդպես էլ ավելի քիչ նշույթավորված նշանակում է «ավելի բնական», իսկ ավելի շատ նշույթավորված՝ «ավելի քիչ բնական»: Այս կամ այն լեզվական ձևի բնական կամ ոչ բնական լինելը կախված է խոսողների կողմից տվյալ լեզվական միավորի ընկալման դյուրիխության աստիճանից: Ըստ այդմ՝ ավելի շատ կամ ավելի քիչ բնական նշանակում է «ավելի շատ կամ ավելի քիչ դյուրիխ մարդկային ուղեղի համար»³⁸: Այլ կերպ ասած՝ բնականության տեսանկյունից լեզվական բոլոր ձևերը հավասարաթեք և նույնքան դյուրիխ չեն խոսողների համար. ավելի քիչ նշույթավորված / ոչ նշույթավորված ձևերը ավելի հեշտությամբ են իրացվում հաղորդակցման

³⁵ Տե՛ս R. Jakobson, Russian and Slavic Grammar, Berlin/New York/Amsterdam, 1984, էջ 1-2, 47, 153:

³⁶ Տե՛ս R. Jakobson, Quest for the essence of language // R. Jakobson, Selected Writings, Vol. 2, Word and Language, The Hague - Paris, 1971, էջ 352 հզ., R. Jakobson, Implications of language universals for linguistics // J. Greenberg (ed.), Universals of Language, The M. I. T. Press, 1966 [1963], էջ 270:

³⁷ Յակոբսոնի՝ նշույթավորվածության ըմբռնման մասին առավել հանգամանորեն տե՛ս E. L. Battistella, The Logic of Markedness, Oxford University Press, 1996, էջ 19-34:

³⁸ Տե՛ս W. Mayerthaler, System-independent morphological naturalness // W. U. Dressler, W. Mayerthaler, O. Panogl, W. U. Wurzel, Leitmotifs in Natural Morphology, Amsterdam /Philadelphia, 1987, էջ 27, 48-50:

գործընթացում, ուստի խոսողների կողմից ենթագիտակցաբար դրանց նախապատվություն է տրվում ավելի դժվարընկալի ծևերի նկատմամբ³⁹:

Լեզվական ծևերի բնականության աստիճանը որոշվում է համընդհանուր բնականության մի շարք պարամետրերի միջոցով, որոնք ել իրենց հերթին ճանաչողական և նշանագիտական պայմանավորվածություն ունեն: Առավել կարևոր են համարվում հատկապես կառուցվածքային պարկերագրանության, ծևային միասնականության (միաձնության), կառուցվածքային թափանցիկության հարաչափերը⁴⁰: Լեզվական ծևերի նշույթային փոխհարաբերությունը դրսորվում է ինպես լեզվի յուրացման և գործածության, այնպես էլ նրա տարածամանակյա փոփոխության գործընթացում: Ըստ այդմ՝ ոչ նշույթավորված ծևերը սովորաբար ավելի՝ ա) տարածված և հաճախադեպ են լեզուներում, թ) վաղ են յուրացվում երեխաների կողմից, զ) հեշտությամբ են իրացվում հաղորդակցման գործընթացում, դ) քիչ են ազդեցության ենթարկվում լեզվական խանգարումների ժամանակ, ե) ավելի հաճախ են գործածվում, զ) պատմականորեն ավելի կայուն են լեզվական փոփոխությունների ժամանակ և այլն⁴¹:

Սակայն պետք է նկատի ունենալ, որ բնականության տարբեր հարաչափերը հաճախ միմյանց հակադիր միտումներ են ներկայացնում, այնպես որ մի հարաչափի տեսանկյունից բնական ծևը կարող է ոչ բնական լինել մեկ այլ հարաչափի դեպքում⁴²: Այդ առումով լեզուներում նշույթավորված ծևերը առաջանում են լեզվական տարբեր մակարդակներում, ինչպես նաև նոյն մակարդակում, գործող բնականության տարբեր հարաչափերի մրցակցային պայքարի արդյունքում⁴³: Արդ, լեզվական փոփոխությունների ժամանակ մի լեզու կարող է նախապատվություն տալ բնականության մի հարաչափի, իսկ մեկ այլ լեզու՝ այլ հարաչափի՝ կախված այն բանից, թե որ հարաչափի միտումն է ավելի համահունչ տվյալ լեզվի

³⁹ Ste' u W. U. Wurzel, On Markedness// Theoretical Linguistics, Vol. 24, No. 1, 1998, էջ 60-65:

⁴⁰ Ste' u W. Mayerthaler, Նշվ. աշխ., էջ 48-49, G. Crocco Galéas, The Parameters of Natural Morphology, Padova, 1998:

⁴¹ Ste' u W. Mayerthaler, Morphologische Natürlichkeit, Wiesbaden, 1981, էջ 4-5, W. U. Wurzel, On Markedness..., էջ 56-61:

⁴² Ste' u W. U. Dressler, Naturalness and morphological change // B. D. Joseph, R. D. Janda (eds.), Handbook of Historical Linguistics, Blackwell Publishing, 2003, էջ 461-471, W. U. Dressler, M. Kilani-Schoch, Natural Morphology // A. Hippisley, G. Stump (eds.), The Cambridge Handbook of Morphology, Cambridge University Press, 2016, Ch. 14, էջ 356-368:

⁴³ Ste' u W. U. Dressler, K. Dziubalska-Kołaczyk, R. Spina, Sources of markedness in language structures// Folia Linguistica Historica XXII/1-2, 2001, էջ 103-135:

համակարգի բնորոշիչ հատկություններին: Յուրաքանչյուր լեզվի գերիշխող (այն է՝ կենսունակ և տիպային բարձր հաճախականություն ունեցող) օրինաչափությունները կազմում են այդ լեզվի համակարգի բնորոշիչ հատկությունները, որոնք սովորաբար համարանական ընդհանրացման միտում են ցուցաբերում, եթե նոյնիսկ դրանք համընդհանուր բնականության հարաչափերի տեսանկյունից այնքան էլ բնական ծևեր չեն: Ընդունված է ասել, որ նման դեպքերում համակարգային համահունչությանը կամ համակարգային բնականությանը նախապատվություն է տրվում համընդհանուր, վերհամակարգային բնականությանը⁴⁴:

Զ. Գրինբերգը և այլ հետազոտողներ նշույթավորվածության հասկացությունը բնորոշում և դիտարկում են նաև մի շարք այլ հարաչափերի տեսանկյունից: Նշույթավորվածության արդի ըմբռնման հարցում հատկապես մեծ է Զ. Գրինբերգի ներդրումը: Նա քերականական ծևերի հաճախականության հաշվարկ է կատարում սանսկրիտի, լատիներենի, ռուսերենի և ֆրանսերենի տեքստերի հիման վրա՝ ցույց տալով, որ կիրառահաճախականության որոշակի հարաբերակցություն է առկա քերականական ծևերի միջև, և որ քերականական հակադրությունների դեպքում ոչ նշույթավորված անդամը նշույթավորված անդամի համեմատությամբ սովորաբար աչքի է ընկնում բարձր կիրառահաճախականությամբ: Հետագա բազմաթիվ հետազոտություններ վերահաստատում են Գրինբերգի այդ դիտարկումը: Ըստ այդմ հայտնի է, որ ա) թվի քերականական կարգի պարագայում եզակին ավելի հաճախադեպ է, քան հոգնակին, իսկ երկակին հոգնակից էլ ավելի ցածր հաճախականություն ունի, բ) ուղղի հոլովածերը ավելի հաճախագործածական են, քան թեք հոլովածերը, գ) սահմանական եղանակն ավելի հաճախադեպ է, քան մյուս եղանակները, դ) ներկան ժամանակաձևերից ամենահաճախագործածականն է, ե) սահմանական եղանակի դեպքում առավել հաճախագործածական է եզ. 3-րդ դ. ծևը, իսկ հրամայական եղանակի դեպքում՝ եզ. 2-րդ դ. ծևը և այլն⁴⁵:

⁴⁴ Տե՛ս W. U. Wurzel, System-dependent morphological naturalness in inflection // W. U. Dressler, W. Mayerthaler, O. Panagl, W. U. Wurzel, նշվ. աշխ., էջ 59-98, W. U. Dressler, Naturalness and morphological..., էջ 461-471:

⁴⁵ Տե՛ս J. H. Greenberg, Language Universals: With Special Reference to Feature Hierarchies, reprinted ed., Berlin/New York, 2005 [1966], էջ 31-51, J. Bybee, Morphology: A Study of the Relation Between Meaning and Form, Amsterdam/Philadelphia, 1985, էջ 50-54, 74-77, M. Haspelmath, Creating economical morphosyntactic patterns in language change // J. Good (ed.), Linguistic Universals and Language Change, Oxford University Press, 2008, էջ 188, 191-193:

Ոչ նշույթավորված անդամի համար Գրինբերգի նշած մյուս առանձնահատկությունը համեմատաբար ավելի բարձր աստիճանի անկանոնությունն է նշույթավորված անդամի նկատմամբ: Ընդ որում՝ այդ հանգամանքը պայմանավորված է ոչ նշույթավորված անդամի բարձր կիրառահաճախականությամբ (տե՛ս նաև ստորև)⁴⁶:

Իհարկե լեզվական նշույթավորվածության դրսևորումները դիտարկելիս Գրինբերգը հաշվի է առնում նաև իր նախորդների, հատկապես՝ Ռ. Յակոբսոնի առաջարկած բնորոշումները, դրանք են՝ ոչ նշույթավորված անդամի երկիմաստ բնույթը, նրա հաճախադեպ գրոյական ծևաբանական արտահայտությունը, նշույթավորված անդամի դեպքում սինկրետիզմի համեմատաբար բարձր աստիճանը, և գործնականում ցույց է տալիս այդ տարբեր հատկանիշների սերտ փոխկապակցվածությունը: Այդուհանդերձ, նաև կիրառահաճախականությունը դիտում է որպես կարևորագույն և առավել վստահելի ցուցիչ տվյալ հակադրության անդամների նշույթավորված կամ ոչ նշույթավորված կարգավիճակը պարզելու հարցում⁴⁷: Դրանով իսկ՝ Գրինբերգը էական փոփոխություն է մտցնում նշույթավորվածության հասկացության ըմբռնման մեջ:

Ինչպես տեսանք, նշույթավորվածության սկզբնական (Տրուբեցկոյի և Յակոբսոնի) ըմբռնման համաձայն՝ նշույթավորվածության հարաբերությունները դրսևորվում են միայն երկանդամ հակադրությունների պարագայում, ընդ որում նշույթավորված եզրույթը սկզբնապես նշանակում էր «օժտված՝ բնութագրվող որևէ հնչույթային/հմաստային հատկանիշով»: Մինչդեռ Զ. Գրինբերգը նշույթավորված - ոչ նշույթավորված հակադրությունը մեկնաբանում է կիրառահաճախականության տեսանկյունից՝ նշույթավորված տերմինը գործածելով «ավելի սակավադեպ, ավելի քիչ հաճախադեպ», իսկ ոչ նշույթավորված տերմինը՝ «ավելի հաճախադեպ» հմաստով: Բացի այդ, նշույթավորվածության հարաբերությունը ըստ Գրինբերգի աստիճանական (սանդղակային) բնույթ ունի և բնավ էլ չի ենթադրում երկանդամ հակադրություն: Օրինակ, անվանական թվի քերականական կարգի դեպքում նշույթավորվածության հարաբերության սանդղակի վրա եզակի թիվը հանդես է գալիս որպես առավել ոչ նշույթավորված, իսկ երկակի թիվը՝ որպես ամենից նշույթավորված անդամ, մինչդեռ հոգնակին ավելի նշույթավորված է եզակի, բայց ավելի քիչ նշույթավորված է երկակիի նկատմամբ: Ընդ որում՝ այս երեք անդամների

⁴⁶ Տե՛ս J. H. Greenberg, նշվ. աշխ., էջ 29, 68-69. հմմտ. J. Bybee, Markedness: iconicity, economy, and frequency // J. Jung Song (ed.), The Oxford Handbook of Linguistic Typology, Oxford University Press, 2010, Ch. 7, էջ 134:

⁴⁷ Տե՛ս J. H. Greenberg, նշվ. աշխ., էջ 25-32, 65-67:

Նշույթավորվածության աստիճանը համապատասխանում է նրանց կիրառահաճախականությանը, որի համաձայն՝ եզակին բնութագրվում է որպես ամենահաճախադեպ, հոգնակին՝ ավելի քիչ հաճախադեպ (less frequent), իսկ երկակին՝ ամենաքիչ հաճախադեպ⁴⁸:

Հետագայում տարբեր հետազոտողների կողմից առաջարկվում են լեզվական նշույթավորվածության տարբերակման նաև այլ չափանիշներ, և նշույթավորվածություն տերմինը լեզվաբանության մեջ գործածվում է տարբեր իմաստներով⁴⁹: Բայց Զ. Գրինբերգի նշած երկու հիմնական գործոնները՝ կիրառահաճախականությունը և տարածամանակյա գործընթացները, շարունակում են առանցքային դեր խաղալ ինչպես լեզվական երևույթների նշույթավորված կամ ոչ նշույթավորված կարգավիճակը պարզելու, այնպես էլ համաժամանակյա լեզվական ընդհանուր օրինաչփությունները (լեզվական ընդհանրույթները) բացատրելու հարցում⁵⁰:

Հարկ է նշել, որ անցյալ դարի 70-ական թթ. սկսած՝ ընդհանուր լեզվաբանական տեսության մեջ տեղի են ունենում մի շարք կարևոր զարգացումներ, որոնց շնորհիվ հաղթահարվում են սոսյուրյան երկու հիմնական՝ համաժամանակություն-տարածամանակություն և լեզու-խոսք հակադրությունները, և վերանայվում է դրանց փոխհարաբերությունը: Ըստ այդմ՝ հայտնի է, որ մի կողմից՝ համաժամանակյա օրինաչփությունները բացատրվում և լիովին հասկանալի են դառնում դրանց ձևավորման տարածամանակյա գործընթացների քննությամբ⁵¹, մյուս կողմից՝ լեզվական փոփոխությունների քննությունը ու ուղղվածությունը մեծապես պայմանավորված են համաժամանակյա կտրվածքում լեզվի գործառության (լեզվագործածության) առանձնահատկություններով⁵², իսկ վերջիններս, իրենց

⁴⁸ Ste' u J. H. Greenberg, նշվ. աշխ., էջ 31-32, 66-67:

⁴⁹ Ste' u M. Haspelmath, Against markedness (and what to replace it with) // Journal of Linguistics, 42, 2006, էջ 25-43, նաև 'J. Bybee, Markedness..., էջ 135-142:

⁵⁰ Ste' u J. Bybee, Markedness..., էջ 142-146, W. Croft, Typology and Universals, 2nd edn., Cambridge University Press, 2003, էջ 110-117, E. D. Moravcsik, Introducing Language Typology, Cambridge University Press, 2013, էջ 243-274, J. Bybee, The diachronic dimension in explanation, In: J. Hawkins (ed.), Explaining Language Universals, Oxford, 1988, էջ 350-379, J. Bybee, Language change and universals // R. Mairal, J. Gil (eds.), Linguistic Universals, Cambridge University Press, 2006, էջ 179-194:

⁵¹ Ste' u J. H. Greenberg, Rethinking linguistics diachronically // «Language», Vol. 55, No 2, 1979, էջ 275-290, J. Bybee, The diachronic dimension..., էջ 350-379, Նոյնի՞ Լեզվագործածությունները:

⁵² Ste' u J. Bybee, From usage to grammar: the mind's response to repetition. // Language, 82, 2006, էջ 711-733, J. Bybee, C. Beckner, Usage-based theory // B. Heine, H. Narrog (eds.), The Oxford Handbook of Linguistic Analysis, Oxford University press, 2010, էջ 827-855, J. Bybee, C. Beckner, Language use, cognitive processes and linguistic change // C. Bowern,

հերթին, անմիջականորեն բխում են առավել արդյունավետ հաղորդակցման, լեզվախոսության և խոսքի ընկալման փոխկապակցված գործընթացի առավել արդյունավետ իրացման պահանջից⁵³: Այդ առումով կիրառահաճախականությունը (the frequency of use)՝ հոգելեզվաբանական և ճանաչողական գործընթացների վրա ունեցած իր հետևանքային ազդեցություններով, արդի լեզվաբանության մեջ դիտվում է որպես լեզվակառուցվածքի համաժամանակյա օրինաչափությունների և տարածամանակյա փոփոխությունների բնույթը և ուղղվածությունը պայմանավորող չափազանց կարևոր գործոն⁵⁴, մանավանդ եթե նկատի ունենանք, որ լեզվական խնայողության միտումը նույնպես, որպես կանոն, գործում է լեզվական ծևերի բարձր կիրառահաճախականության դեպքում⁵⁵:

Ինչ վերաբերում է կիրառահաճախականության հետևանքային ազդեցություններին, նշենք, որ, օրինակ, ծևաբանական-համարանական փոփոխությունների դեպքում այն պահպանից ազդեցություն է ունենում շնորհիվ այն բանի, որ կրկնությունը զորեղացնում է լեզվական ծևերի հիշողական մտապատկերները՝ դրանք դարձնելով առավել կայուն (դժվարփոփոխելի): Ուստի լեզվական անկանոնությունները (այն է՝ նախկին ծևաբանական և ծևահնչույթային գործուն օրինաչափությունների վերապրուկային մնացորդները) հաճախագործածական ծևերում պահպանվում են համեմատաբար երկար այդ ծևերի հիշողական մտապատկերների զորեղության շնորհիվ: Մինչդեռ համեմատաբար սակավագործածական ծևերի փոխարեն հեշտությամբ համարանական նոր ծևեր են կազմվում ավելի կենսունակ օրինաչափությունների հետևողությամբ: Բացի այդ, հարացուցի ներսում առավել հաճախագործածական ծևը հանդես է գալիս

B. Evans (eds.), *The Routledge Handbook of Historical Linguistics*, London and New York, 2015, էջ 503-518, W. Croft, *Typology and Universals...*, էջ 110-117:

⁵³ Տե՛ս E. D. Moravcsik, *Introducing Language Typology*, Cambridge University Press, 2013, էջ 243-274, J. A. Hawkins, *Efficiency and Complexity in Grammars*, Oxford University Press, 2004, Նոյնի՞ *Cross-Linguistic Variation and Efficiency*, Oxford University Press, 2014:

⁵⁴ Տե՛ս J. Bybee, *From usage to grammar...*, էջ 711-733, Նոյնի՞ *Phonology and Language Use*, Cambridge University Press, 2004 [2001], էջ 8-13, J. Bybee, P. Hopper (eds.), *Frequency and the Emergence of Linguistic Structure*, Amsterdam/Philadelphia, 2001, J. Bybee, C. Beckner, *Language use, cognitive processes...*, էջ 503-518, M. Haspelmath, *Frequency vs. iconicity in explaining grammatical asymmetries*. // *Cognitive Linguistics* 19(1), 2008, էջ 1-33:

⁵⁵ Տե՛ս M. Haspelmath, *Creating economical morphosyntactic patterns in language change* // J. Good (ed.), *Linguistic Universals and Language Change*, Oxford University Press, 2008, էջ 185-214:

որպես հիմնածն, և հարացուցի համաբանական համահարթեցումը սովորաբար տեղի է ունենում այդ հիմնածնի հենքի վրա⁵⁶:

Ի դեպ, լեզուներում ոչ նշույթավորված ձևերի հաճախադեպ գրոյական ձևաբանական արտահայտությունը, որը բացատրվում է խնայողության և հավելուրդայնությունից խուսափելու միտումով, դարձյալ պայմանավորված է կիրառահաճախականության պահպանից ազդեցությամբ, քանի որ տվյալ դեպքում առավել հաճախագործածական ձևը սովորաբար պահպանվում է անփոփոխ, իսկ ավելի սակավագործածական նշույթավորված ձև(եր)ը տարբերակից ցուցիչներ է(են) ստանում⁵⁷:

Նմանապես, եզակի-հոգնակի հակադրության մեջ եզակի ձևի ոչ նշույթավորված կարգավիճակը բացատրվում է այն հանգամանքով, որ խոսքի մեջ իրական աշխարհի առարկաների և երևույթների մեջ մասը ավելի հաճախ անհատականացվում և հիշատակվում է եզակի ձևով: Դրա շնորհիվ եզակիությունը կազմում է այդ առարկաներին հատուկ իմաստի անմիջական մասը: Միևնույն ժամանակ լեզվական ձևերի բարձր կիրառահաճախականությունը սովորաբար հանգեցնում է արտասանական ջանքերի և լեզվական արտահայտության միջոցների խնայողության (economy), որը տվյալ դեպքում դրսևորվում է հաճախագործածական ձևերի գրոյական ձևաբանական արտահայտությամբ կամ նրանց համեմատաբար ավելի սակավաթիվ ձևույթային և հնչույթային կազմով⁵⁸:

Մինչդեռ խնայողության միտումի հակադիր միտումը՝ տրամագրային պատկերագրայնությունը, փորձում է որոշակի կառուցվածքային համապատասխանություն հաստատել լեզվական միավորների իմաստի և ձևի միջև: Ըստ այդմ՝ լեզվական ձևերի նշանակիչների ձևային փոխհարաբերությունը գուգահեռ է կամ տրամագրային կերպով (diagrammatically) արտացոլում է համապատասխան նշանակելիների իմաստային փոխհարաբերությունը⁵⁹: Այդ տեսանկյունից միանգամայն օրինաչափ և սպասելի է, որ, ասենք, գոյականների մեջ մասը, որոնց դեպքում եզակիությունը հանդես է գալիս որպես նրանց առարկայավերաբերական

⁵⁶ Տե՛ս J. Bybee, Frequency of Use and the Organization of Language, Oxford University Press, 2007, Introduction, էջ 10-11, Ch. 3, էջ 41-69, Նոյնի Phonology..., էջ 12, 113-116, Նոյնի Morphology..., էջ 49-78, 117-122, նաև՝ M. Haspelmath, A. D. Sims, Understanding Morphology, 2nd edn., Hodder Education, An Hachette UK Company, 2010, էջ 273-276:

⁵⁷ Տե՛ս M. Haspelmath, Creating economical..., էջ 207-210, նաև՝ J. Bybee, Morphology..., էջ 52-58, J. Bybee, Markedness..., էջ 144-145:

⁵⁸ Տե՛ս J. Bybee, Markedness..., էջ 143-146. հմտ. M. Haspelmath, Against markedness..., էջ 47, M. Haspelmath, Creating economical..., էջ 185-214:

⁵⁹ Տե՛ս J. Bybee, Frequency of Use and the Organization..., Ch. 3, էջ 41-44, Նոյնի Markedness..., էջ 143:

(առարկայանից) իմաստի (referential meaning) անմիջական մաս, նոր իմաստային բաղադրիչ (այն է՝ հոգնակիություն) արտահայտելու համար սովորաբար համապատասխան ձևային փոփոխության է ենթարկվում: Մյուս կողմից, ուշագրավ է, որ որոշ լեզուներում մի խումբ գոյականների պարագայում, որոնց նշանակյալները իրական աշխարհում բնական կերպով հանդես են գալիս խմբերով կամ զոյգերով, և որոնք խոսքի մեջ ավելի հաճախ հիշատակվում են հավաքական կերպով, հոգնակի ձևն է հանդես գալիս որպես եզակի-հոգնակի հակադրության ոչ նշոյթավորված անդամ, այսինքն՝ որպես հիմնական ձև: Դա ակնհայտ երևում է այն բանից, որ ինչպես լեզվի պատմական զարգացման, այնպես էլ երեխաների կողմից լեզվի յուրացման գործընթացում այդ կարգի լեզվական ձևերի համարանական համահարթեցումն ու կանոնավորումը տեղի է ունենում ոչ թե եզակի ձևի (ինչպես լինում է սովորաբար), այլ հոգնակի ձևի հիման վրա: Նշոյթավորվածության ընդհանուր սկզբունքներից նմանատիպ շեղումները *P. Tiersma* բնորոշում է որպես տեղային (մասնավոր) նշոյթավորվածության (local markedness) արտահայտություն: Նա միևնույն ժամանակ նշում է, որ տեղային նշոյթավորվածության սկզբունքը, որը մրցակցային հակադրության մեջ է գտնվում ընդհանուր նշոյթավորվածության (general markedness) հիմնական սկզբունքի նկատմամբ, ոչ պարտադիր բնույթ է կրում և կարող է հաղթահարվել ընդհանուր նշոյթավորվածության սկզբունքի կողմից⁶⁰: Ըստ այդմ՝ տեղային նշոյթավորվածության սկզբունքը այս կամ այն լեզվում կարող է գործել, բայց կարող է նաև չգործել՝ ճնշվելով լեզվում առավել գերիշխող ընդհանուր նշոյթավորվածության սկզբունքի կամ, *M. Haspelmath* բնորոշմամբ, լեզվական համակարգային ճնշման միտումի կողմից⁶¹: Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ տեղային նշոյթավորվածության երևույթը լեզուներում ոչ միշտ է համապատասխան լեզվական արտահայտություն ստանում, իսկ դրա առանձին (սահմանափակ) դրսւորումները ընդհանուր նշոյթավորվածության հիմնական սկզբունքից ընդամենը շեղումներ (բացառություններ) են ներկայացնում: Այդուհանդերձ, թե՛ ընդհանուր նշոյթավորվածության սկզբունքը, թե՛ տեղային նշոյթավորվածության սկզբունքը յուրովի հաստատում են լեզվական

⁶⁰ Տե՛ս *P. M. Tiersma*, Local and general markedness // «Language», Vol. 58, No. 4, 1982, էջ 832-849:

⁶¹ Տե՛ս *M. Haspelmath*, On system pressure competing with economic motivation // *B. MacWhinney, A. Malchukov, E. Moravcsik* (eds.), Competing Motivations in Grammar and Usage, Oxford University Press, 2014, էջ 197-208:

ձևերի նշույթավորված կամ ոչ նշույթավորված կարգավիճակը պայմանավորող գործոնների շարքում կիրառահաճախականության չափազանց կարևոր դերը. ընդհանուր նշույթավորվածության սկզբունքը անմիջականորեն պայմանավորված է լեզվական միավորների նշանակյալների մեծագույն մասին, իսկ տեղային նշույթավորվածության սկզբունքը՝ նրանց մի առանձին (մասնավոր) խմբին բնորոշ լեզվագործածության բարձր հաճախականությամբ:

Արդ, այս և նման բազմաթիվ փաստերը ակնհայտորեն ցույց են տալիս, որ լեզվական նշույթավորվածության երևոյթի դրսևորումների մեծագույն մասը անմիջականորեն պայմանավորված է և հեշտությամբ բացատրվում է կիրառահաճախականության գործոնով⁶²:

Այսպիսով՝ Պրագայի լեզվաբանական դպրոցի շրջանակներում Ն. Տրուբեցկոյի կողմից առաջ քաշված նշույթավորվածության հասկացությունը իր հետագա զարգացման ընթացքում բովանդակային էական փոփոխության է ենթարկվել. նշույթավորված տերմինը, որը սկզբնապես նշանակում էր «օժտված՝ բնութագրվող որևէ հնչույթային/իմաստային հատկանիշով», արդի լեզվաբանական տեսության մեջ հիմնականում գործածվում է «առավել սակավադեպ, ոչ սպասելի, ոչ բնական, ճանաչողական առումով դժվար», իսկ ոչ նշույթավորված տերմինը՝ «առավել հաճախադեպ, սպասելի, բնական, ճանաչողական առումով դյուրին» իմաստով: Ընդ որում կիրառահաճախականությունը դիտվում է որպես լեզվական ձևերի նշույթավորվածության փոխհարաբերությունը պայմանավորող չափազանց կարևոր գործոն:

C. P. Аветян – Понимание соотношения между маркированностью и частотностью употребления в современной лингвистике.

– Понятие маркированности, которое было введено в употребление Н. Трубецким в 1930-годах в контексте межязыкового изучения фонологических оппозиций, претерпело важные содержательные изменения в дальнейшем развитии и употреблялось в разных значениях в лингвистике. Первоначально, член оппозиции, характеризованный наличием какого-либо фонологического признака, был назван маркированным членом, а член, характеризованный его отсутствием, считался немаркированным. Иначе говоря, термин ‘маркированный’ в своем первоначальном значении обозначал ‘имеющий признак’, а термин ‘немаркированный’ – ‘лишенный признака’. Однако, теперь термин ‘маркированный’ очень часто употребляется в значении ‘необыкновенный,

⁶²Տե՛ս M. Haspelmath, Against markedness..., էջ 43-49, J. Bybee, Markedness..., էջ 142-146:

неожиданный, редкоупотребительный, неестественный, когнитивно трудный', а термин 'немаркированный' – в значении 'обыкновенный, ожиданный, частоупотребительный, естественный, когнитивно нетрудный'. В тоже время многие лингвисты приводят доводы в пользу того, что частотность форм воздействует на их отношения маркированности. Следовательно, частотность является не просто одним из коррелятов маркированности, но в самом деле главным определяющим эффектом маркированности.

S. R. Avetyan – The Understanding of the Relationship Between Markedness and Frequency of Use in Modern Linguistics. – The concept of markedness introduced by N. Trubetzkoy in the context of a cross-linguistic study of phonological oppositions in the 1930s, has undergone essential content changes in the subsequent development and has been used in various senses in linguistics. Originally, the member of the opposition, characterized by the presence of a certain phonological feature, was called the 'marked' member, and the member characterized by its absence, was considered 'unmarked'. To put it differently, the term 'marked' in its original sense meant 'mark-bearing' (merkmaltragend), and the term 'unmarked' meant 'markless' (merkmallos). However, now the terms 'marked' and 'unmarked' are very often used to mean 'unusual, not expected, non-frequent, unnatural, cognitively difficult' vs. 'usual, expected, frequent, natural, cognitively easy'. At the same time most linguists argue that the frequency with which forms are used influences their markedness relations. Therefore, frequency is not just one correlate of markedness, but in fact the major determinant of markedness effects.

«ՈՏՆԱՄԱՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Բանասիր. գիտ. թեկնածու L. Ա. Ղամոյան

Ուրնաման «ոտքերի հագնելիք, կաշվից կամ այլ նյութերից կարած հարմարանք, որ կրում են ոտներին» ընդհանուր հասկացության կողքին Ա. Սուքիասյանը տալիս է հետևյալ հոմանշային ծևերը՝ կոչիկ, ուրաման, օդ (իք) (հնց.), ուրաց աման, կամակ (հզվու.), մուճակ, մուշկ (մուճակ), հողաթափ, երեսուակ (երեսը բաց փայտե կոչիկ, նալիկ), նալիկ (բաղնիքի), պրեխ (բրբ.), ուրնոց, ուրից, հարաման, հագնիչ, սոլ (հասարակ կոչիկ, մաշիկ), ուրից աման, խոնդուռա (հնամաշ) և այլն⁶³:

Ըստ <Աճառյանի և Գ. Զահորյանի ստուգաբանությունների՝ փորձենք հնարավորինս անդրադառնալ գրական արևելահայերենում առավել հանդիպող ուրնաման իմաստն արտահայտող որոշ բառանվանումների ծագմանը:

Ինչպես հայտնի է, արդի հայերենում ամենահաճախականը կոչիկ-ն է:

Կոչիկ. «կաշվից կամ այլ նյութերից կարվող, ոտքին հագնելու հարմարանք, ոտնաման»⁶⁴: Կոչիկ-ը իրանական փոխառություն է, այն գործածական է եղել գրաբարում, այժմ է՝ արդի գրական արևելահայերենում⁶⁵:

Գրական հայերենում կոչիկ բառանվանումից կազմված բաղադրություններից են՝ կրկնակոչիկ (խոնավությունից պահպանելու համար կոչիկի վրա հագնելու ռետինե ոտնաման), ջրակոչիկ (ջրի մեջ հագնելու կոչիկ), վերնակոչիկ (կանացի երկարաճիտ ձմեռային կոչիկ), կիսակոչիկ (կարճավիզ կոչիկ, մուճակ) և այլն:

Մաշիկ. «բարձրակրունկ սրաքիթ ոտնաման» (ԱՀԲԲ, 969): Ըստ <Աճառյանի՝ բառի ճիշտ ծևն է մաշիկ-ը (Վրաց. մաշիա «կրունկով կոչիկ»), այլ ոչ թե՝ մաշիք, որ ոչ ճիշտ մեկնաբանությամբ՝ «հին կոչիկ» իմաստն ունի մաշել բայի նմանությամբ: Մաշիկ-ը մաշ բառի նվազականն է, որը

⁶³ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 4, Ե., 1969, էջ 114 (այսուհետև՝ ԺՀԲԲ): Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Ե., 1967, էջ 519:

⁶⁴ Է. Բ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976, էջ 757 (այսուհետև՝ ԱՀԲԲ):

⁶⁵ <Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հ. 2, Ե., 1973, էջ 687 (այսուհետև՝ ՀԱԲ): Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն, 2-րդ մաս, Ե., 2012, էջ 30:

լավ երևում է մաշակար կամ մաշկակար (կոշկակար) բաղադրություններում: Չուրինաշվիլին վրացական բառը համարում է արաբական, բայց այն չի հավաստվում (<ԱՐ, 3, 360)⁶⁶:

Բարբառներում «մաշիկ» իմաստն ունեն նաև չափուա (չուստ, մաշիկ), չչչ (անկրունկ մաշիկներ) բառանունները:

Տրեխ. «1. Կիսամշակ կաշվից տանը պատրաստված ոտքի անկրունկ հագնելիք, չարուխ: 2. (գվո.): Երկաթե կարկատան արորի կամ գութանի վլա: 3. Ընդհանրապես՝ ոտնաման» (ԱՀԲԲ, 1460)⁶⁷: <. Աճառյանը հիշատակում է արաբ. *tirāq* «կոշիկի կաշի, փապուճից կազմված կաշվաթերթ, վահանապատված կաշի» բառը (<ԱՐ, 4, 435): Գ. Զահուկյանը «տրեխ» («կաշվե կոշիկ, տրեխ»)-ը փոխառություն է համարում իրանական աղբյուրից, որի բուն աղբյուրը հայտնի չէ⁶⁸: Բարբառներում այդ իմաստն ունեն նաև կոխոնձ (Ար., Լ.), պապոճ (Քսր.), լեկ (Խոտջ.) և այլ բառանուններ:

Մուճակ. «մի տեսակ ոտնաման, փապուճ, չուստ» (ԱՀԲԲ, 1038): Փոխառություն է իրանական աղբյուրից (<ԱՐ, 3, 357): <. Աճառյանը, Գ. Զահուկյանը տալիս են «(կանացի) կոշիկ» բացատրությունը, որից էլ՝ մուճակագործ, մուճակակար նոր բաղադրությունները (<ԱՐ, 538):

Արդի գրական հայերենում հանդիպում ենք նաև ոտնամանի հետևյալ տեսակները՝ *հողաթափ* (կիսաբաց երեսով և առանց կրունկների ոտնաման), *կաճյակ* (թաղիքից պատրաստվող ձմռան տաք ոտնաման) և այլն:

Ի տարբերություն գրական հայերենի՝ բարբառների ընծեռած նյութը մեզ ավելի մեծ հնարավորություններ է տալիս՝ ներկայացնելու «ոտնաման» բառանվանումների գուգաբանությունները՝ որոշ չափով բացահայտելով դրանց առնչություններն արդի գրական հայերենի հետ: Բարբառներում և խոսվածքներում ուրնաման հասկացությունը (վննաման, ոննաման, ուրնաման//ուրաման, օդնաման, ուրացաման, ուրքի աման) ունի բառային բազմաթիվ տարբերակներ: Անդրադառնանք առավելապես գործածական տարբերակներից մի քանիսին:

⁶⁶ Նշենք, որ այս բառանուններից շատերը համանունական շարքի անդամներ են և՝ գրական հայերենում, և՝ բարբառներում: Օրինակ՝ *մաշիկ* բառն արդի գրական հայերենում ունի նաև «չմշկածաղիկ» իմաստը (տե՛ս՝ ԱՀԲԲ, էջ 969), իսկ, օրինակ, Խարբերդում գործածում են նաև «ունելի» իմաստով: Տե՛ս՝ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 4, Ե., 2001, էջ 26 (այսուհետև՝ ՀՀԲԲ):

⁶⁷ Լ. Հովհաննիսյանը հետզրաբարյան շրջանից է համարում՝ սանդալ, ուրնաման, պրեխ բառերը, նաև՝ սանդալ ծնից Փ. Բուզանդն ունի սանդալաւոր բառը:

⁶⁸ Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան Ե., 2010, էջ 73 (այսուհետև՝ ՀԱՐ):

Չմուշկ. «հողաթափ, մաշիկ, չմուշկ»: Չմուշկը վկայված է մեկ անգամ՝ 13-րդ դարից: Փոխառություն՝ պարսկերեն Շամշակ-ից (<ԱԲ, 3, 629): «Չմուշկ» ասելով՝ այժմ առաջին հերթին հասկանում ենք «պողպատյա շեղբաձև սահուկ», որ ամրացնում են կոշիկների տակ՝ սառուցի վրա սահելու համար», ապա՝ «(զվ.) պայտած կրունկներով սրաքիթ կոշիկ» բառը (ԱՀԲԲ, 2, 1162): Այս արմատից ունենք նաև անվաչմուշկ (անիվներ ունեցող չմուշկ) բառաբարդությունը:

Ճղզմա. գործածվում է որոշ բարբառներում (Կր., Զվի., Ախց.)՝ «հողաթափ, փափուչ» իմաստով (<ԼԲԲ, 3, 381):

Չուսկ. այս բառանունը հանդես է գալիս համանունական շարքով. չուսկ (1) «1. արագ, շուտ (Թբ., Ղրբ., Ար., Պլ., Նն., Սբ. և այլուր՝ չուշն արտասանությամբ), 2. արագորեն, շուապով, 3. արթուն, զգաստ (Խրբ.), 4. գոտեպնդված (Վն.), 5. աշխույժ, արագաշարժ» (<ԼԲԲ, 4, 448) իմաստներով. այդտեղից «Ով չուսկ, նա կուշդ»⁶⁹ առածը (այս բառանունը «արագ, ժիր, փութելոտ, ճարպիկ» իմաստով վկայված է նաև <Աճայանի աշխատությունում⁷⁰) և չուսկ (2) (Ար., Ղրբ. (Գրս.)// չուսկ (Թբ., Խտջ.)//չուշդ (Ղրբ. (Գնձ.) «1. տանը հագնելու անկրոնկ թեթև կոշիկ՝ երեսը կիսաբաց, 2. կոշիկ» (<ԼԲԲ, 4, 449) իմաստներով:

Սապոկ. «տղամարդու երկարաճիտ կոշիկներ (հատկապես զինվորական)» (Ար. Թբ. Կր. (Զվի.)) (<ԼԲԲ, 5, 268): Արդի հայերենի բառարանում արձանագրված է սապոկ տարբերակը՝ «ճիտքավոր՝ երկարաճիտ կոշիկ» բացատրությամբ (ԱՀԲԲ, 1278): Այս բառանունը համատարած գործածվում է գրական հայերենի խոսակցական տարբերակում, թեև դիտվում է որպես օտարաբանություն:

Չարոխ//չարուխ. «1. փափուկ կիսամշակ կաշուց տանը կարած ոտնաման՝ երեսը բաց և առանց կրունկի, որ ոտքին են ամրացնում կաշվե թելերով» (Ար., Գրս., Պրտ., Մրզ., Ամս., Կր., Կար., Ակն., Մշ., Վն., չարջի՝ Պրտ., Մրշ.), 2. սայի անիվների երկաթե օղերն ամրացնող երկաթներ (Վն.), 3. գութանի մաս (Վն.), (<ԼԲԲ, 4, 392): Թեև այս բառաձևն արձանագրված չէ արդի գրական հայերենի բառարաններում, սակայն ներկայումս, որպես տղամարդու ոտնամանի տեսակի բառանվանում, նույնպես հաճախակի գործածություն ունի ժողովրդախոսակցական լեզվում:

⁶⁹ Ա. Ղանալյանյան, Առաջանի, Ե., 1960, էջ 199:

⁷⁰ <Աճառեան, Թուրքերէնէ փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մեջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջևանի բարբառներու, Մոսկովյա-Վաղարշապատ, 1902, էջ 279:

Չաքմա. «1. Երկարաճիտ կոշիկ, 2. Տրեխ (ՆԲ), 3. Ցանց՝ ձուկ որսալու համար, որի մեջ մեկ ձուկ ընկնելու դեպքում դուրս է քաշվում (Հվր.)» (ՀՀՓԲ, 4, 398): Գրական հայերենի բառարաններում արձանագրված է հետևյալ բացատրություններով՝ «(գվր.) Երկարաճիտ կոշիկ» (ԱՀՓԲ, 2, 1160), (բրր.) «բարձրաճիտ հատուկ կոշիկ» (ԺՀՓԲ, 4, 135): Այս բառանունը, որպես օտարաբանություն, «Երկարավիզ կոշիկ» իմաստով արձանագրված է Մարտիրոս Յարութիւնեանցի աշխատությունում⁷¹:

Պապուճ. «Հողաթափ» (ՆՆ, Եվր. (Ամս.), Կր. (Զվի.)): Ղարաբաղի բարբառում փափուց-ը համարվում է «մանկական կոշիկ» (ՀՀՓԲ, 6, 359): Ստ. Մայիսայանցը նշում է՝ «փապուճ (տաճկ. բասց), գ. Ոտքի ագանելիք, հողաթափ»⁷²: Արդի գրական հայերենի բառարաններում արձանագրված է՝ «տան մեջ հագնելու փափուկ ոտնաման» (ԱՀՓԲ, 1516), փապուճ//փափուճ «(իսսկց.) տանը հագնելու փափուկ՝ թեթև՝ ոտնաման, 2. (բրբ.) կրծքի երեխայի կոշիկ՝ ոտնաման, որ սովորաբար շատ թեթև ու փափուկ է լինում» (ԺՀՓԲ, 4, 645):

«Ոտնաման» հասկացության դիմաց հայերենի բարբառներում գործառող բառանվանումներից են նաև՝ իսաթըռ ((ՆՆ.) ոտնաման), պելավ ((Մկս., Շտխ.) ոտնաման, կոշիկ), լաքան ((Մշ.) 1. ոտնաման, որ գործում են կանեփի թելից կամ այծի մազից, 2. մի տեսակ ոտնաման, որի տակը գործված է այծի մազից և օգտագործում են մեծ մասամբ ձյունի վրա քայլելու համար), հեղիկ ((Այնք., Վն., Մշ.) 1. կոշիկ, ոտնաման, 2. ծյան վրայով քայլելու հատուկ կոշիկ), շաթըռ ((ՊԼ. (Պրտ.)) կոշիկ, ոտնաման), ներսնց ((Եվդ., Հմշ.) 1. տանը հագնելու շոր՝ կոշիկ, որը դուրս գնալիս փոխում են), սաղրիք//սաղրի ((Թք.) ոտնաման), դաշիկ ((Սք.) կոշիկ), լասպիկ//լասպահիկ (կրկնակոշիկ), երեսանկ (փայտե ոտնաման առանց երեսի, նալիկ), դական ((Սս.) ոտնաման, որ պատրաստվում է կանեփի թելից) և այլն⁷³:

Բարբառներում հաճախ կարելի է հանդիպել ոտնամանի տեսակների անվանումներ, որոնց ծագումն անհայտ է. դրանք, մեր կարծիքով, կամ փոխառություններ են, կամ էլ ստեղծվել են տվյալ բարբառախոս ժողովրդի կողմից, ինչպես՝ մոլ (մի տեսակի ամառային կոշիկ՝ բաց կրունկով), գոնչորա (եվրոպական կոշիկ), ռուսի (եվրոպական կոշիկ (երևի այդպես է կոչվում ռուսների կողմից բերված լինելու պատճառով)),

⁷¹ Մ. Յարութիւնեանց, Բացատրական բառգիրը օտարազգի բառերի եւ օտարագիր բառերի ու դարձուածքների, Ալեքսանդրապոլ, 1912, էջ 270:

⁷² Սկր. Մայիսասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ. 4, Ե., 1945, էջ 487:

⁷³ Այս բառանունների մեծ մասը համանունական շարքի անդամներ են (տե՛ս՝ ՀՀՓԲ, հհ. 1-7, Ե., 2001-2012):

չապլի (պոչավոր կոշիկ), սիկիլի (կոշիկի մի տեսակ՝ երեսը երկու կտորից), եմենի (տեղական մի տեսակ կիսակոշիկ) և այլն: Շատ բառանուններ փոխառվել են հարևան կամ եվրոպական երկրներից (ինչպես՝ փոթին ((ֆր., թուրք.) մի տեսակ կոշիկ), կալոշ ((ֆր.)) և այլն:

Բարբառներում ճշգրավոր կոշիկ-ը ունի հետևյալ բառանվանումները՝ մղըս ((Մշ. (Բդշ.)) երկարաճիտ կոշիկ), սապու ((Ար., Թթ., Կր. (Զվի.)) տղամարդու երկարաճիտ կոշիկ (հատկապես զիվորական)), ջղան ((Ար.) երկարաճիտ կոշիկ), ջզմա//ջազմա//ջիզմա ((Կր., Զվի., Ախց.) երկարաճիտ կոշիկ, ճտքավոր կոշիկ), փոսդալ//փոսդի//փոսթոլ ((Կլկ. (Մրշ.)) ճտքավոր կոշիկ, (Կր. (Շիր.), Հճն., Խտջ.) հասարակ կաշուց կարված հողաթափ), լափչուն ((Հվլ.)) կարճ ճտքերով կոշիկ) և այլն:

«Հողաթափ» իմաստն ունեն նաև զբարուկ ((Առտ.)), ծլափիան//ծլրփիան ((Գնձ.)), փանթոլ ((Վն.)) բառանվանումները:

«Մանկական ոտնաման» են նշանակում հետևյալ բառանվանումներ՝ պապու ((Վն. (Պա.)) նոր ոտք ելած երեխայի կոշիկ), փոցալ ((Ար.) մանկական փոքրիկ կոշիկ), չոչ ((Ղրբ. (Գրս.)) երեխայի կոշիկ), փափի ((Տգր.)) մանկական փոքրիկ կոշիկ), էղիկ ((Եվլ.)) փոքրիկ երեխայի կոշիկ, մուճակ, փափուճ), կաթըր ((Պա.) երեխայի կոշիկ, ոտնաման) և այլն:

Կանացի ոտնամանի տեսակներից են՝ մուճակ ((Պլ., Սր., Վն.) կանացի տնային թեթև ոտնաման), չափիկ ((Բլ.) կանացի կոշիկ), ճթիկ ((Մշ., Բդշ.) կանացի կոշիկի մի տեսակ, որը քայլելիս կպչելով հատակին կամ ներբանին ծայն է հանում), մաս ((Ղրբ., Կր., Բլ., Մկս., Պրտ.) փափուկ կաշուց պատրաստած կանացի անկրունկ կիսակոշիկ) և այլն:

«Ոտնաման» հասկացության բարբառային բառանվանումներից մի քանիսը (բարբառային նշումով) արձանագրված են արդի հայերենի բառարաններում, թեև այնքան էլ գործածական չեն: Դրանցից են՝ բարու (նորամանկան կոշիկ), բարուծ (առանց կրունկի ոտնաման, հողաթափ), յամանի (կաշվե ոտնաման), քոշ (կոշիկի մի տեսակ, առանց ճտքի, երեսը կիսով չափ բաց, մաշիկ), լազան (փայտյա հատուկ ոտնաման, որ հագնում են ձյան վրա քայլելու համար), լաքա (1. կարմիր կաշի, 2. այդ կաշուց կարված ոտնաման), չուսպի//չուսպիկ (հողաթափ, տանը հագնելու հասարակ կոշիկ), քաշակրունկ (ցած կրունկով (կոշիկ), ցածրակրունկ), չաքմա (բարձրաճիտ հատուկ կոշիկ) և այլն:

Գրական հայերենում «առանց ոդնաման» հասկացությունն արտահայտվում է անկոշիկ, բոկոպն, մերկոպն, մերկոպիկ, կոռունծ, (ինց.)՝ բոկ, բոկիկ, ոդնաբաց, ոդաբորիկ և այլ բառերով, բարբառներում՝ բոր(վ)իկ, բոկեկ, բոկիկ, պոպիգ, բոփիկ, բիրիկ, պեպեկ, բիգ, ոդնաբորիկ//ոդաբորիկ, ոդնաբաց, պեպիկ//պեպեգ, վննըպեպիկ, վննապեպից, վննապեց

հնչյունական տարբերակներով, ինչպես նաև՝ բորլիկ, դալբաղան//դալբաղապան (Մշ., Խըր., Եվդ. (Ամս.)), փափթի (ՆԶ) և այլն: Բորիկանալ բայի դիմաց բարբառներում առկա են թոպկնալ, պեպկել ձևերը:

Գրական հայերենի «կոշիկները հագնել» բառակապակցության փոխարեն բարբառներում ունենք կոշկըվորել (կոշիկները հագնել), չմշկել (կոշիկները հագնել), դրիմըվերվել (տրեխներ հագնել, տրեխի տեր դառնալ) միաբար ձևերը:

Գրական հայերենում գործածվող «հնամաշ կոշիկ» բառակապակցության փոխարեն բարբառներում գործածվում են զանազան տարբերակներ, ինչպես՝ չանթիկ (հին՝ մաշված չարուխ), փափուկ (հնացած՝ մաշված ու ձևը կորցրած կոշիկ), փթռաղ (պատառոտված տրեխ, կոշիկ), խսիկ (հնացած կոշիկ), խրիկ (1. ոտակապ, կապ, 2. հին կոշիկ, որից կապում են հավերի ոտքերը՝ չփախչելու համար), լակաշ (մաշված, ձևը կորցրած կոշիկ), կես-բարուճ (կիսամաշ կոշիկ), միկիր (կրունկն ընկած՝ հին կոշիկ), վարձգուկ (երկար գործածությունից հնացած ու անգործածական դարձած (շոր, կոշիկ և այլն)), խոնդուռա (հնամաշ կոշիկ) և այլն:

«Նոր ոտնաման» հասկացությունը բարբառներում արտահայտվում է իսամ բառաձևով, որը թեև բազմիմաստ բառ է, ունի շուրջ երկու տասնյակ իմաստ, բայց դրանցից մեկն էլ «նոր, չհագած (կոշիկ)» իմաստն է:

Որպես կոշիկի մաս բառանվանումներ՝ արդի հայերենում կան՝ լեզվակ (զանազան իրերի՝ առարկաների լեզվածն մաս (կոշիկի լեզվակ)), կապիչ (տրեխների, կոշիկների եզրերը կապելու կամ գուլպան ոտքին ամրացնելու գործված երիգ՝ փոկ), կոշկաքուղ//կոշկերիզ, կոշկաթել, կոշկաիրան (հեծյալի կոշիկի վրա ամրացված պայտածն պողպատե խթան՝ ծիուն խթանելու համար), կոշկածայր (կոշիկի ծայրի՝ քթի մասը), ներբան//կոշկադակ (1. ոտքի տակի կաշին, 2. կոշիկի՝ ոտնամանի տակը գտնվող պինդ կաշի, կոշկատակ), ճիղը (կոշիկի կամ գուլպայի բուկը, վերսի մասը, որ պատում է սրունքը), կրունկ (այսուհետ՝ ՀՍԲ) և այլն:

ՀԸԲԲ-ը, որպես «կոշիկի մաս», վկայում է հետևյալ բարբառային բառերը՝ ամլզոր (կոշիկի երեսի աստառը), բաղ (կոշիկի կապ), բուժ (փնջածն կապ (կոշիկների, մազերի վրա)), երեսկրուկ (կոշիկի կրունկի երեսը), կելինճուղ (կոշիկի կաղապար), կոնջ (կոշիկի, ոտնամանի եզերը), վննակապ (ոտնակապ), վննըկապիչ (ոտնակապիչ), փուլակ (կոշիկի կապի ծայրի փնջակը), ֆասիդեք (երկարաճիտ կոշիկի ծնկից վեր բարձրացող մասը), պըլ (կոշիկի կրունկի երկու կտորների միացման կարը), պաշապարան (կոշիկի կապ), շունքապուն (տրեխսկապ), կուղ (տրեխի եզերքին քաշած փոկի երիզը) և այլն:

«Ոտնաման կարող» հասկացությունն արդի հայերենում արտահայտվում է հետևյալ բառանվանումներով՝ կոշկակար, մուճակագործ, կարվակ

(հզվ.), կոշկագործ, օդագործ, մաշակար, մաշկակար, կոշկարար, սոլկար (բրբ.), խարազ, ուղից կարող, չմշկակար (չմուշկներ կարող արհեստավոր) և այլն:

Բարբառներում այս հասկացությունն արտահայտվում է հետևյալ բառերով՝ սապոժնիկ, ყրեխագործ, ակս(ը)ճի (իին կոշիկներ կարկատող, փինաչի), խաֆաֆ (1. մանրավաճառ, փերեզակ, 2. բազազ, 3. կոշկակար), մաշկակար//մաշակար//մաշեկար (մաշիկ կարող, կոշկակար), սոլկար (մաշիկ կարող, հողաթափ՝ ոտնաման կարող), փերթկար (կարկատան անող կոշկակար, հնակարլկատ), փինաչի//փինաճի (իին կոշիկներ կարկատող), փենիփեղ (կոշիկներ կարկատող, հնակարլկատ, փինաչի), ուղից կարող (ոտնաման կարող, կոշկակար) և այլն:

Որպես «կոշկակարի գործիք»՝ արդի գրական հայերենում հիմնականում հանդիպում ենք կոշկասեպիկ//զամիկ, կոշկագամիկ, մեխիկ բառերը, իսկ բարբառներում՝ այլանդրա (Երկար, նեղ կաշվի փոկ, որով կարում են տրեխի շուրջը), դեմրոնիչ (ճտքավոր կոշիկ՝ սոնակոշիկ պատրաստողի գործիք), դոնաճաղ (կոշկակարի գործիք), թապար (կաշի կտրելու գործիք), կարփեղ (կոշիկի կարելու գործիքներից մեկը), շրջիչ (կոշկակարի փայտե շրջող գործիք), ուզորա (ոտնամանի չափ, որ օգտագործում է կոշկակարը), փանջո (կոշկակարի մի տեսակ գործիք), խոալ (կոշկակարի մի տեսակ գործիք), հերոն//հերուն//հերյուն (կոշիկ, տրեխ կարելու բիզ, ծակիչ), ճլրան (կոշկակարի կարելու գործիք), մուշպի(ի) //մուշպա (մուշտա՝ կոշկակարի գործիք՝ կաշին ծեծելու համար), որս//օրս (կոշկակարի գործիք, երկարե ձոռ, որը սուր ծայրով ամրացվում է գետնին, իսկ մյուս թաթաձն ծայրի վրա կոշկակարը աշխատում է մուրճով), փովալ (կոշկակարի փայտե սեպ), փսվալ (կոշկակարի մի տեսակ գործիք) և այլն:

Ի տարբերություն գրական հայերենի՝ «կոշիկ կարել, վերանորոգել» իմաստով բազմաթիվ բառաձևեր կան բարբառներում, ինչպես՝ փիյթել (կոշիկի տակը նորոգել), փինա անել//փինա ձգել, փինայել (կարկատել), փինապել (կոշիկը մի թեթև կարկատել), դերգել (կոշիկի շուրջը կարել), նալաքորել (կոշիկի տակ նալաք՝ պայտ խփել), փիկրել//փիկրել (ոտնամանի տակը կարկատան դնել, կարկատել), կողքաշել (կաշվից բարակ՝ նեղ շերտերով թել հանել՝ տրեխ կարելու համար), շըդդիլ (կոշիկի տակ նոր կաշի ամրացնել), գորդել (տրեխի վրա անցը բացել՝ թելն անցկացնելու համար), լմել(կոշիկ կարելու թելը մոմել), ֆրդել (դարաղված կաշուց մեկիկ-մեկիկ ոտնամանի երեսացու կտրել), չիթմել (թկով տրեխի ծակը գոցել), փոյլսկել// փոյլսպել//փոկլսպել (տրեխի ծակը փոկով հյուսելով լցնել, կարկատել) և այլն:

Այսպիսով, քննվող նյութի դիտարկումից պարզ է դառնում, որ, ի տարբերություն գրական հայերենի, բարբառներում ուսնաման հասկացությունն արտահայտող բառանուններում բնիկ հայերեն բառերը սակավաթիվ են: Դրանք մեծ մասամբ հարևան ժողովուրդներից վերցված բառեր են: Իսկ թե այս կամ այն բառը արևելյան որ լեզուներից է փոխառվել, դժվար է որոշել. պատճառը լեզվական փոխներթափանցումներն են, ինչպես նաև որոշ բառերի միջնորդավորված փոխառություն լինելը: Կան չստուգաբանված, ծագումն ու պատկանելությունը չբացահայտված բառեր ևս, որոնց անդրադառնալը սկիզբ կդնի հետագա ուսումնասիրությունների:

ՀԱՄԱՊՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

արար.-արարերեն
բրբ.-բարբառային
գ.-գոյական
գվո.-գավառական
հզվո.-հազվադեպ
հնց.-հնացած
տաճկ.-տաճկերեն
ֆր.-ֆրանսերեն

L.A. Ghamoyan - The concept of "shoe" in contemporary literary Armenian language and dialects. - In contrast to literary Armenian, in the dialects, there is a small number of native Armenian words indicating the concept of "shoe". These are mostly words taken from neighboring peoples. It is difficult to determine which eastern language these words have been borrowed. The reason is linguistic interpenetration, as well as the fact that some words are mediated borrowings. There are unconfirmed words, words, whose origin and affiliation have not been revealed. Their investigation will be the starting point for further studies.

Л.А. Гамоян - Понятие «обувь» в современном литературном армянском языке и диалектах. - В отличие от литературного армянского, в диалектах есть небольшое количество коренных армянских слов, обозначающих понятие «обувь». В основном это слова, взятые у соседних народов. Трудно определить, из какого восточного языка эти слова были заимствованы. Причиной является лингвистическое взаимопроникновение, а также тот факт, что некоторые слова являются опосредованными заимствованиями. Есть неподтвержденные слова, слова, происхождение и принадлежность которых не выявлены. Изучение этих слов станет отправной точкой для дальнейших исследований.

ARMATH ENGINEERING LABORATORIES AS AN ARMENIAN SCIENTIFIC -EDUCATIONAL BRAND AND A NEW COMMUNICATION PLATFORM

PhD in Philological Sciences G. Grigoryan

In the era of globalization, people from different countries and societies need to communicate with each other. As the world develops globally, where isolation and separation are excluded, the social media and networks are becoming more and more popular year by year. No matter where you are in the world the exchange of ideas and communication has become faster, easier, and more efficient due to advanced technologies. Cell phones, social networking websites, e-mail, and instant messaging are examples of technology which enable communication. Thus Information technology plays a crucial role in using technology to communicate.⁷⁴ In spite of the above-mentioned possibilities provided by IT technologies in intercultural communication, the varying values and norms can pose serious challenges. Nowadays people who are experienced in cross-cultural practices understand, that only developed linguistic skills do not provide your successful and comprehensible communication. Some cultures are informal, some cultures use a whole series of ritual greetings before having a conversation, and others consider it rude to show up to a meeting on time. In today's increasingly interconnected and globalised world, tradition is being supplemented by new and exciting ways to bring the world into our classrooms. Modern means of communication ensure that our students can easily get acquainted with foreign cultures. Even pupils from geographically distant schools (regions) get to know other cultures due to the comfort of their own classroom. The idea that children should be aware of themselves in respect of fitting into their community both on a local and global scale is of great importance nowadays. Every student, regardless of cultural or linguistic background, has the right to learn in a safe and inclusive environment, and schools should act as foundations of a multicultural society. Education, thus, having an acculturating role, becomes a means of not only sharing information but also of creating thoughtful, innovative and active members of society. Cultural education

⁷⁴ Zachary Fenell-The Impact of Information Technology on Communication
<https://www.techwalla.com/articles/the-impact-of-information-technology-on-communication>

broadens horizons through understanding cultures, identities and environments embodying our commitment to social purpose. Learning about other cultures, achievements and experiences in different places and ages help us to understand the world.

Studying other peoples' creativity experience challenges our students to develop their own creative thinking skills, which can prove useful to solve problems that they might encounter in the future. Such learning enables the students to develop the skills, understanding and flexibility to deal with change, to engage with ideas critically and independently, that will lead them to a better understanding of what types of problems they *would like to solve*.

Owing to its influence on a well-rounded development - both physical and spiritual education is essential for everyone. Precise education facilitates in self-actualization, develops the ability to acquire the skill sets needed for employability. Education is an exceptional investment in the present and the future⁷⁵.

In order to enable a person to succeed in the various environments in which they function daily, to empower students and guide them towards the development of new values, education should be provided in an accurate, scientific and understandable manner.

A very effective way of imparting the knowledge and skills the children need is through getting them involved in their own learning process. Thus the students within the school system develop the necessary skills and adapt these skills for the application within the border communities in which they live.

Training should not only seek to inform students but to also allow their abilities to think and function, to develop progressively in age-appropriate stages.⁷⁶

Currently, education spreads its influence in communication through Information Technologies, and few people can deny the paramount role of education in communication and vice versa. Whether it is teacher to student, student to student, teacher to teacher, teacher to parent, teacher to admin or admin to parent, or vice versa, communication is needed to make sure that students are successful.

Technologies can help improve communication, as today's educational-systems stuff deals with each other through social networks. Using IT in classes makes it easier for both students and teachers to communicate.

⁷⁵ Mitsuyo Tamai-Exploring education via information communication technologies in India
<https://www.entrepreneur.com/article/287031>

⁷⁶ Peace Corps, Life Skills Manual, 2001.

https://www.unicef.org/jamaica/MOEY_HFLE_EVALUATION_FINAL_REPORT.pdf

The use of Information Technology in the classroom has left behind the traditional methods of delivering long, often boring lectures. Using IT the teachers can create interesting audio and visual presentations which will keep the students engaged and give them a greater understanding of all the concepts discussed. Besides, such a methodology can give rise to interactive sessions between students and teachers; by importing IT in the educational system we can make the classes more fun, attractive and interactive.

A few years ago the students had to spend hours in libraries to search for information or data they needed for their dissertation or diverse assignments. Nowadays this problem can easily be solved. Thanks to IT they can now access any information they need using their computers or mobile phones. They can search for Google and YouTube for any sort of article they are looking for thus making their writing much more comprehensive and understandable.⁷⁷

Educational technology provides the way for students to be active participants in their learning and to present differentiated questioning approaches. It expands individualized education and encourages the progress of personalized learning plans. Students are encouraged to use multimedia components and to integrate the knowledge they achieved in innovative ways.

All the developed and developing countries try to use educational facilities necessary to prepare young people to play full roles in modern society and to contribute to a knowledgeable nation.

Educational technologies and materials that reflect *Own* national and regional cultures are key components in achieving *Education for ALL GOALS*.⁷⁸ In the search for further innovation both the developed and developing countries must be able to benefit from truly very rapid technological progress that leads to changes in work, especially of its organization: required competencies are therefore changed. A secondary curriculum should contribute to the building up of the teams of professionals with these new competencies.

A very unique educational model of transmitting values, attitudes and cultural identity through the process which prepares individuals to understand

⁷⁷ Julian Watson-Role of Information Technology Education

<https://www.dailyonweb.com/Technology/Role-of-Information-Technology-in-Education.html>

⁷⁸ Evgeni Khvilon, Mariana Patru -Information and communication technology in education: A curriculum for schools and programme of teacher development, Division of Higher Education, UNESCO 2002

and cope with themselves and others is the introduction of ARMATH engineering laboratories in the public school- system of Armenia. The young engineers are given the opportunity to design, build, test, and improve their own creations in a safe and fun environment while making new friends, communicating and creating startups.

The newly introduced ARMATH educational system is expected to have a serious impact on the social and cultural value of the younger generation. It can revolutionize the way we perceive education and eventually bring fundamental changes to the traditional educational model widely practised in Armenia (and not only) mainly based on information storage without analyzing and comprehending it. Textbook knowledge, intransigent ideas, and the importance of the tests have transformed the purpose of education, with open debates and logical reasoning taking a back seat. It obviously discourages critical thinking and creativity is lacking. Meanwhile, we need to develop “free thinking” in learners, give them possibilities to speculate, criticize, and form conclusions about the knowledge they already have as well as information they **will** acquire in the future. As Researcher Dr Peter Facione states “Education is nothing more, nor less than learning to think.”⁷⁹ The most important phenomenon highlighted in the children attending ARMATH laboratories is their constant interest in technology. It is truly important that the child goes home, finds something on YouTube, generates new ideas and tries to call them to life during the next classes of ARMATH.

There are now *more than 250 engineering laboratories* functioning in the RA, Artsakh and Georgia. More than *6500 students* are involved in the programs. Through interactive after-school classes, exciting competitions, innovative camps at Armath Engineering Laboratories children *aged 10-18 are introduced to science, technology, engineering and math education*.

The project aims to promote the technological education in all schools of the Armenian community, assist pupils in their early interest emergence in modern technology, to boost the development of engineering mindset from early ages, prepare the professional workforce and solve a wide range of social-economic issues linked to the national security, economic development and education.⁸⁰ Studying at ARMATH labs students develop skills not only

⁷⁹ How can teachers encourage and promote critical thinking among their students
<https://k12teacherstaffdevelopment.com/tlb/how-can-teachers-encourage-and-promote-critical-thinking-among-their-students/>

⁸⁰ <https://armath.am/en/about>

essential to their education but also their personal and professional development as well. They gain important competencies and skills that are important for the professional organization of work, such as: 1. critical thinking, 2. broad competencies, 3. decision-making,

And solid strategies such as: 1. competencies enabling expert work, 2. Dynamic decision making, 3. working as a member of a team, 4. communicating effectively.

The project is managed by the Union of Advanced Technology Enterprise (UATE) and has a number of supporting structures, such as the government, private business sector, adjacent programs, international organizations and research centres. The most important outcome is the activating of technological education in Armenia, contribution to regional development.

As a result of the project implementation the main expected impacts are:

1. Professional orientation towards the engineering profession workforce with new quality
3. Promotion of entrepreneurial culture
4. Strengthening of the chain "school system-labour market-university system-labour market"
5. Improvement of the demographical situation
6. The link between the companies of the sector and the educational system, etc.⁸¹

The economic activity increase in the ICT sector will lead to

1. Development of other sectors of the economy,
2. Regional development,
3. Termination of emigration a promotion of immigration,
4. Formation of leads and entrepreneurs of new quality.

Within the frames of the ARMATH engineering laboratories *motivating events, contests, summer camps such as “3D modelling competition”, “DigiCode Applied Programming Youth Contest”, “Open game”, etc.* are held. All of them aim at awakening and raising the schoolchildren's creative potential, developing their algorithmic thinking and turning them from *game consumers to game makers*.⁸² While working in this environment, schoolchildren from all the regions of Armenia meet each other, discuss the strengths and weaknesses of their games and evaluate each other's work, share knowledge and innovative ideas. The initiated summer *camps such as ‘Armath Technocamp’, ‘Digicamp’*

⁸¹ the same place

⁸² <https://armath.am/en/events/7>

in a totally new format *provide the children with an opportunity* to recognize their homeland, Armenian culture, customs and traditions, express their admiration and, why not, cherish the idea to return and live in Armenia. The summer camps strengthen the bond between the children living in the Republic of Armenia and in the Diaspora. Eventually, they serve as an excellent opportunity for an open dialogue, teamwork, for sharing experience and knowledge, establishing ties and educating a generation with national commitment.

In his welcome speech, the Minister of Science and Education, Arayik Harutyunyan noted,” Education is an important part of the program of the government and we want it to become one of the significant brands of our country. And on our way to that, it is very important to note that the network of ARMATH Engineering Laboratories is already expanding outside the borders of Armenia thus becoming one of our scientific and educational brands”.⁸³ We can thus conclude that ARMATH educational laboratories have ample opportunity to develop the schoolchildren’s individual capacities in a safe and supportive environment, promote their physical, psychological, spiritual, social, emotional, cognitive and cultural development.

⁸³ <http://whyarmenia.am/work-here/extreme-living/detail/the-225th-armath-engineering-laboratory-opened-in-akhalkalaki-georgia>

References

1. Evgeni Khvilon, Mariana Patru -Information and communication technology in education: A curriculum for schools and programme of teacher development, Division of Higher Education, UNESCO 2002
2. Julian Watson-Role of Information Technology Education <https://www.dailyonweb.com/Technology/Role-of-Information-Technology-in-Education.html>
3. How can teachers encourage and promote critical thinking among their students <https://k12teacherstaffdevelopment.com/tlb/how-can-teachers-encourage-and-promote-critical-thinking-among-their-students/>
4. Mitsuyo Tamai-Exploring education via information communication technologies in India <https://www.entrepreneur.com/article/287031>
5. Peace Corps, Life Skills Manual, 2001. https://www.unicef.org/jamaica/MOEY_HFLE_EVALUATION_FINAL_REPORT.pdf
6. Zachary Fenell-The Impact of Information Technology on Communication <https://www.techwalla.com/articles/the-impact-of-information-technology-on-communication>
7. <https://armath.am/en/about>
8. <http://whyarmenia.am/work-here/extreme-living/detail/the-225th-armath-engineering-laboratory-opened-in-akhalkalaki-georgia>

Գ. Ա. Գրիգորյան. «Արմաթ» ինժեներական լաբորատորիաները որպես հայկական գիտակրթական ապրանքանիշ և հաղորդակցության նոր հարթակ -Հայաստանի դպրոցական կրթական համակարգում ներդրվել է կրթական ինքնատիպ մի մոդել, որը մշակութային արժեքները, հարաբերությունները և ինքնությունը փոխանցում է՝ անհատին նախապատրաստելով փոխըմբռնման և հաղորդակցության: «Արմաթ» անվանմամբ նոր գիտակրթական ապրանքանիշն արդեն տարածում է գտել << սահմաններից դուրս: Ակնկալվում է, որ նրա կիրառումը կնպաստի մտածելակերպի և ստեղծագործական մոտեցման փոփոխություններին, ինչի շնորհիվ կվերանայվեն երիտասարդ սերնդի սոցիալական արժեքները: Նոր կրթական մոդելը թույլ կտա նորարարական գաղափարներ առաջարկել, զարգացնել ազատ, քննադատական, անկախ մտածելակերպ և ճիշտ կիրառել եղած և ստանալիք գիտելիքները: «Արմաթ» ինժեներական լաբորատորիաները երիտասարդ ինժեներներին ապահովում են առողջ և անվտանգ միջավայրով՝ նա-

խագծելու, կառուցելու, փորձարկելու և սեփական ստեղծագործությունները բարելավելու համար, միաժամանակ նրանք ձեռք են բերում նոր ընկերություններ, նոր մեկնարկների սկիզբ դնում, և այս ամենը՝ շարունակական հաղորդակցման միջոցով:

Г. М. Григорян. Инженерные лаборатории АРМАТ как армянский научно-образовательный бренд и новая платформа коммуникации. Весьма уникальная образовательная модель, которая передает культурные ценности, отношения и идентичность посредством подготовки личности к пониманию, самоовладению и общению, внедрена в школьную образовательную систему Армении. Новый научно-образовательный бренд, носящий название АРМАТ, уже выходит за пределы Армении и ожидается, что благодаря переменам в менталитете и подходе к творчеству произойдет пересмотр социальных ценностей у молодого поколения. Новая образовательная модель позволит выдвигать инновационные идеи, развить свободное, критическое, независимое мышление и правильно использовать имеющиеся и ожидаемые знания. Инженерные лаборатории АРМАТ создают для новых инженеров здоровую и безопасную среду для проектирования, построения, тестирования и улучшения собственных творений. В процессе этого дети приобретают новых друзей, создают новые стартапы и все это путем непрерывного общения.

**ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ-ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՄԻ ԴԻՏԱԿՈՒՄ.
ԳԵՐԱՍԱՏ-ԳԻԼԻՄԱՍՐԻ-ԳԵՏՆԱԽՆՁՐՈ**

Բանասիր. գիտ. թեկնածու Մ. Ս. Քումունց

Հայերենում գերմասպ, գերմասպի, գիլըմասպի, գիլիմասպրի, գիլըմըհասրի և այլ տարբերակներով է կոչվում բարդածաղկավորների ընտանիքի բազմամյա այն բույսը, որը հայտնի է գետնախնձոր, գետնապանձ, ասպղապակ, Երուսաղեմի արդիճուկ և այլ անվանումներով⁸⁴. լատ.¹ *helianthus tuberosus* «արևածաղկի պալար»: Օտար աղբյուրներում անվանման ստուգաբանական փորձերից մեկում նշվում է, որ այն Երուսաղեմ բառի հետ որևէ առնչություն չունի. իտալացիներն այն անվանել են *girasole* «արևածաղկի» (< լատ. *gyrus* (*curvus*)>*curvor* «կոր, թեք, թեքություն»)՝ իտ. *girare* «շրջան, շրջանաձև, կլոր» (հմմտ.՝ h.-ե . **wer-* «թեքում, կլոր» > հայ. կոր «ծուռ, կլոր», լիթ. *gurnas* «կոճ, ոսկոր», նորվ. *kaure* «գանգուր, խճճված մազ», այս ամենին հմմտ.) Սյունիք-Արցախում՝ կը է՞ն//կէն, կը ռակօն) և *sole* «արև» բառերից, բառացի՝ «րեպի արևը պտտվող»), որ հետագայում կարող էր շփոթություն ստեղծել Երուսաղեմ բառի հետ:

Ավելի մոտ է «հարավային իտալական բարբառի [d̪z̪]ira 'zu:l]» բառին⁸⁵ *girasole articiocco* «արևածաղկի արտիճուկ», որ աղավաղվել է անգլիախոսների շրջանում՝ դառնալով Երուսաղեմի արդիճուկ⁸⁶: Բառի մյուս անվանումը՝ *topinambur* (ֆրանս. *topinamboir*, պորտ. *Topinambur*)⁸⁷, ծագում է Բրազիլիայի հնդկացիական *tupinamba* (*topy*) ցեղի անունից, որոնց հետ էլ 17-դարում բույսը ներմուծվել է Ֆրանսիա⁸⁸:

ՆՀԲ-ն նշում է գերմասպ՝ «ընդեղեն ինչ»՝ առաջացած իուն. Թէրմօս բարից⁸⁹: <. Աճառյանը արձանագրում է գերմասպի կամ գերամասպի բառահոդվածը և տալիս նկարագրությունը. «Մի տեսակ անտառային ծառ

⁸⁴ Ռ. Ս. Ղազարյան, Բուսանունների հայերեն-լատիներեն-ռուսերեն-անգլերեն- ֆրանսերեն-գերմաններեն բառարան, Ե., 1981, էջ 21:

⁸⁵ St'iu J. Smith, An Introduction to physiological and systematical Botany, London, 1807, էջ 108:

⁸⁶ St'iu H. Wedgwood, On False Etymologies, Transactions of the philological society, N 6, London, 1855, էջ. 67:

⁸⁷ St'iu Биология. Современная иллюстрированная энциклопедия, М., 2006, (թ. թ. Ա. Գորկին) *топинамбур* (земляная груша) բառահոդվածի տակ:

⁸⁸ Գետնախնձոր կամ գետնատանձ, <https://blognews.am/arm/news/51850/getnakhndzor-kam-getnatandz.html>. (Վերջին այցելություն՝ 3. 30. 2019):

⁸⁹ Գ. Աւելիքեան, Խ. Սիլոմէլեան, Մ. Աւելիքեան, Նոր բառգիրը հայկագեան լեզուի, հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837, էջ 549 (այսուհետև՝ ՆՀԲ):

Է. մարդաչափ բարձրութեամբ, կարմրագոյն կեղևով՝ որ կարծես գործուած է. ամուր փայտ ունի. պատրաստում են մահակներ և ճիպուներ. երկար ժամանակ այդ ճիպուները դալար են մնում (ունի հաղարջի նման սև բերք.- Մ.Ք.)»⁹⁰: Ինչպես նկատում ենք, ՆՀԲ-ի և ՀԱԲ-ի նկարագրությունները չեն համապատասխանում այն բոյսին, որին Գորիսի շրջանում անվանում են գըլըմասպրի (գետնախնձոր): Հ. Աճառյանը այս բառին նմանություն ունեցող գերմասպը ստուգաբանում է «գայլի մասրենի» կամ «կարմիր մասրի» և եզրակացնում, որ այն հնարավոր է հայերենից փոխառված լինի արևելյան լեզուներում⁹¹: Հայերենի բարբառներում առանձնապես տարածված չէ նաև այդ անունը՝ Երև. Գերեմասպի, Ղրբ. գիլամասրի, Ղզին՝ գիրմասրի, գիլմասրի և այլն⁹², «Հայոց լեզվի բարբառային բառարանը» «գետնախնձոր» իմաստով նշում է գիլմասրի, գիլիմասուր, գիլմրհասուր, գերմասրի և ավելացնում, որ բառը հանդիպում է միայն Զանգեզուրում⁹³: Հ. Աճառյանը «Հայերէն գաւառական բառարանում» նշում է բառահոդվածը՝ գիլամասրի՝ առանց որևէ բացատրության⁹⁴: Արցախում բառը տարածված չէ, համարժեքն է՝ դոմբալ(ան) և կանդազ⁹⁵:

Նկատի ունենալով բառի ծագումնաբանական և բառակազմական-իմաստաբանական դժվարությունները, այլև նրան վերաբերող ստուգաբանական փորձի բացակայությունը՝ պետք է առաջարկենք տարբերակներ: Այսպես՝ բառի արտաքին կազմից ենթադրվում է, որ այն կազմված է գիլ և մասրի (մասուր) բառերից:

Նախ քննենք գիլ արմատի առկայությունը բարբառախմբում: Ոչ միայն Սյունիքում, այլև Արցախում տարածված է գիլ բառը⁹⁶, որ անվանում

⁹⁰ Հ. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հ. 1, Ե., 1926, էջ 546 (այսուհետև՝ ՀԱԲ): Գերմասպի համարվում է այծատերևազգիների ընտանիքին պատկանող թուսիր՝ կարմրավուն կեղևով և ճկուն ամուր փայտով, բոնչի մի տեսակը, որի ոստերից կողովներ են հյուսում:

⁹¹ Նոյն տեղում:

⁹² Նոյն տեղում: Որոշ բարբառներում (Մուշ, Ալշ. և այլն) այն կոչվում է գյարմըշի (ծանոթ. խմբագրի):

⁹³ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 1, Ե., էջ 243:

⁹⁴ Հ. Աճառեան, Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 228:

⁹⁵ Ա. Սարգսյան, Ղարաբաղի բարբառի բառարան, Ե., 2013, էջ 742, 330: Նշվում է, որ բառն անցել է թուրքերներից (dombalan):

⁹⁶ Հմտ. «...Ն գրազումս յանձակին վերայ ելեալը մեծամեծ վիմօք գլաջարդ առնէին» (Ա. Հասպիկերոցի, Պատմութիւն // Մատենագրութիւնք նախնեաց, Վենետիկ, 1844, էջ 50):

Են նաև «մեռած քար» (այն կլորավուն, ծակոտեն քար է, որ օգտագործվում է հիմնականում մաքրման նպատակով)⁹⁷: Այն դժվար է նույնացնել Սյուն. գիլ//գիլա՝ «1. խաղողի կամ կեռասի կլոր հատը, 2. աչքի բիբ» բարի հետ: Գիլա՝ գիլա՝ բառը Սյունիքում օգտագործվում է նաև (փիր.) «արցունքի, ջողի թափվելը» իմաստով. «Ըշկերան գիլա՝ -գիլա՝ կաթումաա»⁹⁸: Վերոնշյալ իմաստներով գիլ-ա՝⁹⁹ բառն անցել է նաև թուրքերենի (Արդ. Վն. Կր. ևն՝ gile¹ «խաղողի հատիկ», gile² «աչքի բիբ»)¹⁰⁰ և Աստրապատականի շրջանի՝ Սյունիք-Արցախին մոտ բարբառներին¹⁰¹:

Գիլ > գլան է ասկում նաև «այն փայտը, որով գլորելով քարեր են տեղափոխում», իսկ գըլգըլան (Վն. Ար. Խյ. Գոր.) անվանում են «փայտաշեն սայլակը, որով հանում են քարն ու գոմաղբը»: Գիլ արմատ պահպանված է նաև ազգանուններում և տեղանուններում՝ Գիլանց բախսդը, Գիլավանց և այլն¹⁰²: Հնարավոր է, որ ազգանվան մեջ պրոկ. gel / լղ/ «ցեխ, կավ, տիղմ, քարակոչտ» իմաստով բառը լինի: Նկատում ենք, որ, այնուամենայնիվ, գիլ արմատը Սյունիք-Արցախում պահպանված է ոչ միայն «քար», այլև «կլոր» իմաստով, և անկախ ծագումնաբանական հնարավոր ընդհանրություններից՝ համանուն են: Գիլ արմատը վերոնշյալ իմաստներով առկա է նաև հայերենի մյուս բարբառներում (Վն. Թբ. Ար. Կր և այլն):

Բարբառագիտական որոշ աշխատանքներում նշվում է գիլ և գիլա թյուրքական ծագումը՝ հավանաբար նկատի ունենալով, որ Սյունիք-Արցախը հայերենի գ ձայնելի դիմաց, որպես կանոն, բառասկզբում ունի կ > կ: Բայց բարբառախմբում գործածվող բազմաթիվ բառեր կան՝ գիլենալ > գիլա՝ լ, գրաւ > գ/կ/հրավ, գրվաւ > գ/կ/ն ւրա, գիրգ «գութանի ծայրի փակի մասը», գրվի «հնդկահավ»¹⁰³, գյու ւր «հորդ» և այլն,

⁹⁷ Գորիսի տարածաշրջանում այդ քարանյութի բազմաթիվ հանքեր կան:

⁹⁸ Հմմտ. «Խաղողը գիլա, գիլա, / Արևերը հատիկ, հատիկ, / Խարճնը բախտի գնա» (Խ. Գյուղնազարյան, Պատմվածքներ, Ե., 1966), «... Էն սև սև, խաղողի գիլա աչքերը քեզից չէր կտրում» (Վ. Բալայան, Լուս և ստվեր), «... քո բառերով գիլա-գիլա, կերակրիր քաղցր շիրա...» (Վ. Գրիգորյան, Հարեմի վարդ, Ե., 2005), «Լիրիէ, ճան իմ, նիրիէ, / Արեւ ծիծղուն / Գիլա գիլա ծագիկներով...» (Կոմիտաս). (բոլոր օրինակները բերված են «Արևելահայերենի ազգային կորպուսի» (ԱՐԵՎԱԿ) պաշարներից՝ <http://eanc.net>):

⁹⁹ Հմմտ.՝ գիլաս-կեռաս՝ պրոկ.՝ gilas / گیلاس / گیل:

¹⁰⁰ Türkiye'de halk ağzından. Derleme sözlüğü, Cilt VI, Ankara, 1972, y. 2076

¹⁰¹ Azərbaycanca-rusca lügət, Cildə 4, (E-K), Bakı, 2006, y. 257.

¹⁰² Գիլավանց ազգանունը, կարծում ենք, քարագործ կամ բրուրագործ նշանակությունն ունի: Խնձորեսկի Գիլավանները պնդում են, որ իրենց նախապապերը քարագործներ են եղել, որտեղից էլ առաջացել է տոհմի անունը:

¹⁰³ Տե՛ս Ա. Մարգարյան, Ստուգաբանություններ, Ե., 2015, էջ 101:

որոնցում պահպանված է գ ձայնեղը: Ինչպես նկատվում է, այդ բառերը հայերենի բառապաշտի հիմնաշերտում են, որ բարբառախմբում մասնավորվում են բառասկզբի գ-ի պահպանման որոշակի կանոններով, ինչպես՝ բառի մեջ առկա ձայնեղի կամ ձայնեղացված հնչյունի ազդեցություն, համանունների կուտակումից խուսափում և այլն: Գիլ արմատը, փաստորեն, Սյունիք-Արցախ բարբառային բառապաշտում պահպանված հնաբանություններից է, որ հնդեվրոպական մայր լեզվից անցել է գրաբարին և բարբառներին՝ «1. քար, 2. կլոր, կլոր հատ» իմաստներով: Հ. Աճառյանը այդ բառի ծագման և նրա պատմական զարգացմանը վերաբերող հարցերը մանրամասն քննում է հենց գիլ բառահոդվածի ներքո՝ այն համարելով բնիկ հայերեն՝ ծագած *wel- «գլորել» արմատից¹⁰⁴: Եթե ընդունենք, որ ուսումնասիրվող բառում գիլ արմատն է, ապա այն պետք է տրամաբանորեն հանդիպադրվի մասուր բառին և մատնանշի որևէ հատկանիշ՝ «քարի մասուր, շրջված մասուր, կլոր հատ մասուր»: Ստուգաբանական այս տարբերակում ենթադրվում է, որ գիլիմասրի բառը պետք է առաջացած լինի գիրմաստի բառի ժողովրդական ստուգաբանությամբ: Կարող է համեմատված լինել հասունացած և քարացած մասուրի բերքի հետ, որ արտաքինից գետնախնձորի պտղին շատ նման է: Այն փայտի պես պինդ է և Գորիսում ունի մի բանի անվանում՝ քըրըմասրի, շընըմասրի, պըռավի պորւր և այլն: Իսկ գիլիմասրի տարբերակի գո՞ն կարող է աճական լինել, որ դրվում է սր կապակցության առկայությամբ, ինչպես որոշ բառերում՝ սրբա>սրա > (ը)սպրա, այսր > (ը/ո՞ւ)սպրո՞ւր, կամ մասպր // մասպրի (գիրմասպր) բառի մնացուկ:

Պետք է նշել, որ մասուր > մասրի (բրբ.՝ մըհասուր > մըհասրի) բառի վերաբերյալ մեզ հանդիպած ստուգաբանական տերեկությունները հստակ չեն: Հավանական ենք համարում, որ այն գրաբարի մասպր¹⁰⁵, այստեղից՝ «մաստնութիւն»՝ «հաստ, ամուր, պինդ» իմաստով բառն է, որ գործուն է նաև Սյունիք-Արցախում: Մասպր ասվում է «խիտ, թանձր, դժվարամարս ուտելիքին»: Գուցե այստեղից ծևավորված լինի նաև նրա երկրորդ իմաստը՝ «տոկուն, դիմացկուն»: Հ. Աճառյանը մասպր բառահոդվածի տակ նշում է «բողբոջեալ և մաքրեալ գարի՝ գարեջուր պատրաստելու համար» իմաստը՝ կազմությունը և ծագումը անհայտ համարելով¹⁰⁶: Մասպր բառի

¹⁰⁴ ՀԱԲ, Էջ 555:

¹⁰⁵ Համեմատել՝ անզլ. mast «ծառեր», գերմ. mästen «պարարտացնել» և այլն (այս մասին տե՛ս E. Weekley, Etymological dictionary of Modern English, Dover publications, New York, 1967, էջ 904):

¹⁰⁶ ՀԱԲ, 265:

առկայությամբ գիրմասպի և գիլիմաս/կր/րի բառը հավանաբար պետք է նշանակի «կոր և պինդ պտուղ», «քարի պես պինդ»:

Ստուգաբանական երկրորդ տարբերակն այն է, որ գրաբարում վկայված գեր արմատը բարբառախմբում կարող էր տալ գէլ կամ գիլ > կիր//կիլ:

Է. Աղայանը «կուտ» բառը, ապա **ger* արմատը քննելիս խոսում է նաև հայերենի «կոր, կեռ, կոռ»¹⁰⁷ բառերի ծագման մասին՝ դրանք համարելով հ.-ե. **wer-* (*ger-*) արմատի ծայնուարձից և «դարձնել, գալարել, ոլորել»¹⁰⁸ իմաստներից առաջացած, որոնցից բազմաթիվ հասկացություններ են ձևավորվել նաև պարսկերենում¹⁰⁹: Հնարավոր է՝ հայերենի և պարսկերենի այս արմատի և նրանից ածանցված բառերի ու իմաստների բազմազանությունն է հաճախ դժվարություններ ստեղծում, որի արդյունքում գրեթե անհնար է դառնում որոշելը, թե այդ հասկացություններից որն է բնիկ և որը փոխառյալ: Հստակեցում չկա նաև **wer-* արմատի հնդեվրոպական համանունների շարքում, որ տարբեր լեզուներում բազմաթիվ դրսնորումներով են առկայացել: Այնուամենայնիվ, հնարավոր է, որ գիլիմասպրի բառի գիլ արմատը գրաբարի նույն գեր բառից լինի՝ գեր-մասպ-ի, որ բարբառախմբում կրել է *r* > *l* փոփոխությունը, ինչը բնորոշ հատկանիշ է հնդեվրոպական նախալեզվի «արհական ընտանիքի» համար, որ «շատ անգամ շփոթում է *r* և *l* ձայները»¹¹⁰: Իհարկե, կարող է այդ հատկանիշը փոխանցված լինել հայերենի տարբերակներին:

Չնայած բարբառախմբում *r* > *l* փոփոխությունը կանոնավոր չէ, սակայն առկա է *հրեշտակ* > *հիլշպրակ*, *սերկսիլ* > *սըլկէվիլ*, *տափարակ* > *տափիլակ*, *քարաթոթոշ* > *քըլլքանթոթոշ* և այլ բառերում, որոնց շարքում կարող է ընդգրվել նաև գիլիմասպրի բառը: Բայց այս դեպքում առկախ է մնում բառասկզբի *գ-ի* հնարավոր փոփոխության հարցը: Եթե գիլ տարբերակով բառային մնացուկներ են ավանդվել բարբառախմբին, ապա գեր > գիլ//գիր ձևով այստեղ նշված կամ մոտ իմաստներով, նաև այլ բառ չի հանդիպում, և ստուգաբանական այս տարբերակն էլ այսքանով սահմանափակում ենք:

¹⁰⁷ Է. Աղայան, Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974, էջ 89, 105-108:

¹⁰⁸ Այս մասին տե՛ս J. Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch, Vol. I, Bern, 1959, էջ 385-390.

¹⁰⁹ B. Расторгueva, Д. Эдельциан, Этимологический словарь иранских языков, т. 1. М., 2000, էջ 184-185:

¹¹⁰ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Ե., 1971, էջ 494:

Մյուս տարբերակն այն է, որ գիլմասրի բառը կարող է առաջացած լինել գրք. գերմասպի՞՝ ստուգաբանորեն անհայտ մի բառից, որ նույնպես գործածվում է Սյունիք-Արցախում: Ինչպես նշեցինք վերևում, այն «գետնախնձորի թփերի երկարությամբ ծառաթուի է, որի փայտից ցախավել և բուրդ ծեծելու ծող են պատրաստում, քանի որ այնդ և ճկուն է»: Հնարավոր է գերմասպի բառի ժողովրդական ստուգաբանությունն է, որ անցել է նաև թյուրքերենին¹¹¹:

Եվ վերջապես եթե ընդունենք, որ բարբառախմբի գերմասպ և գիլմասրի բառերը տարբեր ծագում ունեն, և երկրորդում գիլ արմատը չէ, ապա պետք է շրջակա լեզուներից մի փոխառություն լինի, որ հետագայում բարբառային տեսք և բովանդակություն է ստացել: Հնդեվրոպական *gʷher- «տաք, ջերմ» բառը իրանական լեզուներում¹¹² տվել է *ghar-, *gwhormo- >*ghar-ma¹¹³: Հավանական է, որ պրսկ. gārmsir /ریگرمس/ «արևադարձային կիմա ունեցող երկիր, տաք երկիր» բառը անցած լինի բարբառախմբի տարբերակին՝ «արևադարձային մի բույս», որ հետո ժողովրդական ստուգաբանության հետևանքով դարձել է գիլմասրի: Նշենք, որ *ghar- արմատից բարբառախմբն ունի ջերմ //ճերմ տարբերակները: Գարմ/ //|գէրմ տարբերակով և «տաք, ջերմ» իմաստով այլ բառ հայտնի չէ:

Այսպիսով՝ Գորիսի բարբառի գիլմասրի բառի ծագման հետ կապված դժվարությունները ակնհայտ են: Մի կողմից որպես բուսանուն՝ այն նմանություններ ունի գրաբարի գիրմասպ¹¹⁴ բառի հետ, և ստուգաբանելիս փորձ արվեց հետևել գրաբարի տարբերակին՝ որպես բարբառին անցած նախնական ծևի, որի մասին առաջին վկայությունը տալիս է հենց <Աճայանը, ապա՝ Ա. Մարգարյանը¹¹⁵: Մյուս կողմից, ինչպես նկատում ենք, Գորիսի բարբառում պահպանված երկու անունները մատնանշում են տարբեր բուսանուններ: Եվ եթե գիրմասպի բառի տարբերակը մասամբ

¹¹¹ Տե՛ս ՀԱԲ, էջ 546:

¹¹² Հմմտ.՝ անգ. *warm* (իին անգլ. *wearm*), լատ. *formus* «տաք», սանսկ. *gharma* «տաք», պրսկ. *garm* «տաք», հնւ. *thermos* (θερμός) «տաք», ոռու. *jarko* (жара, жарко) «տոռ»):

¹¹³ H. Martirosyan, Etymological dictionary of the Armenian inherited Lexicon, Leiden-Boston, 2010, էջ 556-557: The place of Armenian in the Indo-European language family: the relationship with Greek and Indo-Iranian // Вестник РГГУ, N 16 (117), Серия «Филологические науки. Языкоизнание», М., 2013, էջ 95: В. Расморгусева, Д. Эделышан, նշվ. աշխ., էջ 160-163.

¹¹⁴ Լատ. *viburnum* «թափառող ծառ» (այս մասին տե՛ս U. Quattrocchi, CRC World dictionary of plant names: Common names, scientific names, eponyms. synonyms, and etymology, Vol. 4, CRC Press, 1999, էջ 2793):

¹¹⁵ Ա. Մարգարյան, Գորիսի բարբառը, Ե., 1975, էջ 319:

հայտնի է որպես գրաբարից փոխառված բառ, ապա առկախ է մնում գիլմասրին, որ հնարավոր է շրջակա օտար լեզուների ազդեցությամբ ստեղծված բառ լինի, որի արդյունքում ունենք բարբառային տարբերակներ՝ գիլմասրի, գիլմասրի, գիլմրիասրի, գիլրմասրի, գըլըմասրի, գըլըմասրի: Հետաքրքրականն այն է նաև, որ եթե այն մի օտար բառի տարբերակ է, ապա Արցախում նոյնպես պիտի արձանագրված լիներ:

Գրաբարից Սյունիք-Արցախ բարբառախմբին անցած գերմասրի//գերմասրի բառի քննությունից պարզ է դառնում, որ այն կազմված է *ger- «ճկուն, կոր», և *մասր*՝ «հաստ, ամուր, պինդ» բառերից: Գիլմասրիի բառին վերաբերող տեսակետներից թերևս հակված ենք առաջինին՝ որպես գերմասրի բառից ծագած բարբառային համանուն:

M. S. Kumunts, Гермасст-гилимастри-земляное яблоко (Семантика и этимология). В Горисском диалекте слово *гилмасри* или *глыимастри* означает земляное яблоко. До сих пор не было исследований об этом слове. Как название растения, оно имеет сходство со словом *гирмаст* из грабара, которое распространено в диалектах Сюник-Арцах. Два названия, сохраненные в диалектах Гориса, показывают разные названия растений. Изучение выявляет, что слово *гермасст*//*гермасти*, вошедшее в территориальный диалект Сюник-Арцах из грабара, состоит из слов *ger- “гибкий, кривой” и *mast-(մասր)* “толстый, крепкий, твёрдый”. Из нескольких вариантов, относительно этимологии слова *гилмастри* самым вероятным является тот, по которому название растения является диалектической формой древнеармянского слова *гермаст*.

M. S. Kumunts. Germast-gilimastri-topinambour (Semantics and ethymology). In the dialect of Goris, word *gilmasri* or *gylymastri* means topinambour. Till now have not been studies about this word. As a plant name, it is like dialectical word *girmas* which is spread in Syunik-Artsakh dialects. Two names saved in dialects of Goris show different plant names. Study shows that word *germast/germasti*, passed from Old Armenian to Syunik-Artsakh dialectical group, is made of words *ger- “flexible, curved” and *mast-(մասր)* “thick, solid, firm”. From etymologies of word *gilimastri*, the most possible is that plant name is a dialectical form of Old Armenian word *germast*.

**ԱՆՁԻ ՀԱՏԿԱՆԻՇ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԱԾԱԿԱՆԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԻՊԵՐԸ ԵՎ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՋԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ
ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

Բանասիր. գիտ. թեկնածու Մ. Ռ. Բաղդադյան

Անձի հատկանիշ արտահայտող ածականական դարձվածային միավորների կառուցվածքային տիպերը և քերականական առանձնահատկությունները հայերենում, ռուսերենում և անգլերենում տարբեր են: Ինչպես Գ. Զահորյանն է նշում, «Քերականական կարգը ուրիշ կարգի չհանգեցնող, բովանդակության պլանում մեկ կամ ավելի հատկանիշներով հակադրվող և ծևաբանական կամ շարահյուսական միջոցներով արտահայտվող երկու կամ ավելի քերականույթների ամբողջություն է»¹¹⁶:

Անվանողական դարձվածքները իրենց որոշակի տեղն ու դերն ունեն լեզվի դարձվածքանության ընդհանուր համակարգում: Նրանք նյութական իմաստ ունեցող անվանական խոսքի մասերին պատկանող բառերից կազմված բառակապակցություններ են, որոնք զանազան իրողությունների համարում կամ հարաբերակցությամբ այլաբերական - փոխաբերական իմաստ են արտահայտում:

Անվանողական դարձվածային միավորների մի մասը փոխաբերական, վերահիմաստավորված կերպով նշում է որևէ անձ, առարկա կամ երևույթ, մյուս մասը՝ դարձյալ փոխաբերաբար, վերահիմաստավորված, անձի, առարկայի կամ երևույթի, ինչպես նաև գործողության որակական հատկանիշը, նրա առավելությունները և թերությունները և այլն: Մի մասն էլ պարզապես նշում է խոսողի դատողական և գնահատողական վերաբերմունքը առարկայի կամ հաղորդված մտքի վերաբերյալ: Խոսքում ունեցած այս գործառույթներով էլ անվանողական դարձվածային միավորները հարաբերակից են այս կամ այն խոսքի մասին և բացահայտ կամ քողարկված ձևով օժտված են տվյալ խոսքի մասին հատուկ մի շարք առանձնահատկություններով և քերականական կարգերով հանդես են գալիս նախադասության առանձին անդամների պաշտոններով¹¹⁷:

Ասվածն, անշուշտ, վերաբերում է նաև անձի հատկանիշ արտահայտող ածականական դարձվածքներին, սրանց նման առանձնահատկություններ՝ հիշյալ լեզուներում:

¹¹⁶ Գ. Բ. Ջայակյան, Օբщее и армянское языкоизнание, Ереван, 1978, էջ 113:

¹¹⁷ Խ. Գ. Բաղդադյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., 1986, էջ 90-91:

Ածականական դարձվածային միավորները հարաբերակից են ածականներին և վերահմաստավկորմամբ բնութագրում են այն անձը կամ արարկան, որին լրացնում են և նախադասության մեջ կատարում նույն շարահյուսական պաշտոնները, ինչ ածականը: Այս կարգի դարձվածային միավորների առանձնահատկություններից մեկն այն է, որ ամենսին պարտադիր չէ, որ նրանցում առկա լինի ածական բաղադրիչը: Այս դարձվածքների գերադաս անդամը կարող է լինել գոյականը, դերբայը, թվականը և այլն¹¹⁸:

Ածականական դարձվածքները զգայի թիվ են կազմում դիտարկվող երեք լեզուներում, և հատկանշական է, որ անգլերենում շատ են անձի հատկանիշ արտահայտող ածականական համեմատությունները: Ըստ բաղադրիչների կապակցության եղանակի՝ ածականական դարձվածային միավորները լինում են ստորադասական, համադասական և համաստորադասական, իսկ ըստ բաղադրիչների թվի՝ երկանդամ, եռանդամ և բազմանդամ:

1. **Երկանդամ կառուցներ:** Հայերենում ամենատարածված կառուցը գոյական (սեռական h.) + գոյական (ուղղական h.) կառուցն է: Այս կառուցի դարձվածքներից գրեթե բոլորը համեմատության արժեք ունեն, օրինակ՝ աչքի լոյս - ամենասիրելի ու հարգելի, դանձի կոթ - շատ նիհար, լոյսի կոր - շատ գեղեցիկ, մածնի մերան - խառնակիչ, բանսարկու, օգոստոսի աղվես - շատ նիհար:

Հայերենում, ոռւսերենում և անգլերենում երկանդամ ածականական դարձվածքներ են հանդիպում գոյական + ածական + ածական + գոյական կառուցվածքային տիպերով:

Գոյական + ածական տիպով կազմված անձի հատկանիշ արտահայտող դարձվածային միավորները հիմնականում շատ են հանդիպում հայերենում և պարունակում են մարմնի մասերի անվանումներ՝ սոմատիկ բառեր և դրանց հատկանիշներն ընդգծող ածականներ: Դարձվածքներից մի քանիսն ընդգծում են մարդկանց բնավորության գծերը: Մարմնի մասի միևնույն բաղադրիչը կարող է համադրվել բազմաթիվ ածականների հետ: Այս կառուցում դարձվածքի գերադաս անդամը գոյականն է:

Գոյական + ածական կապակցությամբ դարձվածքները, իրենց հերթին, կարելի է բաժանել երկու խմբի.

ա) դարձվածքներ, որոնց գոյական բաղադրիչը գործածվում է ուղիղ ձևով և գրեթե միշտ դրվում է որոշիչ հոդով: Օրինակ՝ բերանը մեծ-

¹¹⁸ Սրանք պետք չէ շփոթել ածականական դարձվածքների հետ, որոնց գերադաս անդամը պարտադիր ածական է՝ համաձայն բառակապակցությունների ձևաբանական դասակարգման:

գոռող, ամբարտավան, պողոտախոս, *սիրպը բարի* - բարեսիրտ, գթառատ, *երեսը սպիրտակ / ճերմակ* - պարզերես, *աչքը բաղդր* - բարեհամբոյր, *կողը հասդր* - համառ, *արյունը կապույք/կարմիր* - ազնվական, փափկասուն:

Այս կապակցությունների գերադաս անդամը գոյականն է, որը որոշիչ հոդի շնորհիվ նախադաս դիրքով է հանդես գալիս, փաստորեն դարձվածքի կողմնակի ենթական Է¹¹⁹:

Նմանատիա դարձվածքներում ածականը հաճախ իմաստափոխում է: Օրինակ՝ *աչքը ծանր* - չար, *ձեռքը ծանր* - ուժեղ, *աչքը ծակ* - ազահ, անկուշտ, *գլուխը ծակ* - անխելք, ոչ լրջամիտ:

բ) դարձվածքներ, որոնց գոյական բաղադրիչը գործածվում է բացառական հոլովով, խնդրային նշանակությամբ կապվելով ածական բաղադրիչի հետ, օրինակ՝ *խելքից կադ*, *խելքից պակաս*, *ոդքից թեթև* և այլն:

Գոյական + ածական կառուցվածքի դարձվածքներից շատերը լեզվի մեջ ունեն իրենց հականիշները, օրինակ՝ *ձեռքը երկար* (ունեսոր, հարուստ) – *ձեռքը կարճ* (ալքատ, չքավոր), *սիրպը բաց* (ուրախ, զվարթ) – *սիրպը փակ* (անսեր, մոայ)

Ռուսերենում գոյական + ածական կառուցվածքային տիպով կազմված անձի հատկանիշ արտահայտող դարձվածային միավորնեից են, օրինակ՝ *голова садовая* – ոչ խելամիտ, ոչ հնարամիտ, *голова еловая* – հիմար, ցույ լոպչատակ – խորամանկ, *горе луковое* – անհաջողակ, *чертолосатый* – սրիկա:

Անգերենում չենք հանդիպել գոյական + ածական կառուցվածքային տիպով կազմված անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների:

Հայերենում ածական (որակական) + գոյական (ուղղական – հայցական հ.) կառուցյում գոյականը գերադաս է, օգտագործվում է եզակի թվով և դրված է լինում անորոշ առումով: Շարահյուսական տեսանկյունից գոյական գերադաս անդամը ծավալվում է որոշչի պաշտոնում հանդես եկող ածականով, որն, իր հերթին, գերադաս է դարձվածայնորեն: Այս տիպի կառուցյուներն ավելի բնորոշ են հայերենի շարահյուսական համակարգին: Օրինակ՝ *սև շվար* – (ժող.) թշվառ, ողորմելի, *սև սալրանա* (խսկ.) – խիստ սևադեմ, սևամորթ. բանսարկու, չար, խորամանկ, *կարմիր կով* (բրբ.) – ցասկոտ, բարկացկոտ, *աղա մարդ* (խսկ.) – ազնվազարմ, *մեծ բերան* – գոռող, ամբարտավան, պողոտախոս:

¹¹⁹ Ռ. Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն, Ե., 1986, էջ 270-272:

Հայերենում այս կապակցություններից շատերն իմաստային առումով չեն տարբերվում գոյական + ածական կառույցից: Տարբերությունը միայն կառուցվածքի մեջ է. օրինակ՝ մեծ բերան - բերանը մեծ (գոռող, ամբարտավան, պոռոտախոս), *բաց ճակար* // *ճակարը բաց* - ազնիվ, հպատ:

Ուսերենում ևս գործածվում է է ածական + գոյական կառույցը, օրինակ՝ *ветряная мельница* – անլուզ, դատարկ, *серый человек* – (փիսք.), (խսկ.) - անտաշ, տգետ, յմная голова –խելոք, խելացի, զолотые руки - իր գործի վարպետ, գիտակ:

Անգլերենում հետևյալ կառույցը (հոդ) ածական + գոյական ներկայանում է որակական ածականով և գոյականով: Վերջադաս գոյականը դրվում է ուղիղ ձևով և հանդես է գալիս որպես գոյականական դարձվածային միավոր, օրինակ՝ *a big pot* – (բառացի՝ մեծ անոթ - կարսոր (անձ)), *a bad life* – (բառացի՝ վատ կյանք - թուլյ, թուլակազմ), *a big heart* – (բառացի՝ մեծ սիրութ - մեծահոգի), *an old hand (at sth)* – (բառացի՝ հին ձեռք - հմուտ ինչ-որ բանում), *red blood* - (փիսք.) - (բառացի՝ կարմիր արյուն - քաջ, խիզախ), *black heart* –(բառացի՝ սև սիրութ - չարագործ, սրիկա), *cabbage head* (բառացի՝ կաղամբ գլուխ - հիմար):

Հայերենում առկա են նաև դերբայներով կառույցներ, ընդ որում համեմատաբար լայն տարածում ունի հարակատար դերբայը: Գոյական + հարակատար դերբայ կառույցում գոյականը կարող է դրվել և՝ նախադաս, և՝ հետադաս, այլև և՝ որոշյալ, և՝ անորոշ առումներով, այնուհետև և՝ ուղիղ, և՝ թեք ձևերով, ինչպես նաև և՝ եզակի, և՝ հոգնակի թվերով. ինչպես նկատում ենք, զուգադրման բազմազանությունը բավականին մեծ է. օրինակ՝ *Երկիր լրեսած* – կյանքի փորձ ունեցող, հարուստ կենսափորձով, *լրանից ընկած* - երկրի գործերից անտեղյակ, ծամը կղրած - անբարոյական, թեթևաբարո, *քիթը ցցած* – գոռող, ամբարտավան, *կապը կղրած* – սանձարձակ և այլն:

Անորոշ առումով դրված գոյականներով կառույցների դեպքում ավելի որոշակի է զգացվում գերադաս հարակատար դերբայի դերը, իսկ երբ հարակատար դերբայը հանդես է գալիս որոշյալ առումով օգտագործված գոյականի հետ, ապա այդ դեպքում լրացում – լրացյալի կապը ավելի է սերտանում:

Գոյական (սեռական կամ բացառական հոլով) + հարակատար դերբայ կառույցում գերադաս անդամը՝ հետադաս հարակատար դերբայը, հանդես է գալիս այլ հոլովներով դրված նախադաս գոյականների հետ: Այստեղ նույնպես գործում է լրացում – լրացյալի կապը: Օրինակ՝

ասպծու աղոթած – հիմար, տիսմար, ապուշ, մոր պահած – քնքուշ մեծացած, ասպծու օրհնած - բարի, առաքինի, ազնիվ, քթից թռած – մեկին շատ նման, միևնույն բնավորությամբ:

Նմանատիպ կառուցում գոյական ստորադաս անդամը կարող է հեղանակի թվով հանդես գալ, օրինակ՝ քթերը ցցած, դեմքերը թթված և այլն:

Հայերենում բավականին մեծ թիվ են կազմում նաև Ենթակայական դերբայով բաղադրված կառուցները, ամենից առաջ՝ գոյական + Ենթակայական դերբայ: Կառուցի գերադաս անդամը՝ հետադաս Ենթակայական դերբայն է, իսկ գոյականով արտահայտված լրացում – անդամը սահմանափակ հոլովներով է հանդես գալիս և եզակի թվի անորոշ առումով: Օրինակ՝ արջ խաղացնող – կոպիտ, բիրտ, կոշտ, անշնորհք, էշ ներկող – խաբերա, խարդախ, անարժեք, խաբող, էշ արածացնող – հիմար, ապուշ, խոր արածող - անհասկացող, տգետ, խեղճ, ողորմելի:

Հայերենում Ենթակայական դերբայն ավելի հաճախ հանդես է գալիս սապանա բաղի հետ՝ սապանա խարող – խորամանկ, հնարագետ, սապանա հեծնող – ճարպիկ, համարձակ, սապանա նալող – շատ աչքաբաց, ճարպիկ: Այսպես նաև բաղադրություն մարմնի մասերի անվանումների հետ՝ կաշի քերթող - դաժան, կեղեքող, ձեռք բռնող – օգնող, կարեկից և այլն:

Խիստ սահմանափակ են ածական + Ենթակայական դերբայով կազմված կառուցները հայերենում: Օրինակ՝ շար հաչող – շատախոս, մեծ խոսող – պոռոտախոս, բարակ մանող – սաստիկ նիհար, հիվանդու:

Դիտարկվող լեզուներում շատ չեն թվական + ածական կառուցի ածականական միավորներ: Նման կառուցում գերադաս անդամը հետադաս ածականն է, օրինակ, հայերենում՝ երկու երեսանի – կեղծավոր; չորս ուրանի – հիմար, յոթ զիշանի – հրեշավոր, անգլերենում՝ two-faced - կեղծավոր, իսկ ռուսերենում չենք հանդիպում նման կառուցով դարձվածքների:

Ածականական դարձվածային միավորներ են կազմում նաև թվական + գոյական համադրումով կազմված կապակցությունները. Կառուցում հանդես է գալիս մի բառը, որը ոչ այնքան թվականի, որքան քչություն, փոքրություն, պակասություն նշելու հմաստ ունի, իսկ որոշ կապակցություններում էլ՝ նմանության, օրինակ՝ մի բուռ – փոքրամարմին, մի մարդ-տարիքով փոքր, մի խելքի - բնավորությամբ իրար նման, մի խնձոր – իրար շատ նման:

Թեև կապերը և կապական բառերը հիմնականում պարագայական կիրառություն ունեն և ավելի հաճախ բայական միավորներում են օգտագործվում, բայց մի շարք դարձվածքներում գործածվելով, դրանց

ածականական իմաստ են տալիս: Մեզ հանդիպել են հետևյալ կառույցները՝ գոյական + կապական բառ, օրինակ՝ սարի պես – հաղթանդամ, աչքը դուրս – թեթևաբարո: Կապական բառ + ածական, օրինակ՝ դակը դադարիկ - առջատ, դակը լիքը – հարուստ, ունկոր, վերնահարկը դադարիկ – հիմար, անխելք: Կապ + հարակատար դերբայ, օրինակ՝ Եղ ընկած – հետամնաց, դակ զարկած – տուժած և այլն:

Նման կառույցները, ինչպես ընդունված է մասնագիտական գրականության մեջ, համարվում են դարձվածային սերտաճումներ: Սրանք մեկ բառի արժեք ունեն, քանի որ հանդես են գալիս որպես հարադրություններ¹²⁰:

2. Եռանդամ կառույցներ: Ածականական եռանդամ կառույցները բարդ կապակցություններ են. այստեղ հանդես են գալիս մեկից մինչև երեք խոսքի մասեր: Շատ հետաքրքիր է այն երևոյթը, երբ երեք գոյականների համադրումից գոյական + գոյական + գոյական ստացվում է ածականական դարձվածք, օրինակ՝ ասդծու ծեռքի թաշկինակ – շատ խելոք, հեզաբարո, համեստ, սիրող լեզվի ծայրին – դյուրահավատ, զգացմունքները չթաքցնող:

Ռուսերենում, թեև հազվադեպ ևս հանդիպում են գոյական + գոյական + գոյական կառույցվածքային տիպով կառույցներ, օրինակ՝ սինեպօրօքելազ – ամենասիրելի, ամենամտերիմ:

Անգլերենում եռանդամ կառույցներ են առկա ածական + նախդիր + գոյական կառույցվածքային տիպով, օրինակ՝ green with envy – խանդուտ, նախանձոտ: green/white around the gills –•ունատ:

Հայերենում առկա են եռանդամ կառույցներ ածական + գոյական + հարակատար դերբայ կառույցվածքային տիպով: Օրինակ՝ կանաչ դերկից ընկած // կարմիր արևից ընկած – վաղամեռիկ:

Նման կառույցի գերադաս անդամը հարակատար դերբայն է, իսկ նախադաս ածականը լրացնում է գոյականին: Այս կառույցը դարձվածյին սերտաճում է, որի իմաստը պայմանավորված է երեք բաղադրիչների իմաստային ամբողջականությամբ:

Հայերենում բավականին տարածված է գոյական + գոյական + հարակատար դերբայ կառույցը, որում հարակատար դերբայը վերջադաս է և կատարում է գերադաս անդամի դեր, իսկ նրան նախորդող երկու գոյականներից առաջինը հանդես է գալիս սեռական հոլովով, երբեմն էլ՝

¹²⁰ Ռուսերենում և անգլերենում մեզ չեն հանդիպել անծի հատկանիշ արտահայտող բաղադրիչներով կառույցվածքային այլ տիպերով երկանդամ ածականական դարձվածքներ:

ուղղական – հայցական, իսկ երկրորդը՝ տարբեր հոլովներով, օրինակ՝ օձի պոչ կծած – շատ խորամանկ, բերանի կապը կտրած – 1. սանձարձակ, 2. հայիոյաեր, էջի ականջում քնած – (խսկց.) ապուշ, տխմար, անտեղյակ // ուղղի ականջում քնած (խսկց.) – անտեղյակ, միամիտ և այլն:

Կան նաև գոյական + գոյական + ենթակայական դերբայ կառուցվածքով դարձվածներ, որոնցում ենթակայական դերբայը վերջադաս է և գերադաս անդամի դեր է կատարում, առաջին գոյականը բաղադրիչը դրվում է սեռական հոլովով և հատկացնությունը դեր է կատարում, իսկ երկրորդ բաղադրիչ գոյականը՝ ուղիղ խնդրի, օրինակ՝ նապաստակի սիրու ունեցող - երկչու, խեղճ, մոր ծիծ կորող - ճարպիկ, արջ պար ածող – (փիբ.) կոպիտ, կոշտ-կոպիտ, աչքից մազ հանող (խսկց.) – ճարպիկ գող, աչքի սուրմա թոցնող – 1. շատ ճարպիկ, 2. գող, ավազակ:

Գոյական + գոյական + ածական եռանդամ կառուցները հիմնականում դարձվածային սերտաճումներ են լինում, օրինակ՝ գլուխը դարմանով լիքը (գրիկ.) – հիմար, ապուշ, անխելք, երեսի կաշին հասկ -անամոթ, ինքնասիրություն չունեցող, երեսը պինդ, խելքի ծալք պակաս – թեթևասոլիկ, աշխարհից աչքը կուշքը – շատ պահանջներ չունեցող: Ուսերենում և անգերենում չենք հանդիպել եռանդամ այլ կառուցվածքային տիպերով դարձվածների:

Քանակությամբ շատ քիչ են թվական + գոյական + դերբայ կառուցի դարձվածային միավորները, օրինակ՝ հազար մաղով անցկացրած – լիրք, աներես ճարպիկ, փորձառու, զտված, մաքրված, մի կողմը դարած – միամիտ:

Դերանուն + գոյական + դերբայ կառուցում դերանունը համադրվում է գոյականի և դերբայի հետ, օրինակ՝ այն աշխարհից եկած - անտեղյակ:

3. **Քառանդամ կառուցներ:** Ածականական դարձվածային միավորների կառուցները հիմնականում կազմված են լինում ածականական իմաստ հաղորդող հարակատար կամ ենթակայական դերբայներով: Ուսումնասիրության ընթացքում մեզ հանդիպել են հետևյալ կառուցվածքային տիպով անձի հատկանիշ արտահայտող ածականական քառանդամ դարձվածային միավորներ գոյական + գոյական + հարակատար դերբայ + գոյական: Օրինակ՝ գեղի երեսին ընկած դաշեղ - անզոր, անօգնական, գայլի բերան ընկած գառ - անօգնական, անմեղ, փորձանքի մեջ ընկած: Նմանատիպ կառուցներում հարակատար դերբայը միջադաս է և ուստի գերադաս անդամի դեր չի կատարում: Գերադաս անդամը

դառնում է վերջին գոյականը, իսկ մյուս բաղադրիչները լրացնում են իրար, ինչպես նաև վերջին բաղադրիչին:

Կան նաև օրինակներ, երբ հարակատար դերբայը վերջադաս դիրքում է հանդես գալիս. այս դեպքում կառուցի գերադաս անդամը դերբայն է, իսկ նրան նախորդող անդամները լրացնում են իրար, և նախավերջինը նոր միայն լրացնում է դերբային: Ամբողջ կառուցը հանդես է գալիս որպես համաձոյլ կապակցություն, օրինակ՝ ծվից նոր դուրս եկած - անփորձ, խանձարուրից դեռ դուրս չեկած - մանուկ, փոքր:

Ենթակայական դերբայով կառուցները ավելի քիչ: Նման կառուցներում ենթակայական դերբայը ետադաս է և հանդես է գալիս որպես գերադաս անդամ, իսկ բաղադրիչները իրար լրացնելով՝ լրացնում են ենթակայական դերբայը, օրինակ՝ մուգ տեղը մազ մանող (խսկց.) – շատ կծիծի, էշի ականջում զուտնա փշող (բրոբ.) – ապուշ, հիմար, անտեղյակ:

4. *Հնգանդամ կառուցներ*: Հնգանդամ ածականական դարձվածային միավորները համեմատաբար ավելի քիչ են: Դիտարկված են կառուցներ, որոնցում հարակատար կամ ենթակայական դերբայը հանդես է գալիս որպես գերադաս անդամ և լինում է վերջադաս: Օրինակ՝ մինչև կոկորդը գործի մեջ թաղված - անվարժ, անփորձ, սալրանից յոթ օր առաջ ծնված – չափազանց խորամանկ, գործարար, ամեն քարի դրակից դուրս եկող – հնարագետ, ճարպիկ, մի քոռ կոպեկի խելք չունեցող – հիմար, անխելք և այլն:

Ինչպես նկատում ենք, եթե և՝ հայերենում, և՝ անգլերենում, և՝ ռուսերենում հանդիպում են ածական + գոյական կառուցվածքային տիպով կազմված անձի հատկանիշ արտահայտող դարձվածքներ, ապա ածական + նախորդ + •ոյական կառուցը հասուկ է միայն անգլերենին, իսկ գոյական + գոյական + ենթակայական դերբայ, գոյական + գոյական + հարակատար դերբայ և գոյական + հարակատար դերբայ + գոյական կառուցները՝ հայերենին:

Լեզուներում անձի հատկանիշ արտահայտող բազմանդամ գոյականական դարձվածային միավորները համեմատաբար շատ են բայականներում, քանի որ շատ անվանական դարձվածքներ (այդ թվում և ածականական), գործածվելով անորոշ դերբայի հետ, վերածվում են բայական միավորի:

Նշված լեզուներում սակավաթիվ են ոչ համեմատական ածականական դարձվածքները, սակայն անգլերենում բավականին մեծ թիվ են կազմում անձի հատկանիշ արտահայտող ածականական համեմատությունները, որոնք էլ սակավաթիվ են հայերենում և ռուսերենում: Ածակա-

նական համեմատությունները կարող են վերաբերել նաև անձին: Յուրաքանչյուր համեմատություն արտահայտում է գնահատական, որ կարող է լինել դրական կամ բացասական: Եվ դա հիմնականում կախված է առաջին բաղադրիչի իմաստից: Անձի հատկանիշ արտահայտող ածականական համեմատությունների առաջին բաղադրիչը սպիրաբար օգտագործվում է իր ուղղակի իմաստով, մինչդեռ երկրորդի իմաստն ավելի ընդգծված է: Օրինակ՝ as black as coals (բառացի՝ ածխի պես սև) – ածուխի պես սև (աչքերի մասին): = черныie как угорьки; as mad as a badger (բառացի՝գորշուկի պես խելագար – խելագար, as mad as a wet hen (բառացի՝ թրջված հավի պես խելագար - զայրացած, as white as milk (բառացի՝ կաթի պես սպիտակ – կաթի պես ճերմակ), as white as death (բառացի՝ մահի պես սպիտակ – քաթանի պես սպիտակ, գունատ), as white as a ghost (բառացի՝ ուրվականի պես սպիտակ – չափազանց գունատ), եղանակ ու պոտոհություն (սպասարկություն) – համար = as stubborn as a mule, կրաքար ու ռազմական պատճեն = red as a crayfish, կրաքար ու ռազմական պատճեն = red as a lobster.

Հայերենում ևս հանդիպում են անձի հատկանիշ արտահայտող բաղադրիչներով ածականական համեմատություններ: Օրինակ՝ սև աղվեսի պես – հազվադեպ երևացող, եկող, այցելող, սև ուրբաթի պես – տխուր, անտրամադիր, լուր, անխոս:

Վերը նշված համեմատությունները դարձվածային սերտաճումներ են: Նրանք ունեն դարձվածքին բնորոշ ամենակարևոր հատկանիշներից երկուար՝ կայունություն և վերահմաստավորված բաղադրիչների ընդհանուր իմաստ: Պետք է նշել նաև, որ դարձվածքների միայն գոյական բաղադրիչն է, որ կարող է տարբերակներ ունենալ, իսկ ածականը պետք է անփոփոխ մնա: Նկատում ենք նաև, որ որոշ համեմատություններում ածականն օգտագործվում է ուղղակի իմաստով, իսկ մյուսներում՝ փոխարերական: Հատկանշական է նաև այն, որ որոշ դարձվածքներ ունեն համարժեքներ մյուս լեզուներում:

Համադասականկապակցությամբ ածականական դարձվածային միավորները երկանդամ են, հիմնականում հայերենում բաղադրիչները գոյականներ են և գրվում են գծիկով, օրինակ՝ աչքով-ունքով – արտաքինը անթերի, գեղեցիկ, ողով – ծեռով – գրունյա, համով – հողով – սիրելի, հաճելի: Հանդիպում են նաև քառանդամ կառուցներ, որոնք օգտագործվում են հանեմատությունների դեպքում: Նման կառուցները կազմված են լինում երկու մասից, որտեղ երկրորդ մասը հակադրվում է առաջինին կամ ժխտում առաջինի գաղափարը, օրինակ՝ ներսը / ներսից սարանա դուրսը/դրսից քահանա - կեղծավոր, երկերեսանի, նենգ, դրսից

հայելի, ներսից ածելի – արտաքնապես ազնիվ ցույց տվող, բայց նենգ, խորամանկ, դրսից հրեշտակ՝ *ներսից սաղանա* – արտաքնապես ազնիվ ցույց տվող, բայց նենգ, խորամանկ և այլն:

Դուսերենում և անգլերենում համադասական կապով ածականական դարձվածքները կազմված են երկու մասից և գրվում են համադասական ռուս. և, անգլ. and շաղկապով, կամ գծիկով, օրինակ՝ *без рода и племени* – ցածր դասի, մոլոծ – չելեռո - անփորձ, *коха да kosti- շատ նիհար,* *milk and water* - գունատ, թույլ, *fair and square* - ազնիվ, *free and easy* - ազատ, անկաշկանդ, *alive and kicking* - առողջ:

Համաստորադասական կապակցությամբ ածականական դարձվածային միավորներում համադաս կառույցը որը լրացնում է գերադաս անդամին կարող է արտահայտվել գոյականի թե՛՛ուղիղ և թե՛՛թեք ձևերով. օրինակ՝ *мхи по монголиցից ելած* (խոսկ.) – նիհարած, հյուծված, *ձեռն ու ովզը թուղացած* – ուշապառ՝ տկարացած եղած, *ողից - ձեռից ընկած* – անզոր, դնից – դեղից կրրված – օտարական դարձած, վտարանդի և այլն:

Անգլերենում հանդիպում են ածականական դարձվածքներ, որոնք գրվում են գծիկով. օրինակ՝ *silver - tongued* - պերճախոս, *smooth - tongued* - պերճախոս:

Այսպիսով, ուսումնասիրելով երեք լեզուներում անձի հատկանիշ արտահայտող ածականական դարձվածքները, նկատում ենք, որ դրանք ունեն մի շարք իմաստային – կառուցվածքային և քերականական առանձնահատկություններ, որոնցից առավել հատկանշական են հետպալները.

ա) ածականական դարձվածքներում գործում են քերականական մի շարք կարգեր, անվանական՝ առկայացման, գոյականի հոլովի, թվի, ածականը միշտ օգտագործվում է դրական աստիճանով (հայերենում եթե երկու անձի տվյալ հատկանիշը չենք համեմատում), օրինակ՝ *արյունը կապույտ, սիրով սև, գլուխը ճերմակ, բերանը մեծ*. Գոյականաբար գործածվելիս ածական բաղադրիչները կարող են օգտագործվել որոշյալ հոդով և տարբեր հոլովներով, օրինակ՝ *ասպծու երեսից ընկած - չար, անպետք մարդ, լեզվի կապերը կրրած - սանձարձակ, զազրախոս, հայ-հիյասեր մարդ*: *Հիշյալ կարգերը մի դեպքում ունեն իմաստազատիչ դեր, մյուս դեպքում գորկ են այդ դերից*:

բ)Ածականակերտ ածանցները (հայերենում -ե, -յա, -ային, -եղեն) գործուն չեն ածականական դարձվածային միավորներում, սակայն երբեմն դարձվածքը օգտագործվում է -ություն ածանցով, և այդ դեպքում կապակցությունը վերածվում է վերացական գոյականի, օրինակ՝ *սիրով*

նեղ + ություն = սրտնեղություն, *բերանք բաց + ություն* = բերանբացություն և այլն: Ի դեպ՝ -ություն ածանցը դրվում է թե՝ ածական, և թե՝ գոյական բաղադրիչների վրա:

գ) Հայերենում անձի հատկանիշ արտահայտող ածականական դարձվածքներ կազմելու գործում մեծ դեր են կատարում նաև հարակատար և ենթակայական դերբայները: Վերջինները գործածվելով գոյականներին կամ այլ խոսքի մասերի հետ, դարձվածքները օժտում են ծևաբանական զանազան առանձնահատկություններով: Եթե հարակատար կամ ենթակայական դերբայը նախադաս է, ապա նրա հետ հանդես եկող գոյականները չեն հոլովվում, իոդ չեն ստանում, իոզնակի թվով չեն դրվում, այդ հատկանիշներով դրանք հանդես են զայիս հարակատար դերբայից առաջ դրվելիս, օրինակ՝ *մոր պահած, վասկծու օրինած, վրթից թռած*:

դ) Ուսւերենում և անգլերենում հաճախ են հանդիպում *как; as ... as* կառուցների համեմատական դարձվածային միավորները՝ *белый как полотно, упрям как осел, as stubborn as a mule, as white as death, as white as a ghost*: Հայերենում համեմատական դարձվածքները շատ չեն:

ե) Դարձվածքները հիմնականում սերտաճումներ են: Դրանց մեծ մասը մենիմաստ է, սակայն հանդիպում են նաև բազմիմաստ դարձվածքներ:

զ) Երեք լեզուներում օգտագործվում են միևնույն կառուցվածքային տիպին պատկանող, իրար համարժեք, այլև կապական բառերով և նախուիրներով կազմված դարձվածային միավորներ, իսկ մասնակի տարբերությունները պայմանավորված են դրանց տիպաբանական առանձնահատկություններով:

M. R. Badadyan. Структурные типы адъективных фразеологизмов характеризующих качества человека в армянском, русском и английском языках. – Статья посвящена сопоставительному изучению структурных типов и грамматических особенностей адъективных фразеологизмов в армянском, русском и английском языках характеризующих человека.

Исследования показывают, что адъективные фразеологизмы характеризующие человека могут иметь разные структурные и грамматические особенности. Иногда указанные особенности различаются в том или ином языке. Сходства и различия указанных особенностей зависят от типологических особенностей изучаемых языков.

M. R. Badadyan. Structural Types of attributive phraseological Units Characterizing the Qualities of the Person in the Armenian, Russian and English Languages. – The article is devoted to the analysis of

structural types and grammatical peculiarities of adjectival phraseological units characterizing a person in Armenian, Russian and English.

Studies show that adjectival phraseological units (both comparative and non-comparative) can have different structural types and grammatical characteristics. Sometimes these characteristics are similar in the languages considered but they mostly differ in different languages. The differences revealed in the mentioned characteristics depend on the typological peculiarities of the languages studied.

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ. ՊԵՎԵՀՅԱ. REVIEW.

Լ. Շ. Հովհաննիսյան, Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն. (III մաս) Խաղողագործություն-գինեգործություն, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2018, 67 էջ:

Աշխատանքն իրականացվել է հայերենի տարբեր կարգի փաստերի ծավալուն և մանրամասն ուսումնասիրությամբ, ինչպես նաև լեզվի տարբեր շրջաններին վերաբերող հետազոտությունների նորագույն տվյալների օգտագործմամբ:

Լ. Հովհաննիսյանի՝ գրաբարի բառապաշարի իմաստային քննության երրորդ մասը՝ խաղողագործություն-գինեգործություն, ըստ էության ամբողջացնում է տասը տարի առաջ սկսած իր հետազոտությունը: Հեղինակը առաջին գրքում (2008թ.) քննում է բառապաշարի չորս իմաստային խումբ (համապատասխան ենթախմբերով): ա) մարդ, կյանք, մահ, բ) հիվանդություն, բժշկություն, գ) ժամանականիշ բառեր, դ) գունանուններ, երկրորդում (2012թ.)՝ վեց թեմատիկ խումբ՝ ա) ուրեմնիք և ըմպելիք, բ) հագուստ և զարդարանք, գ) կենցաղային իրեր, սպասք, գործիքներ, դ) կենդանական աշխարհ, ե) բուսական աշխարհ, զ) երաժշգույթյուն, երաժշգուական գործիքներ: Այսպիսով՝ հիշյալ խորագրով երեք գրքերում քննվել է տասներկու իմաստային խումբ՝ 45 ենթախմբերով:

Ամենևին պատահական չէ, որ տվյալ դեպքում գիտնականն առանձնացնում է խաղողագործությունը և գինեգործությունը: Հայաստանը եղել է վայրի խաղողի, նաև խաղողի ընտելացման հիմնական տարածք: Խաղողագործության հնագույն ակունքները ենթադրում են նաև Հայաստանում գինեգործության վաղնջական շրջանի առկայություն, որը հաստատվում է ինչպես օտարալեզու արձանագրություններով և գրականության ընձեռած փաստերով, այնպես էլ հնագիտական տվյալներով: Աշխատանքում մանրամասն քննված են գրաբարում խաղողագործության և գինեգործության իմաստային դաշտի անվանումները, այդ բառային միավորների բառակազմական, գործառական առանձնահատկությունները:

Գրաբարյան շրջանի վկայություններից բացի Լ. Հովհաննիսյանն անդրադարձել է բարբառներում և միջին հայերենում գործածական որոշ բառերի, որոնք ըստ ծագման բնիկ են կամ ինը փոխառություններ: Դասակարգումները կատարելիս հեղինակը օգտվել է բառարաններից, գրաբար մատենագրության նյութից, որպիսով հնարավոր է եղել բացահայտելու մի շարք նոր իրողություններ: Պարզվում է, որ 5-րդ դարի ինքնու-

րույն գրականության մեջ խաղող բառը վկայված չէ, կա միայն թարգմանության մեջ, հատկապես Աստվածաշնչում. խաղող-ի ոչ հաճախական կիրառության պատճառն այն է, որ հասկացությունը գրաբարում արտահայտվում է «որթ», «գինի», նաև «այգի» բառերով:

Աշխատանքում քննության առարկա են բառերի հաճախականությունը, հոմանիշությունը, բազմիմաստության այն նրբերանգները, որոնք գրաբարի բառարաններում արտացոլված չեն. այգի, գինի բառերի «խաղող» իմաստն արձանագրված չէ, «գինի» հասկացությունը գրաբարում արտահայտվում է նաև «արյուն խաղողոյ» բառակապակցությամբ. «Եվ զարին խաղողոյ ըմպէին գինի...» (Ծննդ., Խթ 14) և այլն:

Հեղինակն անդրադառնում է նաև բառակազմական հարցերի, նշվում է գինի բառի հաճախականությունը Աստվածաշնչում, պատմիչների երկերում, տրվում են մի շարք կազմություններ՝ գինարբու, գինեբուղի, գինեմրուր, գինեսէր, գինըմպութիւն և այլն: Ըստ հեղինակի՝ խաղող բառի գործածության նվազ հաճախականության պատճառը այն է, որ այդ հասկացությունն արտահայտվում է այլ բառերով՝ գինի, որթ, այգի և այլն:

Մատենագրական տվյալները հաստատում են, որ Հայաստանում ոգելից խմիչքներից օգտագործել են առավելապես գինին: Այդ բառով են կազմված Գինեբերի վանք, Գինեկանից սուրբ Աստվածածին, Գինեթաղը, Գինեփոս, Գինեկե տեղանունները և այլն: Բերվում են նաև գինու տեսակների անվանումներ՝ արքունի կամ թագավորական գինի, անապակ գինի, անուշահող, անուշահամ գինի, որի տեսակն է քաղցուն, ծաղկահամ գինի, պարզ կամ պարզեալ գինի և այլն: Գրքում նշված են նաև գինի բաղադրիչով դարձվածքներ՝ ընդ գինիս մրանել, զայրանալ ի գինոյ, գինին գալ զակամք և այլն: Նման օրինակները լեզվամտածողության, ժողովրդախոսակցական լեզվի յուրահատկությունների արժեքավոր տվյալներ են:

Այսուհետև, արբ արմատով վկայված մի շարք կազմությունների իմաստները համադրելով՝ հեղինակը նկատում է, որ «խմել» իմաստը հետզիետե տեղի է տալիս «հարբել» իմաստին: Գինի բաղադրիչով կազմությունների մեջ ուշադրության են արժանի գինեզէն բառը՝ «գինով գինեալ», այսինքն՝ «արբեալ կամ արբեցուցեալ», գինեհար-ը՝ «գինու խփած», «հարբած», գինեճան-ը՝ ճան իրանական ածականակերտ ածանցով կազմությունը՝ «հարբած» նշանակությամբ:

Ավելորդ չէ նշել, որ ավելի քան 30 տարի գրավելով գրաբարի բառապաշտի ուսումնասիրությամբ՝ Լ. Հովհաննիսյանը հավաքել է նաև ՆՀԲ-ում չվկայված 5000 բառ, դասակարգումները լրացրել է նաև այդ

կարգի բառերով՝ ստուգաբանական-բառաքննական հնարավոր դիտարկումներով։ Այդ բառերի գերակշիռ մասը թարգմանական գրականությունից է, որի բառապաշտը մինչև օրս բավարար չափով ուսումնասիրված չէ։ Բոլորիս հայտնի գինեծօնութիւն բառը վկայված է թարգմանական գրականության մեջ՝ «որևէ բանի հիշատակին գինին վիրելը»։

Լ. Հովհաննիսյանը հայոց լեզվի պատմության առաջատարներից է, և բոլոր աշխատանքները նրան բերել են հմուտ ու լայնախոհ լեզվի պատմաբանի համբավ։

Ամենայն իրավամբ կարող ենք ասել, որ «Գրաբարի բառապաշտի իմաստային խմբերի քննությունը» ամբողջությամբ նոր խոսք է հայերենագիտության մեջ և բացահայտում է տվյալ բնագավառի վիճակարուց շատ հարցեր և առաջադրում նոր խնդիրներ։

Բանասիր. գիւր. թեկնածու Գ. Մ. Միհիթարյան

ԵՐԱԽՏԱՇԱՏ ԼԵԶՎԱԲԱՆ-ՀԱՅԱԳԵՏԸ

Հայերենագիտության նորագոյն շրջանը աչքի է ընկնում լեզվաբանների մի շարք անուններով, որոնք մի սերնդի ծևով, վերջին 40-50 տարի լծվեցին հայոց լեզվի տարբեր կողմերի համապարփակ ուսումնասիրությանը. լեզվաբան-հայերենագետներ պետական համալսարանում, մանկավարժական բուհերում, գիտությունների ակադեմիայում: Նրանք մեր լեզվի գիտական ուսումնասիրությունը բարձրացրին մի նոր, աննախադեպ մակարդակի: Այդ սերնդի մեջ է անվանի լեզվաբան Արտաշես Պապոյանը, որ այսօր բոլորել է իր ծննդյան 90-ամյակը:

Ա. Հ. Պապոյանը ծնվել է 1928թ. նոյեմբերի 13-ին Ուգբեկստանի Անդիֆան քաղաքում: 1948թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը, որն ավարտել է 1953թ.: 1953-1957 թթ. աշխատել է ՀԽՍՀ Մարտունու շրջանի դպրոցներում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: 1958-1963 թթ.եղել է Երևանի պետական համալսարանի իրատարակչության գլխավոր խմբագիրը:

1960թ. ընդունվել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի ասափիրանուրան և ավարտել է 1963թ.: Անվանի հայագետ, ակադ. Գ. Գ. Սևակի գիտական դեկավարությամբ գրել է թեկնածուական ատենախոսություն «Կախյալ շարահարությամբ բարդ նախադասությունները արդի հայերենում» թեմայով, պաշտպանել է 1966թ.¹ ստանալով բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Բավականին արժեքավոր է այդ աշխատանքը, իր տեսակի մեջ՝ յուրօրինակ (իբրև մենագրություն լուս է տեսել 1968թ.): Այստեղ գեղարվեստական, գիտական և հրապարակախոսական գրականությունից, լեզվի խոսակցական տարբերակից քաղված փաստական հարուստ նյութի հիման վրա քննվում են բարդ նախադասության կազմում շարահարական կախվածությամբ հանդես եկող միավորների տիպերը, սրանց կառուցվածքային առանձնահատկությունները, իմաստային նրբերանգները, ոճական արժեքը:

1970 թ. սկսած երիտասարդ ուսումնասիրողի կյանքում մի տեսակ շրջադարձ է լինում դեպի արդի բանաստեղծության լեզվի ուսումնասիրության բնագավառ: Տարիների տքնածան աշխատանքի արդյունք է այն, որ

լոյս է տեսնում «Պարույր Սևակի չափածոյի լեզվական արվեստը» մենագրությունը, որին հետևում են երեք ծավալուն հատոր կազմող բառարանները՝ նվիրված անվանի բանաստեղծի լեզվի տարրեր կողմերին: Նա լավագույնս քննել է Սևակի բանաստեղծական-լեզվական տարրերը, վերջինի բաղադրամասերն ու միջոցները, բառապաշտի զանազան շերտերի ոճական առանձնահատկությունները, մասնավորապես լեզվի ժողովրդայնությունը պայմանավորող իրակությունները: Բուն նյութին զուգահեռ արծարծվում են մեր գրական լեզվի պատմության ու զարգացման հեռանկարների հետ առնչակցված, ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող մի շարք խնդիրներ:

Հետագայում՝ 1987թ., Ա.Պապոյանը հիշալ մենագրությամբ պաշտպանում է դոկտորական թեզ և ստանում բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան, մեկ տարի անց՝ արժանանում է պրոֆեսորի կոչման:

Ա. Պապոյանի գիտական հետաքրքրությունների տիրույթում են եղել նաև ժամանակակից հայոց լեզվի կառուցվածքի, մասնավորապես շարահյուսության հիմնահարցերը, ոճագիտության տեսական և գործնական խնդիրները, բառարանագրությունը, անցյալ դարասկզբի, առաջին հերթին՝ հետպատերազմյան շրջանի արևելահայ չափածոյի տաղաչափության և լեզվական արվեստի հարցերը:

Նա հեղինակ է մի շարք մենագրությունների, բառարանների, բուհական ծեռնարկների, դասագրքերի և այլ աշխատությունների, ինչպես՝ «Պարույր Սևակի չափածոյի բառապաշտը» (Ե., 1970), «Չափածոյի լեզվական արվեստի հարցեր» (<Սահյանի չափածոյի և Վ. Դավթյանի ասքերի լեզվի քննություն) (Ե., 1976), «Պարույր Սևակի չափածոյի բառարան» (հ. 1-2, Ե., 1981-1982), ինչպես նաև «Պարույր Սևակի աշխատությունների և թարգմանությունների բառարան» (Ե., 1986), «Ակնարկներ Պարույր Սևակի բառապաշտի և տաղաչափության» (Ե., 1991):

Ունի ևս երկու մենագրություն՝ նվիրված արդի հայերենին. «Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ծեռնարկ» (Ե., 2004), «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն» (հեղինակակից՝ Խ. Բաղիկյան, Ե., 2003) և այլն: Հայաստանի և արտերկրի գիտական հանդեսներում, մամուլում անվանի լեզվաբանը տպագրել է 200-ից ավելի հոդվածներ, որոնք վերաբերում են գիտական տարրեր խնդիրների:

Իր կյանքի գործը, սակայն, վաստակաշատ լեզվաբանը համարում է Պարույր Սևակի լեզվի եռահատոր բառարանը, որի կազման աշխատանքները տևել են մեկուկես տասնամյակից ավելի. բառարանի 1-ին հատորի առաջաբանում նման գործի կարևորության մասին խոսելիս շեշտում է. «Վաղուց է վկայված խոսքի մշակույթի գործիչների հեղինակային բառարաններ կազմելու անհրաժեշտությունը», որը «դառնում է առավել հրամայական, երբ մշակույթի տվյալ գործի ունեցած ավանդները հայտնի չափով նպաստ են բերում նաև լեզվի զարգացման ասպարեզում», և ինչպիսին որ է Պարույր Սևակի «չափածոյի արտակարգ հարուստ, ճոխ ու հնչեղ, ոսկեղենիկ լեզվի բառապաշարը»¹²¹:

Ա. Հ. Պապոյանի իմացական տարերքի գիտական մասին միանում է կրթականը. 1963-2008թթ. նա աշխատել է Երևանի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնում, նախ՝ որպես դասախոս, ապա՝ ավագ դասախոս, դոցենտ, պրոֆեսոր: 1991-1994 թթ. համատեղությամբ աշխատել է ԵՊՀ իջևանի մասնաճյուղում՝ որպես բանասիրական ֆակուլտետի դեկան և հայոց լեզվի ամբիոնի վարիչ, 1994-1997թթ.¹ Գավառի պետական համալսարանում՝ որպես հայոց լեզվի ամբիոնի վարիչ, 1968-1971թթ. եղել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկանի տեղակալ, երեկոյան և հեռակա բաժինների դեկան: 1984-1987թթ. աշխատել է ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարությանն առընթեր՝ հայոց լեզվի գիտամեթոդական խորհրդի գիտնական քարտուղարը: 2009-2014 թթ. աշխատել է Երևանի «Գլածոր» համալսարանում՝ որպես հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ: Ամենուրեք ճշտապահ ուսուցիչ, բանիմաց դասախոս. նվիրյալ պրոֆեսոր, այդպիսին է եղել ծերունազարդ գիտնականի անցած ճանապարհը:

Ծնորհավորում ենք բազմավաստակ գիտնականին և մանկավարժին իր հոբելյանի առթիվ, մաղթում քաջառողջություն, արևշատություն և ամենայն բարիք:

Բանասիր. գիտ. թեկնածու Կ. Լ. Առաքելյան

¹²¹ Ա. Պապոյան, Պարույր Սևակի չափածոյի բառարան, հ. 1, Ե., 1981, էջ 5-6:

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. ԿԱՂՋԻ ՕԲՈՅՇԵՆԻ.
BOOK REVIEWS

Ա.Ֆիշենկեան, «Արևմտահայերէնի քերականութեան պատմութիւն (Յետայտընեանական շրջան)», Ե., «Ասողիկ», 2018, 156 էջ:

Լոյս է տեսել ԳԱԱ լեզվի ինստիտուտի արևմտահայերէնի բաժնի աշխատակցի հիշյալ վերնագրով գիրքը, «Նվիրված է գրական արևմտահայերէնի հետայտընական շրջանի քերականական համակարգի ուսումնասիրության պատմությանը»: Հեղինակն անդրադառնում է գրական արևմտահայերէնի ծևաբանությանը, մասնավորապես գոյականին (էջ 13-49) և բային (էջ 50-137): Գիրքն ունի ներածություն (էջ 3-9), սեղմ անդրադարձ ծևաբանությանը՝ իբրև քերականական երևույթի (էջ 10-12), ինչպես նաև եզրակացություններ (էջ 138-139), հավելված (էջ 140-148) ամփոփումներ՝ անգլերեն և ռուսերեն (էջ 149-150), գրականության ցանկ (151-154):

Միանգամայն դրվատելի է նման աշխատության լույսընծայումը: Այն կարող է առաջ բերել գիտական նոր հետաքրքրություն արդի գրական հայերէնի արևմտահայ տարրերակի վերաբերյալ, մասնավանդ որ այն գրված է այդ տարրերակի կրող հեղինակի ձեռքով: Աշխատությունն ունի «Քերականության պատմություն (յետայտընեանական շրջան)» վերնագիր, նրանում պատմական (եղած քերականական աշխատությունների և դասագրքերի) հենքի վրա համաժամանակյա կտրվածքով քննվում են լեզվակի ծևաբանական միավորներից երկուա՛ գոյական և բայի համակարգերը. մեծ ուշադրությամբ կարդալու դեպքում կարող ենք նկատել քննության մեջ տեղ գտած պատմական անցումները:

Հաջողված աշխատանք է, և ինստիտուտի նման նախաձեռնությունը՝ միանգամայն տեղին և հարկավոր:

3. Չոլաքեան. Արևմտահայերէնի կանոնարկման հարցեր (Չթեքուող խօսքի մասեր), Ե., «Գիտութիւն» հրատ., 2018, 136 էջ:

Այս աշխատությունը ևս լոյս է տեսել ԳԱԱ լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշումով: Գիրքը գրված է արդի գրական հայերէնի արևմտահայ տարրերակով: Այն ունի երկու բաժն՝ նվիրված չթեքվող խօսքի մասերին (էջ 5-40) և լեզվի կանոնարկման հարցերին (41-128), ունի համառոտագրությունների և օգտագործված գրականության (ընդ սմին՝ բառարանների) ցանկեր (էջ 129-133), ինչպես նաև ռուսերեն և

անգլերեն ամփոփումներ, որ նորություն են նման աշխատանքների դեպքում:

Բավականին հարկավոր գիրք է, որ գրական լեզվի երկու տարբերակների (ժամանակի ընթացքում) միասնականացմանը կարող է նպաստել յուղովի: Նրանում հարցերը քննված են ավանդական լեզվաբանական մոտեցումով՝ նկարագրությամբ և օրինակներով փաստարկմամբ: Որոշ հարցեր, կարծում ենք, խնդրահարույց են, թերևս հեղինակի պատկերացումներով պայմանավորված:

Աշխատության ոչ մեծ ծավալը և ընդգրկված հարցերի լայն շրջանակը թողնում են այն տպավորությունը, որ քննության առնվոր հարցերը հաճախ ներկայացվում են ակնարկային վերլուծությամբ, որն այդպես էլ կարելի է համարել բավարար, քանի որ գիրքը, ինչպես նշվում է ամփոփագրում, նախատեսված է նաև «հայերենի տարրական քերականությանը ծանոթ բոլոր հետաքրքրվողների համար» (Էջ 2):

Ծնորհակալ պետք է լինել հեղինակին՝ նման աշխատանքի համար:

3. Չոլաքեան, Արեմտահայերէնի քերականութիւն (Կանոնակարգ եւ խնդիրներ), Բ գիրք, Ե., «Ասողիկ» հրատ., 2019, 152 էջ:

Գրական արևմտահայերենի հմուտ <. Չոլաքյանի սույն աշխատությունը այդ վերնագրով երկրորդ գիրքն է, որ շարունակությունն է հեղինակի «Արեմտահայերէնի քերականութիւն (Կանոնակարգ եւ խնդիրներ)» առաջին գրքի (Երևան, «Ասողիկ» հրատ., 2017): Երկրորդ գիրքը ներկայացնում է գրական հայերենի արևմտահայ տարբերակի բայի, մակրայի, կապի, շաղկապի, վերաբերականի և ծայնարկության սեղմ վերլուծությունը: Ինչպես նկատում ենք, ընդգրկումը բավականին լայն է, իսկ վերլուծությունը՝ հակիրճ և նպատակային:

Այն ևս, ինչպես հեղինակն է նշում, նախատեսված է լեզվաբանների և հայերենի տարրական քերականության ծանոթ բոլոր հետաքրքրվողների համար:

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ. ԽԱՍՏԱՅ ԺԻԶՆԵ.

SCIENCE NEWS

Ս. թ. մայիսի 15-16-ին «ՀԱԱՀ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ «Զահորականական ընթերցումներ» հանրապետական հերթական գիտական նստաշրջանը:

Այս անգամ ևս նստաշրջանին մասնակցում էին ինչպես ինստիտուտի, այնպես էլ մեր հանրապետության գիտական և ուսումնական տարբեր հաստատությունների մասնագետներ, որոնց թիվն անցնում էր երկու տասնյակից:

Լիազումար նիստից բացի, որն անցավ բուռն քննարկումների պայմաններում, տեղի ունեցավ ևս երեք նիստ, ընդ որում երկուական բաժանմունքով։ Նախ նկատենք, որ նստաշրջանի թեմատիկան բավականին լայն էր, ընդգրկում էր լեզվի պատմության, ժամանակակից հայերենի, ընդհանուր և համեմատական լեզվաբանության, համակարգչային և կիրառական լեզվաբանություն, լեզվի ուսուցման և մեթոդիկայի հարցեր։

ա) Լեզվի պատմության թեմատիկայում զեկուցումների թվարկումն իսկ ճիշտ պատկերացում է տալիս. ուշագրավ զեկուցումներով հանդես եկան Լ.

Հովհաննիսյանը («Միջին հայերենի բուսանունների առանձնահատկությունները»), Ս. Գրիգորյանը («Հականիշ բառերի ոճական կիրառությունները Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզության Ձմերան հատոր»-ում), Ս. Գրիգորյանը և Ն. Պարոնյանը («Նորակազմությունները Մովսես Սյունեցու ճառերում»), Լ. Պետրոսյանը «Գրի-գոր Նարեկացու լեզվի բայական նորաբանությունների կապակցելիության առանձնահատկությունները «Մատյան ողբերգության» երկում»):

Ոչ պակաս հետաքրքրությամբ լսվեցին նաև Հ. Թադևոսյանի («Գորիսի «Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց» բժշկարանի լեզվական առանձնահատկությունների մասին»), Հ. Թորոսյանի («Հայերենի և պարսկերենի անձնանիշ բայական դարձվածքների կառուցատիպերը»), Ա. Խաչատրյանի («Համադրական և վերլուծական բարդությունների կաղապարատիպերը Բարսեղ Կեսարացու «Գիրք պահոց» երկի գրաբար բնագրում»), Վ. Խաչատրյանի («Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսարանի ձեռագրերի հիշատակարանների բառապաշտը»):

Հիշյալ գեկուցումներում արձարձիում են հայոց լեզվի պատության դեռևս ամբողջական և գոհացուցիչ լուծում չստացած հարցեր, որոնց այս կամ այն չափով լուծումը կարևոր է ներկայիս հայերենագիտության զարգացման համար:

թ)Ժամանակակից հայերենի տարբեր հարցերի շուրջ գեկուցումներով հանդես եկան Ն. Հովհաննիսյանը («Արդի հայերենում իմաստափոխված միքանի բառի մասին»), Ռ. Դոխյանը («Հականշության դրսուրումները արդի հայերենի խոսքային գործունեության իմաստային ենթադաշտում»), Ս. Ղուկասյանը («Հնչու-որ հարցումները Յովհաննէսի արևելահայերեն և արևմտահայերեն Ավետարաններում»), Լ. Ղամոյանը (««Հագուստ» իմաստային դաշտի արևելահայերենարևմտահայերեն զուգադրական քննության փորձ»), Վ. Ներսիսյանը («Կիսել և կիսվել բայերի իմաստային դրսուրումները հայերենում»):

Այս նիստի գեկուցումներից մի քանիսի շուրջ ծավալվեց հետաքրքիր բանավեճ, որ ինքնին հետաքրքիր է:

գ) Բավականին լայն ընդգրկում ունեին ժամանակակից հայերենի գրական նորմային և կառուցվածքին վերաբերող գեկուցումները, որոնք հաճախ

ունենում էին ընդհանուր լեզվաբանական բնույթ. Այսպիսին, Էր օրինակ, Դ. Գյուլզատյանի գեկուցումը՝ «Արդի գրական հայերենի կառուցվածքային տիպը» թեմայով:

դ) Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն թեմատիկայի շրջանակներում երկու գեկուցումով հանդես եկավ Վ. Գ. Համբարձումյանը, մեկը նվիրված Վահագն դիցանվան առասպելական և լեզվական ուսումնասիրության հիմքերի վերանայման հարցին, իսկ մյուսում ստուգաբանական-տիպաբանական վերլուծությամբ ներկայացվեց հայ. մարգարիտ բառի ծագումը, գրավոր շրջանի հայերենին է անցել նախագրային հայերենից:

Ինչպես միշտ, ուշագրավ գեկուցումով հանդես եկավ Լ. Հովհաննիսյանը՝ «Բառաքննություն» թեմայով, որ անդրադարձավ ամենից առաջ իսոլորձ բառի ծագմանը: Ն. Սիմոնյանը ներկայացրեց շատ կարևոր գեկուցում՝ «Ստուգաբանական դիտարկումներ» թեմայով, կարևոր այն իմաստով, որ հայերենի բառապարի շատ միավորներ դեռևս մնում են չստուգաբանված, համարվում են «ծագումն անհայտ»: Հետաքրքիր էր նաև Տ. Դալալյանի գեկուցումը՝ «Երկաթ բառի ստուգաբանությունը» վերնագրով:

Հ. Զաքարյանի գեկուցման «Ճ սկզբնահնչյունով մի քանի բառերի ստուգաբանություն», Ի. Ավագյանինը՝ «Սարդուրյան տարեգործունը Էրիախի երկրի մասին», Հ. Հմայակյանինը՝ Սօսի բուսանվան ստուգաբանության փորձ»:

Յուրօրինակ գեկուցումներով հանդես եկան Ս. Ավետյանը («Նշոյթավորվածության և կիրառահաճախականության փոխհարաբերության ըմբռնումը արդի լեզվաբանության մեջ»), Կ. Միքայելյանը («Ժամանակակից լեզվաբանության միջզիտակարգերի զարգացման խնդրի շուրջ»):

Ե) Բարբառագիտության հարցերը նոյնպես դարձան լայն քննարկման առարկա: Այս իմաստով հատկանշական է Վ. Կատվալյանի գեկուցումը՝ «Սեբաստիայի բարբառի խուռնավովի խոսվածքը» թեմայով, մի խոսվածք, որ մինչև այժմ չի եղել առանձին քննության առարկա: Նոյնպիսի կարևորություն ունի նաև Ա. Վարդանյանի գեկուցումը՝ «Մի շարք անձնանունների բարբառային ծևերի ստուգաբանությունը» թեմայով:

Եղան բարբառների վերաբերյալ նաև այլ կարևոր գեկուցումներ՝ հիմնականում փաստական նյութի վերլուծության առումով: Իրենց գեկուցումներում ուշագրավ հարցեր ներկայացրին

Մ. Քումունցը («Որոշ հասկացությունների հիմանական բառահմաստաբանական միջոցները Սյունիք-Արցախ բարբառային տարածքում»), Հ. Խաչատրյանը («Հինհայերենյան բառաշերտի որոշ իրողությունների արտացոլումը Համշենի բարբառում»), Զ. Բառնասյանը («Հ. Թումանյանի «Սուտասանը» հեքիաթի գրառումները հայերենի տարբեր բարբառներով (լեզվամտածողության առանձնահատկությունների քննություն»)):

զ) Համակարգչային և կիրառական լեզվաբանություն թեմատիկայի վերաբերյալ գեկուցումներ ներկայացրին Լ. Հովսեփյանը («Գրաբարի բայական հարացույցի անդամների ծևաբանական և բառակազմական կառուցվածքը»), Ֆ. Հակոբյանը («Էլեկտրոնային թարգմանության խնդիրներ»), Գ. Գրիգորյանը («Խոսակցական լեզվում իրամայական եղանակի իր վերջավորության դիմական պատճառներից»):

Նստաշրջանում ուշագրավ գեկուցում եղավ բուհական ուսուցման խնդիրների առնչությամբ. Վ. Կատվալյանը, Հ. Սութիասյանը, Հ. Զաքարյանը ներկայացրին «Բուհերում մասնագիտական հայերենի ուսուցման խնդիրների շուրջ» թեմայով

իրենց ուսումնասիրության արդյունքները:

* * *

Նկատենք ինստիտուտի գիտական կյանքին վերաբերող մի կարևոր փաստ ևս. <Աճառյանի անվան լեզվի ինստիտուտին կից ստեղծվել է Լեզվի երիտասարդ պաշտպանների խորհուրդ: Խորհուրդը ղեկավարում է ինստիտուտի գիտաշխատող, բ. գ. թ. Մ. Սարգսյանը:

Խորհրդի կազմում ընդգրկվել են ինստիտուտի երիտասարդ լեզվաբանները, ասպիրանտներն ու մագիստրանտները, ինչպես նաև կամավորներ՝ գիտակրթական տարբեր հաստատություններից:

Խորհրդի նպատակն է ոչ միայն միավորել լեզվի երիտասարդ պաշտպաններին, նրա հրատապ հարցերի լուծման նախաձեռնողներին, այլև ստեղծել միջավայր («հարթակ»)՝ համատեղ աշխատանքի արդյունավետ կազմակերպման համար: Առաջին միջոցառումը կրում էր հետևյալ խորագիրը՝ «Մաքրե՞նք քաղաքը լեզվական սխալներից»:

Միջոցառման աշխատանքներին մասնակցելու համար ընտրվել էին կամավորներ (ամենից առաջ՝ ուսանողներ): Այս նախաձեռնության շրջանակներում

կամավորներն առանձնացրել և գրառել էին քաղաքում տարածված լեզվական սխալները, այնուհետև խորհրդի անդամների հետ ներկայացրել դրանց ճիշտ և ընդունելի տարբերակները զանազան եղանակներով՝ ուղեցույցի, տեսանյութերի, գիֆերի, անհմացիաների և այլն, խորհրդի ֆեյսբուքյան էջում հրապարակել դրանք:

Լեզվի երիտասարդ պաշտպանները նոր բառեր սովորեցնելու, բառերի աշխարհում ճիշտ կողմնորոշվելու հետաքրքիր տարբերակներ են մտածել. Պարբերաբար ներկայացնում են դրանք՝ օրվա բառ, նման, բայց դարբեր խորագրերով բաժիններում: Պետք է նշել, որ հատկապես այս բաժինները մեծ հետաքրքրություն են ներկայացնում, կարճ ժամանակում լայն տարածում են գտել և արժանացել էջի հետևորդների համակրանքին:

Կամավորները և խորհրդի անդամներն առաջին նախաձեռնության ընթացքում անդրադարձել են համացանցում և էլեկտրոնային մամուլում հանդիպող լեզվական սխալներին, քաղաքային միջավայրում հանդիպող լեզվական սխալներին, հատկապես ցուցանակներին, գովազդային վահանակներին:

Առանձնացրել և խմբավորել են դրանք, ներկայացրել հետաքրքրաշարժ եղանակներով:

Խորիրդի անդամները որդեգրել են մի սկզբունք. առանց քերականական լուրջ կանոնների՝ սովորեցնել, տարածել, խրախուսել լեզվական ճիշտ և հանձնարարելի տարրերակները: Միջոցառման ավարտին մասնակիցները ստացան հավաստագրեր:

* * *

*

Անցյալ տարվա նոյեմբերի 10-11-ին Հայ առաքելական Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի հայագիտության կենտրոնը կազմակերպել էր միջազգային կոնֆերանս «Հայ մշակույթի V դարը. Զեռքբորումներ, համաշխարհային նշանակություն» թեմայով, որին մասնակցում էին տարրեր Երկրների, ամենից առաջ Հայաստանի հասարակական գիտությունների մի խումբ ճանաչված մասնագետներ՝ պատմաբաններ, արվեստաբաններ, ճենագրագետներ, գրականագետներ, լեզվաբաններ:

Հատկանշական էր լեզվաբանների մասնակցությունը հայերենագիտական այդ համաժողովին. մեկ տասնյակից ավելի երիտասարդ և միջին սերնդի

մասնագետներ հանդես եկան հայերենի պատմության, բարբառագիտության, աղբյուրագիտության, համեմատական լեզվաբանության բնագավառներին վերաբերող խնդրահարուց թեմաներով:

Չեկուցումները կայացան լիազումար նիստում, բաժանմունքների և եզրափակիչ միացյալ նիստերում, ամեն անգամ հարցերի լայն քննարկումների ծավալումով: Առաջմ տպագրված են զեկուցումների դրույթները («Международная научная конференция. Тезисы», 10-12 ноября 2018 г., Москва, 35 с.):

Այդ զեկուցումները ևս ցույց են տալիս, որ լեզվաբանների միջին սերունդը հանդես է բերում կոնկրետ հետաքրքրություն հայերեն գրավոր աղբյուրների առանձին, մանրամասն քննության մեջ: Ըստ այդմ՝ լեզվի պատմության հարցերի վերաբերյալ նախկինում եղած ընդհանուր գնահատությանը լրացնելու կամ ճշգրտելու է գալիս այդ սերնդի առավել փաստացի և քննական վերլուծությունը, որը միանգամայն գնահատելի է:

Հայ բարբառների հնագույն երևույթներին անդրադարձավ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի տնօրեն, բ. գ. դ. Վ. Կատվալյանը («Մաշտոցյան ուղղագրության մի

քանի առանձնահատկությունների արտացոլումը արդի հայ բարբառների հնչյունական համակարգերում»), կրոնական բառապաշտիքի՝ ինստիտուտի առաջատար գիտաշխատող բ. գ. դ. Հ. Մեսրոպյանը («Քրիստոնեական կրոնի ազդեցությունը հայերենի բառապաշտիքի վրա»):

Լեզվի պատմության տարբեր հարցերի վերաբերյալ ուշագրավ գեկուցումներով հանդես եկան Երևանի պետական համալսարանի դոց., բ. գ. թ. Ն. Դիլբարյանը («Հունաբան դպրոցի լեզվի բառապաշտիքի առանձնահատկությունները Գրիգոր Նյուսացու «Յաղագս կազմութեան մարդոյ» գրաբար թարգմանության օրինակով»), դոց., բ. գ. թ. Ա. Խաչատրյանը («Բարսեղ Կեսարացու «Յաղագս պահոց» երկի գրաբար թարգմանության բառակազմական և իմաստաբանական առանձնահատկությունները»), լեզվի ինստիտուտի հայոց լեզվի պատմության բաժնի վարիչ, բ. գ. թ. Գ. Միհրարյանը («Հին երաժշտական գործիքների անվանումները Աստվածաշնչի թարգմանության մեջ»), ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ. գ. թ. Ս. Գրիգորյանը («Աստվածաշնչի չորս տարրերի ուսմունքի արտացոլումը երաժշտական գործիքների վերաբերյալ պատկերացումների վրա») և Լեյլենի (Նիուելանդներ) համալսարանի գիտաշխատակից, բ. գ. թ. Հ. Մարտիրոսյանի («Հոմանիշները V դ. Գրական

մեկնության առանձնահատկությունները Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ում»):

Գիտաժողովին հեռակա մասնակցություն են ունեցել լեզվի ինստիտուտի փոխտնօրեն, բ. գ. թ. Ն. Հովհաննիսյանը («Բառաքննական դիտարկումներ. ձեռագիր բառարանների նյութի հիման վրա»), ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բ. գ. դ., պրոֆ. Ս Զոյանը («Վ դ. շարականների իմաստաբանական կառուցվածքը. Մ. Մաշտոց և Սահակ Պարթև») (ընդգրկված «Ձեկուցումների դրախներ»-ում):

Կոնֆերանսի գեկուցումներից մի քանիսը վերաբերում էին հայերենի համեմատական ուսումնասիրությանը, իին գրական հուշարձանների բնագրի ինքնությանը: Մեծ հետաքրքրություն առաջ բերեցին ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատակից, բ. գ. թ. Տ. Դալայյանի («Աշխարհի չորս տարրերի ուսմունքի արտացոլումը երաժշտական գործիքների վերաբերյալ պատկերացումների վրա») և Լեյլենի (Նիուելանդներ) համալսարանի գիտաշխատակից, բ. գ. թ. Հ. Մարտիրոսյանի («Հոմանիշները V դ. Գրական

հուշարձաններում և այլ աղբյուրներում») գեկուցումները: Լեզվի ինստիտուտի բաժնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Վ. Համբարձումյանի գեկուցումը («Ս. Գրիգոր Լուսավորչի «Յաճախապատում ճառք» Երկի լեզուն. բնագի՞ր, թե՛ թարգմանություն (մի քանի հիմնավորում. Abstrac-tum pro concreto շարահյուսական կառույցի գործածությունը)» վերաբերում էր Երկի՝ ոչ թե ուրիշ հեղինակի պատկանող ինքնուրույն աշխատանք, այլ Վ դ.

Երկրորդ կեսին կատարված թարգմանություն լինելու հարցին:

Հավագույնս կազմակերպված նստաշրջանն ունեցավ ոչ միայն գիտական, այլև ճանաչողական նշանակություն՝ Հայ առաքելական Եկեղեցու և հայ հոգևոր մշակույթի նոր ձեռնարկումների և իրականացումների առումով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆԴԵՍԻ 20-ՐԴ ՀԱՄԱՐԻ ԱՌԹԻՎ

Դ.Մ.Մարդիրոսյան, Խոսք շնորհավորանքի	3
Յու.Մ.Սուվարյան, Լեզվաբանական հաջողված պարբերական	4
Վ.Լ.Կարվալյան Արդի հայերենագիրովյան ինքնօրինակ հանդես	5
Ա.Կ.Բարլեզիզյան Խոսք գնահատանքի և քաջալերության	6

ԱՆԴՐԱԴՐԱ

Վ.Գ.Համբարձումյան. Ուրվագիծ Հանդեսի անցած ճամանապարհի	7
---	---

ՀՈՂՎԱԾՆԵՐ

Լ.Գ.Թելյան, Դիտարկումներ արդի հայերենի լեզվական նորմի վերաբերյալ	
շարահյուսական նորմ	9
Ա.Վ.Գալստյան, Երկխոսության դրսևորումները գեղարվեստական վավերագրության լեզվում	16
Ա.Հ.Արաջյան, Մանուկ Արեյյանը բառարանագիր	22
Ա.Լ.Ցոլքաշյան, Աղոթքի բանաձևումները Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկում	31

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ս.Ռ.Ավետյան, Նշույթավորվածության և կիրառահաճախականության փոխհարաբերության ըմբռնումը արդի լեզվաբանության մեջ	38
Լ.Ա.Ղամոյյան, «Ոտնաման» հասկացությունը արդի գրական հայերենում և բարբառներում	49

ՀԱՐՈՐԴՈՒՄՆԵՐ

Գ.Մ.Գրիգորյան, «Արմաթ» ինժեներական լաբորատորիաները որպես հայկական գիտակրթական ապրանքանիշ և հարողակցության նոր հարթակ	57
Մ.Ս.Քումոնց, Բառաքննական-ստուգաբանական մի դիտարկում. գերմաստ-գիլիմաստրի-գետնախնձոր	65
Մ.Ռ.Բաղայյան, Անձի հատկանիշ արտահայտող ածականական դարձվածքների կառուցվածքային տիպերը և քերականական առանձնահատկությունները հայերենում, ռուսերենում և անգլերենում	72

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Գ.Մ.Միխարյան, Լ.Շ.Հովհաննիսյան, Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն. (III մաս) Խաղողագործություն-գինեգործություն,	
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2018, 67 էջ	84

ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

Կ.Լ.Առաքելյան, Երախտաշատ լեզվաբան-հայագետը	87
ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ	90
ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ	92

СОДЕРЖАНИЕ

О 20-ом номере журнала: Р. М. Мартиросян. Приветственное слово - З. Ю. М. Суварян. Состоявшийся лингвистический журнал - 4. В. Л. Катвалаян. Современный своеобразный арменоведческий журнал - 5. А. К. Барлезизян. Слова оценки и поощрения - 6. **Экскурс:** В. Г. Амбарцумян. Эскиз о пройденном пути журнала - 7. **Статьи:** Л. Г. Телян, Замечания о норме современного армянского языка: синтаксическая норма - 9: А. В. Галстян, Место диалога в языке армянской художественной мемуаристики - 16: А. Г. Абаджян, М. Абегян как лексикограф - 22: А. Л. Юзбашян, Молитвенные резолюции в "Книге скорбных песнопений" Г. Нарекаци - 31: **Дискуссии и обсуждения:** С. Р. Аветян. Понимание соотношения между маркированностью и частотностью употребления в современной лингвистике - 38: Л. А. Гамоян - Понятие «обувь» в современном литературном армянском языке и диалектах - 45: **Сообщения:** Г. М. Григорян, Инженерные лаборатории АРМАТ как армянский научно-образовательный бренд и новая платформа коммуникации - 57: М. С. Кумунц, Гермаст-гилимастри-земляное яблоко (Семантика и этимология) - 65: М. Р. Бададян, Структурные типы адъективных фразеологизмов характеризующих качества человека в армянском, русском и английском языках - 72: **Рецензия:** Г. М. Мхитарян, Л. Ш. Аванесян, Исследование семантических групп лексики грабара: (Часть III) Виноградство, виноделие, Изд. НАН РА «Гитутюн», Ереван, 2018, 67 с.-84. **Знаменательные даты:- 87. Книжное обозрение:- 90. Научная жизнь:- 92.**

CONTENTS

On the 20th Anniversary of the Journal: R. M. Martirosyan, *Congratulatory message* - 3. Yu. M. Suvaryan. A Successful linguistic periodical-4. V. L. Katvalyan. *A distinctive journal on Armenian Studies* - 5. A. K. Barlezizyan. *Appreciation and Encouragement missive*-6: **Reminiscence** V.G. Hambardzumyan, *An outline of Journal's trajectory*-7. **Articles:** L. G. Thelyan. Observations on the norm of the modern Armenian language: syntactic norm - 9: A. V. Galstyan, Manifestations of Dialogue in the Language of Artistic Documentary - 16: A. H. Abajyan, M. Abegyan as lexicographer - 22: A. L. Yuzbashyan, Resolutions of prayer From the creation “The book of Lamentations” by G. Narekatsi.-31. **Discussions:** S. R. Avetyan, The Understanding of the Relationship Between Markedness and Frequency of Use in Modern Linguistics: L.A. Gamoyan – 38 The concept of "shoe" in contemporary literary Armenian language and dialects: **Reports:** G. M. Grigoryan, Armath engineering laboratories as an armenian scientific -educational brand and a new communication platform- 45: M. S. Kumunts, Germast-gilimastri-topinambour (Word test and etymology)- 65: M. R. Badaadyan, Structural Types of attributive phraseological Units Characterizing the Qualities of the person in the Armenian, Russian and English Languages - 72: **Reviews:** G. M. Mkhitaryan.- L.Sh. Hovhannisyan, The study of semantic groups of the vocabulary of the grabar: (Part III) Viticulture, winemaking, Ed. NAS RA «Gitutyun», Yerevan, 2018, 67 p.-84. **Memorable Dates:- 87. Book reviews: - 90. Science News: - 92.**

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճայանի անվան լեզվի ինստիտուտը վերստին հրատարակում է «Լեզու և լեզվաբանություն» հանդեսը, որի առաջին համարը լույս է տեսել 2003 թ.:

Հոդվածները պետք է ուղարկել տպված և համակարգչային տեսքով (դիսկետով կամ կրիչով), 8-10 էջի սահմաններում, տողերի միջակայքը՝ 1.5, տառաչափը՝ 11 և GHEA Grapalat տառատեսակղու (ամփոփումները ոռակերեն և անգլերեն՝ GHEA Grapalat): Վերևում նշվում է հեղինակի անունը, ազգանունը, հաստատության անվանումը, հոդվածի վերնագիրը:

Հղումները և գրականության ցանկը պետք է համապատասխանեն:

Խնդրում ենք գրախոսական հոդվածներն ուղարկել գրախոսվող գրքի հետ:

Մեր հասցեն՝ ԳԱԱ Հ. Աճայանի անվան լեզվի ինստիտուտ

ՀՀ, 3750015, Երևան, Լուսավորչի 15

Հեռ.՝ (+374 10) 565 337

Կայքը՝ www.language.sci.am

Էլ.փոստ՝ inslang@sci.am

Հանդեսի պատասխանառու քարտուղար՝ meri-sargsyan@mail.ru

Կ Ծ Ե Դ Ե Ն Ի Յ Ո

НАН РА институт языка имени Р. Ачаряна заново издает журнал “Язык и языкоznание”, первый номер которого был издан в 2003г.

Статьи следует присыпать виде распечатки и компьютерного набора (на дискете), объем- в пределах 8-10 машинописных страниц, интервал- 1,5, размер шрифта - 12, шрифт- Sylfaen (резюме на русском и английском- TimesNewRoman). В начале указываются имя, фамилия, наименование учреждения, заглавие статьи.

Ссылки и список литературы должны соответствовать друг другу.

Просим статьи с отзывом или рецензией присыпать с рецензируемой книгой.

Наш адрес: НАН институт языка имени Р. Ачаряна

РА, Ереван, Лусаворича 15

Тел.: (+374 10) 565 337

Веб. сайт: www.language.sci.am

Эл.-почта: inslang@sci.am

Ответственный секретарь: meri-sargsyan@mail.ru

ACKNOWLEDGEMENT

NAS RA language institute named after H. Acharyan is publishing afresh «Language and linguistics» magazine, the first number of which was published in 2003.

Please, send articles in hard and soft (on diskette) copies, within 8-10 pages, line spacing- 1,5, font size- 12, fonts- Sylfaen (the summary in Russian and English - Times New Roman). Author's name, institution and contact data should be placed in the upper right corner of the title page.

References or footnotes should be adequate to the list of bibliography.

Please, send reviews with the corresponding book.

Our address: NAS language institute named after H. Acharyan

RA, Yeravan, Lusavorich 15

Phone: (+374 10) 565 337

Web page: www.language.sci.am

E-mail: inslang@sci.am

Editorial secretary: meri-sargsyan@mail.ru

ԼԵԶՈՒ
ԵՎ
ԼԵԶԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ



ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ
LANGUAGE AND LINGUISTICS

1 (20)
2019



Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» իրատարակչության տպարանում:
Ֆորմատ 60x84 1/16, թուղթ՝ օֆսեթ, Տպաքանակ՝ 150
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am